



## Հիմնադիր և հրատարակիչ՝

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅՈՒՆ

# ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

## № 98 2017

ՀՀ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Տպագրվում է 1997 թվականից, ՀՀ գլխավոր դափախագ Հենրիկ Խաչատրյանի նախաձեռնությամբ

### ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

**Դավիթ Մելքոնյան** Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ղեկավար (խորհրդի նախագահ)

**Աշոտ Եսայան** Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի օգնական, Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի դասախոս, դոցենտ (գլխավոր խմբագիր)

**Գևորգ Բաղդասարյան** Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու

**Միեր Հակոբյան** Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու

**Գևորգ Դանիելյան** Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի խորհրդական, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական ամբիոնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

**Վահրամ Շահինյան** Հայաստանի Հանրապետության ատուկ քննչական ծառայության պետ, իրավ. գիտ. թեկնածու (համաձայնությամբ)

**Հովհաննես Սրեփանյան** Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

**Գառնիկ Սաֆարյան** Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

**Արման Թաթոյան** Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ղեկավար (համաձայնությամբ)

**Ռուբեն Մելիքյան** Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ղեկավար

### Գլխավոր խմբագիր՝ Ա. ԵՍԱՅԱՆ

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից ընդգրկված է թեկնածուական (1999թ.) և դոկտորական (2002թ.)ատենախոսությունների հիմնադրոյթների հրապարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

Խմբագրության հասցեն.  
0010 ք. Երևան, Վ. Սարգսյան 5  
Հեռախոս՝ 511-589, ֆաքս՝ 585-152  
Էլ. հասցե՝ orinakanutyun@prosecutor.am  
www.prosecutor.am  
ISSN 1829-4219

© Համակարգչային շարվածքը, ոճը, տառաձևերը և էջադրումը՝ «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

Հանձնված է արտադրության՝ 18.04.2017թ.  
Ֆորմատ՝ 60x84 1/8  
Տպաքանակը՝ 500  
Ծավալը՝ 4,25 պայմ. մամուլ  
Գրանցման վկայական՝ N 688

Տպագրված է «Աստղիկ Գրատուն» հրատարակչության տպարանում Երևան, Գ. Քոչարի 21

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», 2017թ.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՆՇԱՆԱԿՈՒՄ

ՀՀ Նախագահի հրամանագիրը ՀՀ զինվորական դատախազ Վ. Հարությունյանի ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ նշանակելու մասին ..... 3

## ԱՇԽԱՏԱՆ-ՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական խմբի անդամներին ..... 3  
 ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը հանդիպել է ԵՊՀ ուսանողների հետ ..... 4  
 Քննարկում ՀՀ գլխավոր դատախազությունում ..... 5  
 Ընդունելություն ՀՀ գլխավոր դատախազությունում ..... 5  
 ՀՀ դատախազության ընդլայնված կոլեգիայի նիստում ամփոփվել են ՀՀ դատախազության 2016 թվականի աշխատանքները ..... 6

## ԱՇԽԱՏԱՆ-ՔԱՅԻՆ ԱՅՅԵՐ

Ամփոփվել է ՀՀ զինվորական դատախազության 2016թ. աշխատանքը ..... 8  
 Ամփոփվել է Երևան քաղաքի դատախազության 2016թ. աշխատանքը ..... 9

## ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

**Ջոն Հայրապետյան, Ներսես Զեյնալյան** Քրեական գործի ոստիկանական քննության առանձնահատկությունները ..... 11  
**Ալիսա Սմբատյան** Անչափահասների մասնակցությամբ քննչական գործողությունների իրականացման հիմնախնդիրները ՀՀ քրեական դատավարությունում ..... 16

## ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

**Սերժ Ռուշանյան** Հանցագործությունից կամովին հրաժարումը՝ ավարտված հանցափորձի դեպքում ..... 20

## ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

**Բագրատ Ղազինյան** Փոխվարչապետի ինստիտուտը Հայաստանի Հանրապետությունում ..... 26  
**Հայկ Կետոյան** Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ապահովումը խորհրդարանական կառավարման ձև ունեցող պետություններում ..... 30  
**Լուսինե Վարդանյան, Հովսեփ Քոչարյան** Եվգենիկայի կարգավորման որոշ հիմնախնդիրներ ՀՀ օրենսդրությունում ..... 37  
**Վարսեր Կարապետյան** Մարդու իրավունքների իրավական կարգավորման հիմնախնդիրներն Իսրայելի սահմանադրաիրավական զարգացումների համատեքստում ..... 40

## ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

**Արմեն Հարությունյան** Կատարողական և վարչական վարույթների շրջանակներում կայացվող ակտերի (որոշումների)՝ օրենսդրությամբ սահմանված առանձնահատկությունները ..... 47

## ՍԵՂՄԱԳՐԵՐ

Սեղմագրեր / Абстракты / Abstracts ..... 57

## ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսում տպագրվող հոդվածներին ներկայացվող պահանջները ..... 68



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ  
Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԴԱՏԱԽԱԶ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով 2005 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55-րդ հոդվածի 9-րդ կետով և հիմք ընդունելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասը՝ ո թ ո շ ու մ ե մ.

Վահե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ նշանակել Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազ, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Ս.ՍԱՐԳՍՅԱՆ

2017թ. մարտի 23  
Երևան  
ՆՀ-302-Ա

**ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԵԱՀԿ/ԺՆՄԻԳ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ  
ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ**

ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանն ընդունել է ապրիլի 2-ին խորհրդարանական ընտրությունների ընթացքում դիտորդական ա-



ռաքելություն իրականացնելու նպատակով Հայաստան ժամանած ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ պատվիրակության անդամներ, առաքելության ղեկավարի

տեղակալ Դոնալդ Բիսոնին և իրավական վերլուծաբան Քսենիա Դաշուտինային:

Հանդիպմանը քննարկվել են ապրիլի 2-ին կայանալիք խորհրդարանական ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում հնարավոր ընտրական իրավախախտումների վերաբերյալ մամուլի և զանգվածային լրատվության միջոցների հրապարակումները, քաղաքացիների հաղորդումներն ուսումնասիրելու նպատակով ՀՀ գլխավոր դատախազությունում ստեղծված աշխատանքային խմբի գործառույթները, նույն դեպքերով հետաքննություն և նախաքննություն իրականացնող մարմինների գործունեության նկատմամբ դատախազական հսկողության իրականացմանն առնչվող հարցեր:

ՀՀ գլխավոր դատախազը կարևորել է խորհրդարանական ընտրություններին դիտորդական առաքելություն իրականացնող ինչպես

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ, № 98 2017

միջազգային, այնպես էլ տեղական կազմակերպությունների, լրատվամիջոցների, քաղաքացիա-



կան հասարակության ակտիվ և արդյունավետ աշխատանքն իրավապահ մարմինների հետ:

Արթուր Դավթյանը նշել է, որ էլեկտրոնային քվեարկության համակարգի ներդրումը,

ընտրատեղամասերում տեսանկարահանող սարքերի տեղադրումն ու նոր Ընտրական օրենսգրքով նախատեսված այլ կարգավորումները հնարավորություն են ստեղծում բարձր որակի ընտրական գործընթաց կազմակերպելու համար, ապահովում են թափանցիկությունն ու նպաստում ընտրական գործընթացների նկատմամբ հանրության վստահության բարձրացմանը:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության ղեկավարի տեղակալ Դոնալդ Բիսոնը բարձր է գնահատել դիտորդական առաքելությունների, հասարակական կազմակերպությունների, լրատվամիջոցների և քաղաքացիական հասարակության հետ աշխատելու՝ ՀՀ դատախազության պատրաստակամությունը՝ ընդգծելով, որ դա կնպաստի ազատ, արդար և թափանցիկ ընտրությունների անցկացմանը:

## ՀՀ Գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը Հանդիպել է ԵՊՀ Ուսանողների ՀեՏ

ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը մարտի 6-ին հանդիպել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի ուսանողների հետ:

Ողջունելով ուսանողներին՝ Արթուր Դավթյանը կարևորել է նրանց հետ նման ձևաչափով պարբերական հանդիպումները:



Արթուր Դավթյանը կարևորել է ուսանողների՝ տեսական գիտելիքները գործնական հմտություններով ամրապնդելու անհրաժեշտությունը՝ այդ նպատակով առաջարկելով կոնկրետ միջոցառումների իրականացում:

ՀՀ գլխավոր դատախազն ուսանողներին առաջարկել է ներկայացնել դատախազական համակարգին վերաբերող իրենց մտտեցումները և պատկերացումները, որոնք հաշվի կառնվեն բարեփոխումներ իրականացնելիս:

Գլխավոր դատախազն ուսանողների հետ հանդիպմանը ներկայացրել է դատախազական գործառնությունների իրականացման արդյունավետության բարձրացմանը նպաստող օրենսդրական, կազմակերպարարական մեխանիզմների զարգացման ընթացքը, հեռանկարները, մասնավորապես՝ հատուկ անդրադարձ կատարելով մինչդատական վարույթում դատախազի դերին՝ որպես հանրային և մասնավոր շահերի միաժամանակյա և համաչափ ապահովման երաշխավորի:

Գլխավոր դատախազը, անդրադառնալով «Դատախազության մասին օրենքի» նախագծի մշակմանը, ներկայացրել է օրենսդրական այդփոփոխության հիմքերը, անհրաժեշտությունը, նոր իրավակարգավորումների տրամաբանությունն ու սկզբունքները:

Հանդիպմանը գլխավոր դատախազը պատասխանել է նաև ուսանողների հարցերին, որոնք վերաբերել են դատախազների լիազորու-

թյուններին, օպերատիվ հետախուզական մարմինների նկատմամբ դատախազական հսկողությանը, քրեական հետապնդման ոլորտում իրավապահ մարմինների համագործակցությանը և դատաիրավական բարեփոխումներին:

Հանդիպման ավարտին գլխավոր դատախազն ապագա իրավաբաններին հորդորել է հետևողականորեն և ջանասիրաբար հարըստացնել տեսական գիտելիքների պաշարը,

հետևել երկրում ընթացող իրավական գործընթացներին, միջազգային-իրավական մոտեցումների զարգացմանը, ակտիվություն ցուցաբերել իրենց ներգրավվածությամբ կազմակերպող միջոցառումներին՝ երկրում դատաիրավական ոլորտի շարունակական բարելավմանը նպաստ բերելու և այդ ոլորտն ի շահ Հայաստանի Հանրապետության ծառայեցնելու համար:

## ՔՆՆԱՐԿՈՒՄ ՀՀ ՂԵՍԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Երևանում անցկացվող «Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ կատարված հանցագործությունների դեմ պայքարում իրավապահ մարմինների գործունեության նկատ-



մամբ իրականացվող դատախազական հսկողության փորձի փոխանակում» թեմայով սեմինարի շրջանակում ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դավիթ Մելքոնյանը ՀՀ գլխավոր դատախազությունում ընդունել է ՌԴ գլխավոր դատախազության ներկայացուցիչներին: Հանդիպմանը մասնակցել են նաև ՀՀ գլխավոր դատախազության, ՀՀ ազգային անվտանգու-

թյան մարմիններում քննվող, թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված և կիբեռնահանցագործությունների գործերով վարչության պետ Արմեն Փանոսյանը և ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության պետ Եղիազար Ավագյանը:

Հանդիպմանը ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ. Մելքոնյանը միջազգային կառույցների հետ փոխգործակցության շրջանակում կարևորել է հատկապես ՌԴ գլխավոր դատախազության հետ արդեն իսկ ձևավորված բարձր մակարդակի համագործակցությունը:

Երկու երկրի դատախազությունների ներկայացուցիչներն ընդգծել են նման ձևաչափով հանդիպումների կարևորությունը, նշել, որ դրանք կնպաստեն դատաիրավական ոլորտում համակարգերի առավել սերտ համագործակցությանը:

Անդրադառնալով երկու երկրի միջև համագործակցության համաձայնագրի կնքման կարևորությանը՝ Դ. Մելքոնյանը նշել է, որ ներկայումս ՀՀ և ՌԴ գլխավոր դատախազությունների կողմից մշակվում է 2018-2020թթ. համար նախանշված նոր համաձայնագրի նախագիծը:

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՀՀ ՂԵՍԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ, ՀՀ գլխավոր դատախազությունում ստեղծված աշխատանքային խմբի ղեկավար Հայկ Ասլանյանն ընդունել է ապրիլի 2-ի խորհրդարանական ընտրություններին դիտորդական առաքելություն իրականացնող ԱՊՀ խմբի ղեկավարի տեղակալ պարոն Եվգենի Սլոբոդային:

Հանդիպմանն անդրադարձ է կատարվել խորհրդարանական ընտրությունների կազմակերպման ու անցկացման խնդիրներին, ինչպես նաև Ընտրական օրենսգրքով ամրագրված փոփոխություններին:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հայկ Ասլանյանը, կարևորելով ԱՊՀ դիտորդների

կողմից իրականացվող դիտորդական առաքելությունների դերը, վստահեցրել է, որ դատախազությունն իր լիազորությունների շրջանակում կանխ ամեն ինչ, որպեսզի առաջիկա ընտրությունները անցկացվեն օրենքի շրջանակում և միջազգային նորմերին համապատասխան:

ԱՊՀ դիտորդական խմբի ղեկավարի տեղակալը ներկայացրել է իրենց դիտորդական առաքելության իրականացման ընթացքը, նշել, որ արդեն այցելել են Հայաստանի մի շարք մարզեր՝ տեղում ծանոթանալու բուն քվեարկության գործընթացին:

ԱՊՀ դիտորդը, կարևորելով մամուլի ազատությունը մեր երկրում, նշել է, որ նախնական

դիտարկումներով նախընտրական քարոզարշավն անցնում է օրենքի տառին համապատասխան:

Հանդիպմանը ներկա ՀՀ գլխավոր դատախազության ՀԿԳ վարչության պետի տեղակալ, աշխատանքային խմբի անդամ Սևակ Հովհաննիսյանը ներկայացրել է ընտրական իրավախախտումների վերաբերյալ մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների հրապարակումները, քաղաքացիների հաղորդումները և ՀՀ գլխավոր դատախազության թեժ գծով ստացված ահազանգերն ուսումնասիրելու նպատակով դատախազությունում ստեղծված աշխատանքային խմբի՝ մինչ այժմ իրականացրած աշխատանքները:

## ՀՀ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ ԸՆԴԱՅՆՎԱԾ ԿՈՒԵԳԻԱՅԻ ՆԻՍՏՈՒՄ ԱՄՓՈՓՎԵԼ ԵՆ ՀՀ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

ՀՀ գլխավոր դատախազությունում տեղի է ունեցել կոլեգիայի ընդլայնված նիստ, որը վարել է ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը:



Նիստի օրակարգում ՀՀ դատախազության 2016 թվականի աշխատանքի արդյունքների ամփոփումն էր: Նիստին մասնակցել են նաև ՀՀ ոստիկանության, ՀՀ ազգային անվտանգության ծառայության, հատուկ քննչական ծառայության, քննչական կոմիտեի, պետական եկամուտների կոմիտեի ներկայացուցիչները:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալները հանդես են եկել դատախազական գործառույթների առանձին բնագավառներում կատարված աշխատանքների վերաբերյալ զեկույցներով:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա Հարությունյանը ներկայացրել է հետաքննության և նախաքննության, պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինակականության նկատմամբ դատախազական հսկողության արդյունավետությունը բարձրացնելու, հանցավորության դեմ համակարգված և արդյունավետ պայքար կազմակերպելու, քննության որակը բարելավելու, հանցանք կատարած անձանց քրեական պատասխանատվության անխուսափելիությունն ապահովելու ուղղությամբ կատարված աշխատանքները:

Ներկայացվել են երկրում հանցավորության շարժընթացը բնութագրող ցուցանիշները, դրանք համադրվել նախորդ տարիների տվյալների հետ, կատարվել վերլուծություններ, որոնց արդյունքում առաջարկներ են ներկայացվել հանցագործությունների կանխարգելման, բացասական շարժընթացություն արձանագրած հանցատեսակներով քրեական քաղաքականության որոշակի ուղղություններում աշխատանքների արդյունավետության բարձրացման վերաբերյալ:

Արձանագրելով մինչդատական վարույթում առկա առանձին թերացումներ, բացթողումներ և խնդիրներ՝ դատավարության մասնակիցները

ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 98 2017

րի իրավունքների պատշաճ ապահովման, հանցագործությունների բացահայտման, մեղադրանքի ապացուցման աշխատանքներում, ներկայացվել են կոնկրետ միջոցառումներ, որոնք կապահովեն դրանց վերացումն ու կնպաստեն այդ աշխատանքների արդյունավետության բարձրացմանը՝ իրավական լուծումների միասնականությունը, որոշակիությունը երաշխավորելով:

Ա. Հարությունյանի տեղեկացմամբ՝ 2016 թվականի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության կողմից կատարվել է 74 ստուգում և ուսումնասիրություն, որից 63-ը՝ քրեակատարողական հիմնարկներում, 11-ը՝ այլընտրանքային պատիժների կատարման ծառայությունում: Կատարված ստուգումների արդյունքներով հայտնաբերվել է 120 խախտում, ներկայացվել 17 հաղորդում և բերվել է 28 միջնորդություն, որոնց հիման վրա նշանակվել են ծառայողական քննություններ և իրենց պարտականություններում թերացած 19 աշխատակից, այդ թվում՝ 5 քրեակատարողական հիմնարկի պետ, ենթարկվել է կարգապահական պատասխանատվության:

Կատարված ստուգումների արդյունքում քրեակատարողական հիմնարկներում վերացվել են մի շարք խախտումներ և բացթողումներ:

Զեկույցով հանդես է եկել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը, ով ներկայացրել է ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող, թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված և կիբեռհանցագործությունների գործերով վարչության գործունեությունը: Արձանագրվել է, որ արդյունավետ աշխատանքի շնորհիվ հնարավոր է եղել ապահովել դրական ցուցանիշների կայուն աճ: Անդրադարձ է եղել կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ ՀՀ ԿԱ ԱԱԾ քննչական վարչությունում քննվող հասարակական հնչելություն ստացած քրեական գործերին:

Դ. Մելքոնյանը ներկայացրել է մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման ոլորտում 2016թ. ՀՀ գլխավոր դատախազության կատարած աշխատանքը, հաշվետու ժամանակահատվածում դատարան ուղարկված քրեական գործերի և դրանց քննու-

թյան արդյունքների վերաբերյալ ցուցանիշները, դատավճիռների և գործն ըստ էության լուծող այլ դատական ակտերի բողոքարկման պրակտիկան, 2016թ. կայացված մեղադրական դատավճիռներով արտահայտված պատժողական պրակտիկան, առանձին պատժատեսակների նշանակման քանակական ցուցանիշները, անդրադարձ է կատարվել ծանրության տարբեր աստիճանի հանցագործություններով պատժողական քաղաքականությունն արտահայտող վիճակագրական տվյալներին, որոնք վերլուծվել են այդ հանցագործությունների վերաբերյալ գործերի՝ դատական քննության փուլում շարժի վերաբերյալ տվյալների համեմատությամբ:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ. Ասլանյանը, ներկայացնելով 2016 թ. ընթացքում ՀՀ դատախազության մարմինների կողմից պետական շահերի պաշտպանության բնագավառում իրականացված աշխատանքները, նշել է, որ ուսումնասիրություններ են կատարվել գյուղատնտեսության, սոցիալական ապահովության, կրթության, պետական գույքի և ֆինանսների կառավարման, հանրային ծառայությունների ոլորտների համապատասխան պետական կառավարման մարմինների և դրանց համակարգում գործող մարմինների և կազմակերպությունների գործունեության ընթացքում պետական շահերի պաշտպանության վիճակը: Հ. Ասլանյանը տեղեկացրել է, որ ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության կողմից կատարված աշխատանքների արդյունքում հարուցվել է 14 քրեական գործ, ներկայացվել են 4 հաղորդումներ համապատասխան մարմինների ղեկավարներին, ինչպես նաև հարուցվել են պետական շահերի պաշտպանության 14 հայցեր:

Ուսումնասիրվել և ամփոփվել են ՀՀ վերահսկիչ պալատի 2014-2016թթ. ընթացիկ հաշվետվությունները, հայտնաբերված խախտումների կապակցությամբ հարուցվել են 7 քրեական գործեր:

ՀՀ դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների, ներառյալ ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության կողմից կատարվել է 333 ուսումնասիրություն, հայտնաբերվել է 327 իրավախախտում, հարուցվել է 60 քրեական գործ:

Ամփոփելով ընդլայնված նիստը ՀՀ գլխավոր

դատախազը անդրադառնալով զեկույցներում մատնանշված խնդիրներին և բացթողումներին, վերլուծելով դրանց պատճառները, վերհանելով որոշակի օրինաչափություններ, այդպիսիք վերացնելու նպատակով կոնկրետ միջոցառումներ իրականացնելու հանձնարարություններ է տվել:

«Վստի» գլխավոր դատախազի կողմից ուղենշվել են այն առաջնահերթությունները, որոնց ուղղությամբ քրեական հետապնդման մարմինների աշխատանքներն առաջիկայում էապես ակտիվացվելու անհրաժեշտություն ունի: Այդ համատեքստում գլխավոր դատախազը կարևորել է կոռուպցիոն բնույթի հանցագործությունների լիարժեք բացահայտման, մեղավոր բոլոր պաշտոնատար անձանց պատասխանատվության անխուսափելիության ապահովման աշխատանքները՝ ընդգծելով յուրաքանչյուր նման գործով արդյունքների համար դատախազների անձնական պատասխանատվությունը:

Հակակոռուպցիոն միջոցառումների արդյունավետությունը բարձրացնելու, դրանք հանրության համար առավել նկատելի դարձնելու նպատակով գլխավոր դատախազը հանձնարարականներ է տվել պետական շահերի պաշտպանության բնագավառում դատախազական գործառույթները կոնկրետ ուղղություններով ակտիվացնելու, այդ աշխատանքներում օպերատիվ մարմինների հետ սերտ համագործակցություն ապահովելու ուղղությամբ:

«Վստի» գլխավոր դատախազը, անդրադառնալով հանցագործությունների կանխարգելման աշխատանքներում առկա բացթողումներին, էապես կարևորելով հանցագործությանը նպաստող պայմանների, պատճառների լիարժեք բացահայտումն ու վերացումը՝ հանձնարարել է յուրաքանչյուր գործով ապահովել այդ ոլորտում դատախազական ներգործության միջոցների կիրառումը:

## ԱՄՓՈՓՎԵԼ Է ՀՀ ՉԻՆՎՈՐԱԿԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ 2016Թ. ԱՇԽԱՏԱՆՔԸ

Փետրվարի 14-ին «Վստի» գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը խորհրդակցություն է անցկացրել «Վ» զինվորական դատախազությունում՝ ամփոփելով 2016թ. ընթացքում կատարված աշխատանքները:



Խորհրդակցությանը մասնակցել են «Վ» պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանը, «Վ» զինվորական կենտրոնական դատախազության, կայազորների զինվորական դա-

տախազները, «Վ» քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության և ռազմական ոստիկանության պատասխանատուները:

Խորհրդակցության ընթացքում «Վ» զինվորական դատախազ, «Վ» գլխավոր դատախազի տեղակալ Արտավազ Հարությունյանը ներկայացրել է 2016թ. Ձինված ուժերում օրինականության պահպանման, հանցագործությունների դեմ պայքարի, պետական շահերի պաշտպանության, զինծառայողների իրավունքների պաշտպանության և դատախազությանը վերապահված մյուս լիազորությունների իրականացման ոլորտներում կատարված աշխատանքները:

«Վ» գլխավոր դատախազը, անդրադառնալով 2016թ. ընթացքում Ձինված ուժերում արձանագրված մահվան ելքով դեպքերին, հանձնարարել է առավել հետևողական լինել դրանց կանխման ուղղությամբ կատարվող աշխատանքներում, ապահովել հատկապես համաժառանգակիցների կողմից կատարված սպանությունների, ինքնասպանության հասցնելու վե-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 98 2017



րաբերյալ քրեական գործերի քննության լրիվությունը, օբյեկտիվությունը և բազմակողմանիությունը, դրանցով պարտադիր քննության առարկա դարձնել նաև նշված դեպքերին նախորդած իրադարձությունները:

Արթուր Դավթյանը հատուկ անդրադարձել է Ձինված ուժերում հանցավորության կանխարգելման խնդրին՝ կարևորելով քրեական գործերի նախաքննության ընթացքում հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքները պարզելու և դրանք հետագայում վերացնելու ուղղությամբ դատախազական ներգործության միջոցներ ձեռնարկելու, մասնավորապես՝ համապատասխան պատկան մարմիններին միջնորդագրեր ներկայացնելու և դրանց քննարկման, քրեաձին պատճառներն ու պայմանները վերացնելու նկատմամբ հետևողականություն ցուցաբերելու անհրաժեշտությունը:

Կարևորելով քրեական հետապնդման մարմինների գործունեության կանխատեսելիությունն ու որոշակիությունը, ինչպես նաև վարույթի մասնակից զինծառայողների իրավունքների պատշաճ պաշտպանությունը՝ գլխավոր դատախազը հանձնարարել է դատախազներին ավելի հաճախ կազմակերպել վարույթի մասնակիցների,

նրանց ներկայացուցիչների ընդունելություն՝ անձամբ նախաձեռնություն ցուցաբերելով:

Անդրադառնալով բանակում պետության գույքային շահերի պաշտպանության ոլորտին՝ ՀՀ գլխավոր դատախազը կոնկրետ հանձնարարականներ է տվել այդ ոլորտում դատախազական գործառույթներն ակտիվացնելու ուղղությամբ:

ՀՀ պաշտպանության նախարար Վ.Սարգսյանը շնորհակալություն է հայտնել ՀՀ զինվորական դատախազության աշխատակիցներին կատարված աշխատանքի համար և, ընդգծելով իր և պաշտպանական գերատեսչության ղեկավար կազմի շահագրգռվածությունը բանակում արձանագրված հանցավոր երևույթների կանխման, խախտում թույլ տված անձանց անխուսափելի պատասխանավորության ապահովման հարցում, պատրաստակամություն է հայտնել այդ երևույթների դեմ պայքարում դատախազության հետ ջանքերի համատեղման հարցում:

Ամփոփելով խորհրդակցությունը՝ ՀՀ գլխավոր դատախազն աշխատանքների արդյունավետության բարձրացման, առկա խնդիրների համակարգված լուծման ուղղությամբ տվել է այլ հանձնարարականներ:

## ԱՄՓՈՓՎԵԼ Է ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ 2016Թ. ԱՇԽԱՏԱՆՔԸ

Փետրվարի 10-ին ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը խորհրդակցություն է անցկացրել Երևան քաղաքի դատախազությունում՝ ամփոփելով 2016թ. ընթացքում կատարված աշխատանքները: Խորհրդակցությանը մասնակցել են Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազները, ՀՀ ոստիկանության և ՀՀ քննչական կոմիտեի մայրաքաղաքային մարմինների պատասխանատուները:

Խորհրդակցության ընթացքում Երևան քաղաքի դատախազ Ռաֆֆի Ասլանյանը զեկուցել է մայրաքաղաքում 2016թ. հանցավորության վիճակի, կառուցվածքի, շարժընթացի, ինչպես նաև հանցագործությունների բացահայտման վերաբերյալ վիճակագրական տվյալները, ներկայացրել դրանց բարելավման ուղղությամբ կատարված աշխատանքը:

ՀՀ գլխավոր դատախազը, ներկայացված տվյալների հիման վրա ըստ վարչական շրջանների անդրադառնալով առանձին հանցատեսակների աճին ու դրանց բացահայտման ցուցանիշներին, հանձնարարել է առավել հետևողական լինել դրանց կանխման և խափանման ուղղությամբ կատարվող միջոցառումներին, հատկապես ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերի քննության լրիվության, օբյեկտիվության բազմակողմանիության և արդյունավետության ապահովմանը:

Արթուր Դավթյանը հատուկ անդրադարձել է հասարակական վայրերում, հրազենի գործադրմամբ բազմաթիվ քաղաքացիների ներկայությամբ, չնչին առիթներով կատարված հանցագործությունների բացահայտման վիճա-

կազմությանը և դրանց վերաբերյալ քրեական գործերի քննության արդյունավետությանը՝ նշելով, որ այդ հանցագործություններից չբացահայտվածներն առանձին դեպքերում օպերատիվ-հետախուզական միջոցառումների և քննչական գործողությունների կատարման հասպա-



ղումների, դրանք չպլանավորված և չհամակարգված իրականացնելու հետևանք են՝ նկատի ունենալով նաև, որ մայրաքաղաքի փողոցների և այլ հասարակական վայրերի մեծամասնությունը վերահսկվում է տարբեր նշանակություն ունեցող տեսախցիկներով:

Գլխավոր դատախազը, ընդգծելով հասարակական վայրերում կատարված, հնչեղության ստացած հանցագործությունների արագ բացահայտման հույժ անհրաժեշտությունը, նշել է, որ արդյունավետ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ չիրականացնելու և հանցանք կատարած անձանց չպարզելու, նրանց մեղքը հիմնավորող բավարար ապացույցներ ձեռք չբերելու պատճառով այդ անձանց կողմից քրեական պատասխանատվությունից խուսափելը հասարակության անդամների մեջ առաջացնում է արդարացի դժգոհություն, նպաստում է ավելի ծանր հանցագործությունների կատարմանը՝ էապես վնասելով երկրի իրավապահ մարմինների հեղինակությունը:

Գլխավոր դատախազը, ուշադրություն հրավիրելով կրկնահանցագործությունների դեպքերին, նշել է, որ դրանց վիճակագրությունը վկայում է որդեգրված քրեական քաղաքականության՝ պատժի նպատակների իրացման տեսանկյունից արդյունավետության մասին: Համոզմունք հայտնելով, որ կրկնահանցավորու-

թյան դեմ պայքարն էապես պայմանավորված է նաև քրեակատարողական ոլորտի շարունակվող բարեփոխումներով, գլխավոր դատախազը նշել է, որ անհրաժեշտ է ավելի ակտիվացնել կրկնահանցագործությունների դեմ նախականիչ միջոցառումները՝ հատկապես ազատագրկման վայրերից վերադարձած անձանց կենցաղի և վարքագծի, նրանց զբաղմունքի ու հակումների նկատմամբ հսկողությունն ուժեղացնելու միջոցով:

Անդրադառնալով հանցավորության կանխման խնդիրներին՝ Արթուր Դավթյանը կարևորել է յուրաքանչյուր դեպքում հանցագործության պատճառները և դրան նպաստող պայմանները քրեական գործի նախաքննությամբ պարզելու և վերացնելու ուղղությամբ դատախազական ներգործության միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը: Այս առումով գլխավոր դատախազն առանձնացրել է հատկապես ուսումնական հաստատություններում հանցագործությունների նախականիման և նման հաստատություններում քրեածին միջավայրի բացառման նպատակով իրականացվող աշխատանքներն ավելի ակտիվացնելու անհրաժեշտությունը:

Գլխավոր դատախազը հանձնարարել է ակտիվացնել ջանքերը ցանկացած հանցագործության վերաբերյալ գործով հետաքննության և նախաքննության լրիվությունը, օբյեկտիվությունը, բազմակողմանիությունը և արդյունավետությունն ապահովելու, քրեական վարույթի շրջանակներում մարդու իրավունքներն ու ազատությունները երաշխավորելու, դրանց անհիմն սահմանափակումները բացառելու ուղղությամբ՝ այդ նպատակով գործի դնելով դատախազական ներգործության բոլոր միջոցները:

Կատարած աշխատանքի արդյունավետության բարձրացման նպատակով ՀՀ գլխավոր դատախազը կարևորել է իրավապահ մարմինների աշխատանքի համակարգվածության, միասնականության, կանխատեսելիության և հրապարակայնության ապահովման անհրաժեշտությունը:

Խորհրդակցության ընթացքում մայրաքաղաքի իրավապահ մարմինների ղեկավարների մասնակցությամբ քննարկվել են աշխատանքային մի շարք հարցեր:

**ՋՈՆ ՀԱՅՐԱԴԵՏՅԱԼ**

ՀՀ վճռաբեկ դատարանի դատավորի ավագ օգնական,  
«Հայաստանում ֆրանսիական համալսարանի»  
Իրավաբանական ֆակուլտետի դասախոս,  
իրավաբանական գիտությունների թեկնածու

**ՆԵՐՍԵՍ ԶԵՅՆԱԼՅԱՆ**

«Հայաստանում ֆրանսիական համալսարանի»  
Իրավաբանական ֆակուլտետի ուսանող

**ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՆՁՆԱԶԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխում են շարադրված նախնական քննության ընդհանուր պայմանները, որտեղ տեղակայված 188-րդ հոդվածը սահմանում է. «Նախաքննությունը պարտադիր է բոլոր քրեական գործերով»: Նույն հոդվածի երկրորդ մասը սահմանում է. «Հետաքննությունը կարող է լինել քննության սկզբնական փուլ՝ քրեական գործ հարուցելու պահից 10 օրվա ընթացքում»:<sup>1</sup> Փաստորեն, ներկայիս ՔԴՕ համակարգային վերլուծության շնորհիվ ակնհայտ է դառնում, որ բացառապես բոլոր հարուցված քրեական գործերը ենթակա են քննիչի կողմից վարույթ ընդունման և դրանցով բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ նախաքննության կատարման: ՀՀ-ում քրեական գործերով նախաքննություն կատարում են քննչական կոմիտեի (այսուհետ՝ ՔԿ), հատուկ քննչական ծառայության, ազգային անվտանգության, հարկային և մաքսային մարմինների քննիչները:<sup>2</sup> Հաշվի առնելով հարկային և մաքսային մարմինների քննիչների կողմից քննվող քրեական գործերի մասնագիտական ուղղվածությունը, ինչպես նաև հատուկ քննչական և ազգային անվտանգության բնագավառի պետական լիազոր մարմնի քննչական ծառայություններին քննչական ենթակայությամբ հանձնված քրեական գործերի առանձնահատկությունները՝ սույն աշխատության մեջ բարձրացված խնդիրները և դրանց լուծումների մեխանիզմներն առավելապես վերաբերելի են Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեին քննչական

ենթակայությամբ հանձնված քրեական գործերին:

2015 թվականի ընթացքում ՀՀ-ում նախաքննություն իրականացնելու լիազորություն ունեցող մարմինների կողմից ընդհանուր առմամբ քննվել է 21955 քրեական գործ, որի շուրջ 93%՝ ՔԿ վարույթում:<sup>3</sup> 2016-ին այս ցուցանիշը կազմել է 91,3%, ինչի արդյունքով քննիչների միջին ծանրաբեռնվածությունը կազմել է 46,4, իսկ առանձին ստորաբաժանումներում՝ շուրջ 130 քրեական գործ:<sup>4</sup> Այս թիվը ներառում է ՔԿ-ին քննչական ենթակայությամբ հանձնված բոլոր տեսակի հանցագործությունների դեպքերով կատարված քննությունը և հանրապետության ամբողջ տարածքում անխուսափելիորեն առաջացնում է քննիչների գերծանրաբեռնվածություն, ինչը միանգամայն չի կարող իր ազդեցությունը չթողնել նրանց կողմից քննվող քրեական գործերի որակի, քննության լրիվության և բազմակողմանիության վրա: Առանձնահատուկ պետք է նշել, որ այս հանգամանքը ոչ մի կերպ կասկածի տակ չի դնում քննիչների պրոֆեսիոնալիզմը և ունակությունը՝ ցանկացած գործով կատարելու լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննություն, ընդհակառակն՝ ստեղծված իրավիճակը թույլ չի տալիս վերջիններիս իրականացնել իրենց գործառույթներն ամբողջ ծավալով և հնարավորություններով: Մինչդեռ քրեական գործով նախաքննության փուլը, ունենալով առանցքային նշանակություն հանցագործության դեպքով օբյեկտիվ ճշմարտության վերհանման և դատարանում արդարադատության իրականացման

<sup>1</sup> ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը, հոդված 188, ՀՕ-248, 1998թ.:  
<sup>2</sup> ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը, հոդված 189, ՀՕ-248, 1998թ.:  
<sup>3</sup> «Քննիչ» 1/2016, էջ 16, Երևան, 2016թ.:  
<sup>4</sup> ՀՀ քննչական կոմիտեի 2016 թվականի գործունեության հաշվետվություն:

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 98 2017

համար, անխուսափելիորեն պետք է կատարվի առավելագույն ճշգրտությամբ: Սա իր տեսակով նաև կլինի երաշխիք՝ գերծ մնալու դատական սխալներից, ինչն իր հերթին նաև հրատապ խնդիր է մեր Հանրապետությունում: Այնուամենայնիվ, նշվածին հասնելու համար առաջնային քայլը, անկասկած, պետք է լինի քննիչների<sup>5</sup> վարույթների բեռնաթափումը: Սրան զուգահեռ պետք է նշել, որ, չնայած վարույթային ներկայիս ակնհայտ ծանրաբեռնվածությանը, նույնիսկ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) նախատեսված չեն բավարար մեխանիզմներ, որոնք թույլ կտային բարձրացնել քննության արդյունավետությունը քանակական կրճատումների միջոցով: Ավելին, ըստ Նախագծի՝ «գործառույթ-ինստիտուտ-լիազորություն» շղթայի ապահովման համատեքստում<sup>6</sup> քննիչը վարույթն իրականացնող միակ պաշտոնատար անձն է՝ նախաձեռնելու պահից, մինչև փուլի եզրափակիչ որոշումը հսկող դատախազին հանձնելը<sup>7</sup>: Այդտեղ ձևակերպված են մի շարք նորարարական և բարեփոխիչ դրույթներ, որոնցով սահմանվում են նոր երաշխիքներ անձանց իրավունքների պաշտպանության նպատակով: Միաժամանակ, այս հեռանկարից դուրս են մնացել վարույթի հանրային մասնակիցները՝ հանձնիս քննիչների: Համակարգային վերլուծության արդյունքով կարելի է նշել, որ, փաստացի, նրանց համար ավելի բարդ ու ծանր աշխատանքային պայմաններ են սահմանվում:

Հայեցակարգային այս դրույթների իրագործումն սկսվեց դեռևս մինչև քրեական դատավարության նոր օրենսգրքի ընդունումը՝ միասնական քննչական մարմնի՝ քննչական կոմիտեի կազմավորմամբ, որին հանձնվեց քրեական գործերի մեծ մասով նախաքննություն կատարելու լիազորությունը:<sup>8</sup> Հիմնադրամից սկսած՝ մեկ տարվա ընթացքում հանդիպում են քննիչներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու դեպքեր, որոնց շարքում մեծ թիվ են կազմում դեպքերը, երբ քննիչը ենթարկվում է պատասխանատվության իր վարույթում գտնվող քրեական գործով տևական ժամանակ որևէ դատավարական գործողություն չկատարելու համար:<sup>9</sup> Այս պարագայում չի կարելի աչքաթող անել նաև հնարավոր առանձին դեպքերը, երբ գործողությունները չեն կատարվում վերը նշված պայմանների առկայության պարագայում: Իրավամբ՝ գործի քննությունը տեղի է ունենում ավելի էֆեկտիվ դրա արդյունավետ պլանավորման պարագայում, սակայն նշված խնդրի առկայության պարագայում կարելի է պլանավորել միայն որոշակի քայլերի հաջորդականությունը՝ դրանց համար ժամկետային սահմանափակումներ չտալով: Համակարգում խնդրի առկայությունը փաստվում է նաև 2015թ. ընթացքում լրացուցիչ քննության ուղարկված քրեական գործերի ուսումնասիրություններով: Ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ ընդհանուր թվով լրացուցիչ քննության են վերադարձվել 67 քրեական գործեր, որոնց մեծամասնությունը եղել է ոչ պատշաճ պլանավորման հետևանքով կատարված թերի նախաքննության պատճառով:<sup>10</sup>

Վերը նշվածների պատճառով էլ անհրաժեշտ է համակարգային մեխանիզմների մշակումն ու կիրառումը մինչդատական վարույթի ընթացքում, ինչն անխուսափելիորեն կբարձրացնի քննության որակը, իսկ նպատակին հասնելու հիմնական և առաջնային միջոցը քննիչների վարույթներում առկա քրեական գործերի քանակի նվազեցումն է: Մեր կարծիքով՝ ՀՀ իրավապահ համակարգի պայմաններում կիրառելի տարբերակ է որոշ փոփոխություններ ներմուծելը նախնական քննության ընդհանուր պայմաններում՝ մասնավորապես *քննչական ենթակայության* պայմաններում: Սրանից բխող մեկ այլ հարց, որն անհրաժեշտ է ուշադրության կենտրոնում պահել, քննությանը ներգրավվող *աշխատակիցների մասնագիտական պատրաստվածությունն* է:

Վերը նշվածների պատճառով էլ անհրաժեշտ է համակարգային մեխանիզմների մշակումն ու կիրառումը մինչդատական վարույթի ընթացքում, ինչն անխուսափելիորեն կբարձրացնի քննության որակը, իսկ նպատակին հասնելու հիմնական և առաջնային միջոցը քննիչների վարույթներում առկա քրեական գործերի քանակի նվազեցումն է: Մեր կարծիքով՝ ՀՀ իրավապահ համակարգի պայմաններում կիրառելի տարբերակ է որոշ փոփոխություններ ներմուծելը նախնական քննության ընդհանուր պայմաններում՝ մասնավորապես *քննչական ենթակայության* պայմաններում: Սրանից բխող մեկ այլ հարց, որն անհրաժեշտ է ուշադրության կենտրոնում պահել, քննությանը ներգրավվող *աշխատակիցների մասնագիտական պատրաստվածությունն* է:

● ՕՐԻՆԱԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ № 98 2017

<sup>5</sup> ՀՀ քննչական կոմիտեի ստորաբաժանումներում գործող քննիչների:  
<sup>6</sup> ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգ, 10.03.2011թ.:  
<sup>7</sup> ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծ, հոդված 7, մաս 1:  
<sup>8</sup> ՀՀ քրեական դատավարության օրենսգրք, հոդված 190, ՀՕ-248, 1998թ.:  
<sup>9</sup> ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի որոշումներ, Երևան, 2015թ.:  
<sup>10</sup> «Քննիչ», 2/2016, էջ 32, Երևան, 2016թ.:

**Նախաքննության ընդհանուր պայմանների փոփոխություններ**

Քննչական ենթակայության առարկայական հատկանիշը ցույց է տալիս, թե որ գերատեսչության լիազորված աշխատակիցները պետք է իրականացնեն քննությունը՝ հանցագործության բնույթից, հանրային վտանգավորության աստիճանից և այլ հատկանիշներից կախված: Հենց այս հատկանիշներն են, որ իրենց համակարգային միասնության մեջ ձևավորում են հանցագործությունների՝ հանրության համար վտանգավորության բնույթն ու աստիճանը: Այս երկու հասկացությունն էլ հիմք ընդունելով՝ հայրենական քրեական իրավունքում տեղի է ունեցել հանցագործությունների բաժանում՝ ըստ տեսակների:<sup>11</sup> Դրանց շարքում որպես մեր քննարկման առարկա պետք է դիտարկել, հատկապես, ոչ մեծ ծանրության հանցագործությունները Այս տեսակի մի շարք հանցագործություններ առերևույթ օժտված են մնացած հանցագործությունների հետ համեմատած նվազ հանրային վտանգավորությամբ: Միևնույն ժամանակ՝ այս գործերով վարույթները, առավելապես, չունեն քննության բարդության այն աստիճանը, ինչ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունները:<sup>12</sup> Հենց այս տարբերությունը հաշվի առնելով՝ վերը նշված խնդրի լուծման միտմամբ նպատակահարմար կարող է լինել հանցագործություն կատարած անձանց հայտնաբերելու և հանցագործությունը բացահայտելու առաքելություն ունեցող և համապատասխան գործառույթով մարմինների դերի բարձրացումը մինչդաստական վարույթի փուլում՝ ընդհուպ մինչև դրա ամբողջական քննությունն իրականացնել լիազորելը: Այդ նպատակով ՀՀ իրավապահպան մարմինների համակարգում պետք է առանձնացնել ոստիկանությունը, որն իր գործառույթներն իրականացնե-

լիս լիազորված է «...հարուցել քրեական գործեր, իրականացնել անհետաձգելի քննչական գործողություններ՝ հանցագործություն կատարած անձանց և հանցագործության հետքերը հայտնաբերելու, ամրապնդելու, հանցագործությունը բացահայտելու նպատակով...»<sup>13</sup>

Ի տարբերություն հետաքննության այլ մարմինների՝ ՀՀ ոստիկանությունը, հանդիսանալով հետաքննության հիմնական մարմին<sup>14</sup>, լիազորված է հետաքննություն իրականացնել քրեական օրենսգրքով նախատեսված արարքներ կատարելու բոլոր դեպքերով: Այս հանգամանքը փաստում է ոստիկանության մասնագիտացվածությունը և բավարար ռեսուրսների տիրապետելը ենթադրյալ հանցագործությունների որոշ դեպքերով օբյեկտիվ ճշմարտությունը վերհանելու գործում: Ոստիկանության ստորաբաժանումների հետաքննիչները մի շարք դեպքերով նախապատրաստում են նյութեր, հարուցում քրեական գործեր և կատարում հետաքննություն՝ այդ ընթացքում կատարելով օրենքով նախատեսված քննչական և դատավարական գործողություններ: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ պետք է նշել, որ ոչ մեծ ծանրության մի շարք հանցագործություններով մինչդաստական քննությունը ոստիկանության համակարգում գործող լիազորված աշխատակիցների կողմից դատախազական հսկողությամբ կատարելը չի կարող բացասական ազդեցություն ունենալ դրանց ընթացքի կամ արդյունքների վրա: Դատավարական նման պրակտիկայի օրինակ է Ռուսաստանի Դաշնության քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված մինչդատավարական վարույթը: Սահմանված են այնպիսի հանցատեսակներ, որոնցով մինչդատական քննությունը կարող է կատարվել միայն հետաքննության ձևով ՌԴ ներքին գործերի նախարարության ստորաբաժանումների և հետաքննության այլ մարմինների կողմից:<sup>15</sup>

<sup>11</sup> ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 19, ՀՕ-528-Ն, 2003թ.:

<sup>12</sup> Անխուսափելիորեն պետք է նշել, որ ցանկացած գործով դրա բարդությունը պետք է դիտարկել՝ ելնելով կոնկրետ փաստական հանգամանքներից, վարույթի մասնակիցներից և մի շարք այլ հատկանիշներից: Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 118 հոդվածով (Ծեծը) նախատեսված հանցակազմը, չնայած բնութագրում է ոչ մեծ ծանրության հանցագործություն, սակայն արդարացիորեն պետք է նշել, որ, ելնելով մի շարք հանգամանքներից, դրա քննությունը մի շարք բարդություններ է առաջացնում վարույթն իրականացնող մարմին համար:

<sup>13</sup> «Ոստիկանության մասին» ՀՀ օրենք, հոդված 11, ՀՕ-177, 2001թ.:

<sup>14</sup> Օրենքով կամ այլ իրավական ակտով նման կարգավիճակ սահմանված չէ:

<sup>15</sup> Уголовно-процессуальный кодекс Российской Федерации от 18.12.2001, N 174-ФЗ (с изм. и доп., вступ. в силу с 01.09.2016), с. 40 и 150.

Քննարկվող ինստիտուտը քրեադատավարական տեսության մեջ առավել հայտնի է «նստիկանական հետաքննություն» (полицейское дознание) անվանմամբ և լայն կիրառություն ունի ինչպես մայրցամաքային, այնպես էլ անգլոսաքսոնական իրավական համակարգերում՝ յուրաքանչյուրում իր առանձնահատկություններով:

Սա իր քննարկվող տարբերակով առաջին անգամ կիրառվել և ուղղակիորեն սահմանվել է դեռևս նախորդ դարում՝ ԽՍՀՄ 1922թ. ՔԴՕ-ով, որը նախատեսում էր դրույթ, ըստ որի. «...եթե ոստիկանական հետաքննությամբ ձեռք են բերվել հանցագործության կատարման մեջ անձին մերկացնող տվյալներ, որոնց դեպքում քրեական օրենսգիրքը նախատեսում է առավելագույն պատիժ մեկ տարի ազատազրկման տեսքով, ապա հավաքված բոլոր նյութերը հետաքննության մարմնի կողմից ուղարկվում էին դատարանին...»: Նորմից պարզ է դառնում, որ այստեղ նույնպես տարանջատման հիմնական շեշտը հանցագործության տեսակի վրա էր դրվում՝ ելնելով դրա համար սահմանված պատժամիջոցից: Հետագայում ինստիտուտը, մի շարք փոփոխությունների ենթարկվելով, ստացել է իր ժամանակակից կիրառման ձևը:<sup>16</sup>

### Հետաքննության ձևով քննվող հանցատեսակները

Ինստիտուտի ներդրման և պատշաճ աշխատանքի կազմակերպման համար լիազորված սուբյեկտից բացի՝ պետք է հստակորեն տարանջատել նաև ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված այն հանցակազմերը, որոնցով քննությունը հնարավոր կլինի իրականացնել հետաքննության ձևով: Ինչպես արդեն նշվեց՝ առաջնային ուշադրության կենտրոնում պետք է պահել ոչ մեծ ծանրության հանցագործությունները՝ մնացածների համեմատ ավելի նվազ հանրային վտանգավորության պատճառով: Այս շարքում պետք է նշել տվյալ տեսակին

պատկանող մարդու դեմ ուղղված հանցագործությունները, սեփականության դեմ ուղղված հանցագործություններից, մասնավորապես՝ գողության, խարդախության, յուրացման կամ վատնման հանցակազմերի առաջին մասերով նախատեսված հանցագործությունները: Հաշվի առնելով նաև ՔԿ վարույթում հանդիպող զգալի քանակությամբ գործերը՝ ՃԵԿ-ը խախտելու, ինչպես նաև խուլիգանության<sup>17</sup> հանցագործությունների դեպքերով, կարելի է արձանագրել, որ դրանց քննությունը հետաքննության ձևով էականորեն կնվազեցնի քննիչների աշխատանքային ծանրաբեռնվածությունը:<sup>18</sup> Սրա հետ մեկտեղ՝ դուրս է գալիս այս նույն դեպքերով քրեական գործ հարուցելու հարցի լուծման փուլի խնդիրների լուծման նպատակով անհրաժեշտ դատավարական գործողություններ կատարելու պարտականությունը: Նյութերի նախապատրաստման իրականացման ծանրաբեռնումն ընդգծելու և հարաբերակցությունը ցույց տալու համար բավական է նշել, որ մեկ քննիչի միջին ծանրաբեռնվածությունը միայն քրեական գործերով 2015թ. կազմել է 45 քրեական գործ, իսկ մերժված նյութերի հետ մեկ քննիչի վարույթում եղել է միջինում 66 քրեական գործ և նյութ:<sup>19</sup> Ելնելով վերոգրյալից՝ քննչական կոմիտեի պաշտոնական ամփոփագրերի և ոստիկանության տեղեկատվական կենտրոնի՝ ոչ մեծ և միջին հանցագործությունների վերաբերյալ հաշվետվության համեմատական դիտարկումները թույլ են տալիս եզրակացնել, որ քննարկվող մոդելի ներմուծման պարագայում հնարավոր կլինի նշանակալիորեն նվազեցնել քննիչների աշխատանքային ծանրաբեռնվածությունը՝ կրճատելով նրանց վարույթում առկա քրեական գործերի թիվը: Այսպիսով՝ կարծում ենք, որ նկարագրվածի համակարգային վերլուծության արդյունքով ակնհայտ է նման մոտեցման որդեգրման պարագայում բարձրացված խնդիրների լուծումը կամ առնվազն դրանց պատճառով առաջացած իրավիճակի մեղմումը:

ՕՐԻՆԱԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ № 98 2017

<sup>16</sup> Курс уголовного права / под ред. д.ю.н., проф. Л.В. Головки – Статут, 2016.

<sup>17</sup> Տվյալ դեպքում դիտարկման առարկա են ՀՀ քրեական օրենսգրքի 258 հոդվածի 1-ին և 2-րդ մասերով կատարված հանցավոր արարքները:

<sup>18</sup> ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի իրավական ապահովման և վիճակագրության վարչության 2015թ. պաշտոնական ամփոփագրի համաձայն:

<sup>19</sup> ՀՀ քննչական կոմիտեի՝ 2015թ. գործունեության մասին հաղորդում:

Արդեն տևական ժամանակ ՀՀ-ում ընթացող դատաիրավական բարեփոխումների տրամաբանական շարունակությունը քրեական դատավարության նոր օրենսգրքի ընդունումն է, որի նախագծով արդեն իսկ մի շարք հիմնարար փոփոխություններ են նախատեսված ամբողջ քրեական դատավարությունում, մասնավորապես՝ մինչդատական վարույթի ընդհանուր պայմաններում: Տվյալ թեմայի շրջանակներում առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում փոփոխությունը փուլային կազմում, մասնավորապես՝ նախաքննության կատարման ձևերի սահմանումն ընդհանուրի և պարզեցվածի:<sup>20</sup> Նախագծում հողվածի սահմանումից պարզ է դառնում, որ տարանջատման հիմքում դրված է հանցագործության տեսակը, միևնույն ժամանակ՝ պահպանվել է դատախազի իրավունքը համապատասխան ձևն ընտրելու համար՝ ելնելով կատարված ոչ մեծ ծանրության հանցագործության առանձնահատկություններից: Չնայած դատավարական օրենքի նախագիծը սահմանում է այս երկու տեսակը, նախանշելով դրանց տարբերությունը նաև իրենց բարդության աստիճանով, այնուամենայնիվ, երկու դեպքում էլ գործի քննությունն իրականացվում է **միայն քննիչների կողմից**: Կարծում ենք՝ քննության կատարման էլ ավելի բարձր որակ, արդեն իսկ նշված հիմնավորումներով, կարող է ապահովվել, եթե այս ձևերի պահպանման դեպքում առնվազն պարզեցված վարույթն իրականացվեր հետաքննության մարմնի կողմից: Ոստիկանության համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցներ

ի մասնագիտական պատրաստվածությունը, ինչպես նաև նրանց տրամադրության տակ եղած ռեսուրսները թույլ են տալիս, որ նրանք գործով կատարեն բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն և գործը փոխանցեն դատախազական փուլ: Մինչդեռ, ուսումնասիրելով նրանց լիազորությունները, տեսանելի է, որ հետաքննության մարմնի լիազորությունները սահմանափակված են բացառապես օժանդակող բնույթի լիազորություններով:

Ամփոփելով ամբողջ վերը նշվածը՝ եզրահանգում ենք, որ Հայաստանի Հանրապետությունում քրեական գործերով տարվող նախնական քննության ինքնուրույն ձև պետք է սահմանվի ոստիկանական հետաքննությունը: Ոստիկանական հետքաննությունը, որը կտարվի ոչ մեծ ծանրությամբ հանցագործությունների վերաբերյալ գործերով, հնարավորություն կտա երկրում գործող քննչական մարմիններում էապես նվազեցնել մեկ քննիչի վարույթում գտնվող գործերի քանակը, ինչի հետևանքով, անկասկած, կբարձրանան քննիչների կողմից իրականացվող նախաքննության որակը և արդյունավետությունը: Բացի այդ՝ Հայաստանում ոստիկանական համակարգը, ունենալով բավարար կադրային և տեխնիկական ռեսուրսներ, հնարավորություն ունի լիարժեքորեն ստանձնելու նշված գործերը մինչև դատարան տանելու առաքելությունը: Հակառակ պարագայում անհասկանալի է մնում այդ հսկայական գերատեսչության քրեական գործերով մասնակցության աստիճանի արհեստականորեն նվազեցված դերը:



<sup>20</sup> Տե՛ս ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծ, Կ-084-14.09.2012,19.10.2016-ՊԻ-010/0:

**ԱԼԻՍԱ ՍՄԲԱՏՅԱԼ**

«Ն ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի ուսումնական ասիստենտ, ոստիկանության ավագ լեյտենանտ

**ԱՆՉԱՓՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՅՈՒԹՅԱՄԲ ՔՆՆՉԱԿԱՆ  
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ  
ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Երեխաների իրավունքների մասին ՄԱԿ-ի 1989 թ. կոնվենցիայի<sup>1</sup> նախաբանում ասվում է. «...Երեխան, նկատի ունենալով նրա ֆիզիկական և մտավոր անհասունությունը, կարիք ունի հատուկ պաշտպանության և հատուկ հոգատարության, ներառյալ՝ պատշաճ իրավական պաշտպանությունը ծնվելուց առաջ և հետո»: Ավելի քան երկու տասնամյակ է, ինչ Հայաստանի Հանրապետությունը միացել է<sup>2</sup> այդ կոնվենցիային՝ ստանձնելով երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում միջազգային պարտավորություններ:

Երեխաների իրավունքների պաշտպանության տեսանկյունից՝ պետական իրավապահ գործունեության բնագավառում առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում քրեական դատավարությունը, որի իրականացման ընթացքում առկա է անձի հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակման իրավական հնարավորություն:

Քրեական դատավարության անչափահաս սուբյեկտների իրավունքների և օրինական շահերի ապահովման առումով՝ առավել խնդրահարույց են նրանց մասնակցությամբ (նկատմամբ) քննչական գործողությունների իրականացման ընթացքում ծագող խնդիրները:

Քննչական գործողությունները կարևոր նշանակություն ունեն հանցագործությունների բացահայտման համար և ընկած են ապացուցողական գործունեության հիմքում: Հարկ ենք համարում նշել, որ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում (այսուհետ՝ Նա-

խագիծ) քննչական գործողությունը դիտարկվում է որպես քրեական դատավարության ընդհանուր, այլ ոչ թե՛ փուլային ինստիտուտ:

Քրեադատավարական օրենքն անչափահասների նկատմամբ քննչական գործողությունների իրականացման որևէ սահմանափակում չի նախատեսում: Քրեական դատավարության օրենսգրքը բոլոր հանցագործությունների քննության համար սահմանում է քննության միասնական կարգ, այսինքն՝ դատավարական ընդհանուր ձև և երաշխիքներ, որոնք ապահովում են ինչպես հանցագործությունների արդյունավետ քննությունը, այնպես էլ անձի իրավունքների պաշտպանությունը: Քրեական դատավարության խնդիրներից ելնելով՝ օրենքում նախատեսվում են նաև բացառություններ, որոնք պայմանավորված են ենթադրյալ հանցանք կատարած անձի հատկանիշներով:

Վարույթի առանձին կարգ նախատեսելը նպատակ է հետապնդում ոչ թե սահմանափակել օրենքով նախատեսված երաշխիքները, այլ, հակառակը՝ պահպանելով այդ երաշխիքները՝ օրենքում նախատեսել պաշտպանության լրացուցիչ միջոցներ: Տվյալ դեպքում մենք գործ ունենք ոչ թե հակասության, այլ՝ ընդհանուր կանոնից բացառության հետ: Օրենքով նախատեսված դեպքերում, դատավարական ընդհանուր երաշխիքներից բացի, նախատեսվում են նաև այլ միջոցներ, որոնք երաշխավորում են անձի իրավունքների և իրավաչափ շահերի արդյունավետ պաշտպանությունը: Ահա այդ երաշխիքների համակարգում կարևոր դերակա-

● ՕՐԻՆԱԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ, № 98 2017

<sup>1</sup> ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեա, Նյու Յորք, 20.11.1989 թ., ուժի մեջ է մտել 22.07.1993 թ. (ՄՊ ՀՀՊՏ 2008/Հատուկ թողարկում:) / URL: <http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=60503>

<sup>2</sup> Երեխաների իրավունքների մասին ՄԱԿ-ի 1989 թ. կոնվենցիան ՀՀ համար ուժի մեջ է մտել 1993 թ. հուլիսի 22-ից:



տարություն ունեն անչափահասների նկատմամբ կիրառվող իրավական գործիքները: Խնդրո առարկա հանդիսացող բնագավառում բացակայում են առանձին այնպիսի իրավակարգավորումներ, որոնք վերաբերելի կլինեին անչափահասներին՝ քննչական գործողությունների իրականացման համատեքստում: Ասվածը խնդրահարույց է այն իմաստով, որ իրավական կարգադրագրի բացակայությունը մեծացնում է վարույթն իրականացնող մարմնի հայեցողական լիազորությունը, ինչը հղի է անցանկալի հետևանքներով: Քննչական գործողությունների կատարման անչափահասների մասնակցության հարցերը միշտ էլ եղել են դատավարագետների ուշադրության կենտրոնում, իսկ օրենսդրական նոր զարգացումների պայմաններում դրանց ուսումնասիրությունը դարձել է ավելի արդիական:

Պետք է նշել, որ այն քննչական գործողությունները, որոնց կարող է մասնակցել անչափահասը, բազմաոտեսակ են, սակայն և՛ գործող օրենսգրքով, և՛ Նախագծով անչափահասների վերաբերությամբ կարգավորված են միայն հարցաքննության առանձնահատկությունները: Քրեական դատավարության օրենսգիրքը կարգավորում է միայն անչափահաս վկայի և տուժողի հարցաքննության առանձնահատկությունները, իսկ Նախագիծը, բացի վերը նշված սուբյեկտներից, կարգավորում է նաև հարցաքննության առանձնահատկություններն անչափահաս մեղադրյալի մասով (հոդված 240): Իհարկե, ողջունելի է, որ Նախագծում հարցաքննության մասով առանձին սահմանվել են նաև անչափահաս մեղադրյալի հարցաքննության առանձնահատկությունները: Սակայն Նախագծում նույնպես անտեսվել են մյուս քննչական գործողությունների առանձնահատկությունները, որոնց կարող է մասնակից լինել անչափահասը՝ առերեսում, քննչական փորձարարություն, խուզարկություն և այլն: Իհարկե, այս խնդիրը պրակտիկայում հաղթահարվում է օրենքի անալոգիայի միջոցով, բայց օրենսդրական նման բացը չի կարող ապահովել անչափահաս անձի իրավունքների և օրինական շահերի պատշաճ պաշտպանությունը: Այլ կերպ ասած՝ քննչական գործողություններն ընդհանրապես ունեն կարգավորում, որն ապահովում է անձի իրավունքներն ու օրինական շահերը, սակայն կոնկ-

րետ կարգավորում չունեն անչափահասների մասով, ինչը չի բխում անչափահասի շահերից: Ըստ մեզ՝ անհրաժեշտ է առանձին չափորոշիչներ սահմանել անչափահասների մասնակցությամբ իրականացվող բոլոր քննչական գործողությունների համար: Ինչպես գիտենք՝ հարցաքննվել կարող են դատավարական տարբեր կարգավիճակ ունեցող սուբյեկտներ: Անչափահասների տարիքային հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունները հանգեցնում են նրանց համար դատավարական լրացուցիչ երաշխիքներ սահմանելուն, այսինքն՝ հարցաքննության հատուկ կանոններ նախատեսելուն: Այդ առանձնահատկությունները վերաբերում են՝

- քննչական գործողության կատարման համար անչափահասին կանչելու կարգին,
- հարցաքննության իրականացման դատավարական կարգին,
- հարցաքննությանը մասնակցող անձանց շրջանակին,
- պաշտպանի պարտադիր մասնակցությանը:

Անչափահասների հարցաքննության համար առանձին կանոնների սահմանումը նպատակ է հետապնդում՝

- 1) ապահովել նշված անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը,
- 2) ապահովել ապացուցման ենթակա հանգամանքների մասին ճշգրիտ տեղեկությունների ստացումը,
- 3) պահպանել հարցաքննության միջոցով ստացված ապացույցների իրավաբանական ուժը,
- 4) ստեղծել անհրաժեշտ պայմաններ հարցաքննությանը մասնակցող բոլոր անձանց համար,
- 5) պաշտպանել անչափահասին հարցաքննությունն իրականացնող պաշտոնատար անձի անօրինական գործողություններից:

Քրեական դատավարության օրենսգիրքն անչափահասի հարցաքննության տևողության վերաբերյալ սահմանում է առանձնահատկություն, մասնավորապես՝ հարցաքննությունը չի կարող տևել անընդմեջ երկու ժամից ավելի: Օրվա մեջ անչափահասի հարցաքննության

ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել վեց ժամը: Անհրաժեշտ է նշել, որ անչափահասի հարցաքննությունը պետք է ընդհատվի յուրաքանչյուր պահի, եթե շարունակությունը կարող է վնասել նրա առողջությունը: Հարցաքննության ընդհատման դեպքում հարցաքննության արձանագրության մեջ պետք է նշել պատճառները: Օրենսդրական այսպիսի կարգավորումն արդարացված է, քանի որ բացառեց երկարաժամկետ հարցաքննություն կատարելու հնարավորությունը, ինչը հոգեբանական լուրջ ներգործություն էր հարցաքննվող անձի նկատմամբ:

Քրեական դատավարության օրենսգիրքը հարցաքննության ընթացքում մանկավարժի մասնակցություն նախատեսում է մինչև 16 տարեկան վկայի և տուժողի հարցաքննության դեպքում: Ըստ Ս.Գ. Լյուբիչևի՝ մանկավարժի մասնակցությունը հնացած մոտեցում է և ժառանգություն այն ժամանակներից, երբ դպրոցներում և այլ նմանատիպ հաստատություններում բացակայում էին մասնագիտացված հոգեբաններ, և իբրև հոգեբաններ նշանակվում էին այն անձինք, ովքեր աշխատում էին երեխաների հետ և անցել էին համապատասխան վերապատրաստումներ: Արդարացված ենք համարում Նախագծում տեղ գտած այն կարգավորումը, որ մանկավարժը փոխարինվեց հոգեբանով: Իսկ, ըստ Ն. Կուրմաևայի՝ հոգեկան խնդիրներ ունեցող անչափահասների քննչական գործողություններին պետք է ներգրավել ոչ թե մանկավարժին կամ էլ հոգեբանին, այլ՝ հոգեբույժին: Նմանատիպ կարգավորում ունի քրեական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածը, այն է՝ ...վկայի հոգեկան կամ այլ ծանր հիվանդության առկայության դեպքում վկայի հարցաքննությունը կատարվում է բժշկի թույլտվությամբ և ներկայությամբ: Այս դրույթն անհրաժեշտ է զարգացնել և տարածել նաև դատավարական կարգավիճակ ունեցող մյուս սուբյեկտների մասով:

Ըստ մեզ՝ քրեական դատավարության օրենսգրքի թերություններից մեկն այն է, որ օրենսգիրքը նախատեսում է մանկավարժի, այլ ոչ թե՝ հոգեբանի մասնակցությունը, այն էլ՝ միայն 16 տարին չլրացած վկայի և տուժողի հարցաքննության դեպքում: Մինչդեռ, կարծում ենք՝ հոգեբանի մասնակցությունը պետք է պար-

տադիր լինի նաև 16 տարին չլրացած կասկածյալի կամ մեղադրյալի համար, որովհետև նշված անձինք, իրենց տարիքային առանձնահատկությամբ պայմանավորված՝ ի վիճակի չեն պաշտպանելու իրենց իրավունքներն ու օրինական շահերը, զերծ մնալու հոգեկան և բացասական ներգործությունից: Անչափահասի նկատմամբ դատավարական գործողություններ իրականացնելիս հոգեբանի մասնակցությունը նրանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության լրացուցիչ երաշխիք է: Տվյալ դեպքում՝ դատավարության սուբյեկտներին լրացուցիչ իրավունք-երաշխիքով օժտելը չպետք է պայմանավորված լինի սուբյեկտի դատավարական կարգավիճակով, այլ պետք է բխի վերջինիս անչափահաս լինելու հանգամանքից: Ինչպես անչափահաս տուժողը և վկան, այնպես էլ կասկածյալը և մեղադրյալը ունեն հոգեբանի օժանդակության անհրաժեշտությունը: Ըստ մեզ՝ որևիցե կերպ արդարացված չէ օրենսդրի կողմից նման տարբերակումը:

Անդրադառնալով անչափահաս տուժողի կարգավիճակին՝ քննչական գործողությունների ընթացքում, պետք է փաստել, որ, ինչպես կասկածյալի, մեղադրյալի դեպքում, այստեղ ևս իրավական վակուում է նկատվում: Խնդիրը շրջանցված է նաև Նախագծում: Գործող օրենսդրության իմաստով՝ անչափահաս տուժողի առանձնահատկությունն իր արտացոլումն է գտել միայն հարցաքննություն քննչական գործողությունը կարգավորող իրավական նորմերում:

Այժմ անդրադառնանք անչափահաս վկայի մասնակցությամբ իրականացվող քննչական գործողություններին: Պետք է նշել, որ անչափահաս վկան վարույթում հանդես է գալիս իր օրինական ներկայացուցչի միջոցով: ՀՀ քր. դատ. օր.-ի 87-րդ հոդվածն անդրադարձել է վկայի օրինական ներկայացուցչի մասնակցությանը քննչական կամ այլ դատավարական գործողություններին, այսպես՝ 14 տարին չլրացած վկայի օրինական ներկայացուցիչը, իսկ քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ՝ նաև առավել բարձր տարիքի անչափահասի օրինական ներկայացուցիչն իրավունք ունի իմանալու ներկայացվող անձին քրեական վարույթն իրականացնող մարմին կանչելու մասին և մասնակցելու քննչա-

կան կամ այլ դատավարական գործողությանը՝ ուղեկցելով նրան:

Վկայի դեպքում օրինական ներկայացուցիչներն ունեն դատավարական լիարժեք իրավունքներ միայն այն դեպքում, երբ խոսքը 14 տարին չըրացած անչափահասի մասին է: 14 տարեկանից մեծ վկայի օրինական ներկայացուցիչը կարող է մասնակցել քննչական գործողություններին կամ ուղեկցել վկային միայն վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ: Օրենսդիրը չի նշում այն չափանիշները, որոնք կարող են հիմք հանդիսանալ նման թույլտվություն տալու կամ չտալու համար: Սա պրակտիկայում կարող է հանգեցնել որոշակի չարաշահումների: Անհրաժեշտ է հստակ սահմանել չափորոշիչների այնպիսի խումբ, որի վրա հենվելիս հնարավոր կլինի նման որոշում կայացնել՝ ապահովելով վերջինիս հիմնավորվածությունը:

Վկայի դեպքում ՀՀ քր. դատ. օր.-ի 86-րդ հոդվածը նախատեսում է վկայի իրավունքը՝ քրեական վարույթն իրականացնող մարմին ներկայանալ փաստաբանի հետ: Մեր կարծիքով՝ վկայի հարցաքննության ընթացքում փաստաբանի ներկայությունն ունի ձևական բնույթ, քանի որ փաստաբանն իրավունք չունի հարցեր տալու կամ պատասխանները մեկնաբանելու: Նման սահմանափակումը փոքրացնում է փաստաբանի՝ տուժողներին և վկային համապատասխան և արդյունավետ իրավաբանական օգնություն ցույց տալու հնարավորությունը:

Ինչպես վերը նշվեց՝ վկան իր շահերը կարող է ներկայացնել փաստաբանի միջոցով: Սակայն այս իրավունքը դառնում է անիրագործելի դրամական միջոցների բացակայության դեպքում:

Թեև Փաստաբանության մասին ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի վերլուծությունը ցույց է տալիս, որ որոշակի կատեգորիայի անչափահասներ պետք է օգտվեն անվճար իրավաբանական օգնության իրավունքից (1-ին և 2-րդ խմբի հաշմանդամները, առանց ծնողական խնամքի մնացած երեխաները, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձինք, փախստականները, Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր ապաստան ստացածները, հոգեբուժական

կազմակերպությունում բուժվող, հոգեկան խանգարումներ ունեցող անձինք, դատապարտյալները), սակայն մեր բարձրագրած խնդրի լուծումը սույն կարգավորման արդյունքով, իհարկե, չի ապահովվում:

Կատարված հետազոտության արդյունքով հանգել ենք մի շարք հետևությունների. կարծում ենք՝ ինչպես անչափահաս կասկածյալի և մեղադրյալի դեպքում պետք է պարտադիր դառնա հոգեբանի մասնակցությունը, այնպես էլ տուժողի և վկայի դեպքում պետք է պարտադիր դառնա փաստաբանի մասնակցությունը: Դատավարության անչափահաս սուբյեկտի մասնակցությամբ քննչական գործողությանը փաստաբանի ներկայության ձևական բնույթից էլ խուսափելու համար անհրաժեշտ ենք համարում փաստաբանին օժտել քննչական գործողության ընթացքում իր ակտիվ դերն ապահովող իրավունքներով, քանի որ անչափահասին լրացուցիչ իրավունքով օժտելը պայմանավորված է նրա ոչ այնքան դատավարական կարգավիճակով, որքան անչափահաս լինելու հանգամանքով:

Կարծում ենք՝ օրենսդրորեն անհրաժեշտ է սահմանել հստակ կառուցակարգեր, որոնք անչափահաս տուժողի կամ վկայի անվճարունակության դեպքում կապահովեն նրա կողմից իրավաբանական օգնության իր իրավունքի փաստացի իրացումը:

Պրակտիկայում խնդիրներ չառաջանալու նկատառումով՝ քննչական գործողությունների կատարման համար օրենքում սահմանված ընդհանուր կանոններում պետք է տարանջատել և նշել այն առանձնահատկությունները, որոնք յուրահատուկ են անչափահասի համար: Ըստ մեզ՝ անչափահաս վկայի և տուժողի մասնակցությամբ հարցաքննության իրականացման ժամկետները պետք է տարածել մյուս քննչական գործողությունների վրա: Դրանց կատարման ընթացքում անչափահասը նույնպես չի կարող երկար պահվել վարույթն իրականացնող մարմնում:

Հոգեբան-փաստաբան-օրինական ներկայացուցիչ եռամիասնական շղթան պետք է ապահովվի անչափահասների մասնակցությամբ բոլոր քննչական գործողություններ կատարելիս:

**ՍԵՐԺ ՌՈՒՇԱՆՅԱՆ**

Հայաստանում ֆրանսիական համալսարանի  
Իրավաբանական ֆակուլտետի ուսանող

**ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԻՑ ԿԱՍՈՎԻՆ ՀՐԱԺԱՐՈՒՄԸ՝  
ԱՎԱՐՏՎԱԾ ՀԱՆՑԱՓՈՐՁԻ ԴԵՊԵՈՒՄ**

Իրավաբանական գրականության մեջ ընդհանուր մոտեցում առկա չէ թե՛ հանցագործությունից կամովին հրաժարման հասկացության վերաբերյալ, թե՛ բնութագրող հիմնական հատկանիշների և թե՛ այն խնդրի շուրջ, թե արդյոք հնարավոր է հանցագործությունից կամովին հրաժարում ավարտված հանցափորձի դեպքում, թե՛ ոչ:

Ըստ Ի. Օ. Շիշովի՝ հանցագործությունից կամովին հրաժարում համարվում է դադարեցումն սկսված հանցավոր գործունեության նախապատրաստության կամ հանցափորձի փուլում:<sup>1</sup> Այս տեսակետին համամիտ է նաև Վ.Դ. Իվանովը, ում կարծիքով՝ կամովին հարաժարումը հրաժարումն է անձի կողմից ավարտված հանցագործություն կատարելուց նախապատրաստության կամ հանցափորձի փուլում:<sup>2</sup> Այլ հեղինակներ, ինչպիսիք են Ն.Ֆ. Կուզնեցովը, Է.Ֆ. Պոբեգայլոն, Վ.Պ. Կաշեպովը, կամովին հրաժարում ճանաչում են անձի կողմից նախապատրաստական գործողությունների կամ անմիջականորեն հանցանք կատարելուն ուղղված գործողությունների (անգործությունների) կամովին և վերջնական դադարեցումը, եթե անձը գիտակցել է հանցագործությունն ավարտին հասցնելու հնարավորությունը:<sup>3</sup>

Հանցագործությունից կամովին հրաժարման օբյեկտիվ կողմն այն է, որ կատարողը դադարեցնում է հանցավոր գործողության կատարումը, և կատարողի կողմից հանցագործությունից կամովին հրաժարում ճանաչելու համար բավարար է ձեռնպահ մնալ հանցագործությունը մինչև վերջ կատարելուց:

Հանցագործությունից կամովին հրաժարման սուբյեկտիվ կողմը բնութագրվում է այն հանգամանքով, որ անձը, ով կամովին և վերջնականապես հրաժարվել է հանցագործության կատարումից (կամային հատկանիշ), գիտակցի հնարավորությունը՝ հանցագործությունը մինչև վերջ հասցնելու (մտավոր հատկանիշ):<sup>4</sup>

Հանցագործությունից կամովին հրաժարման ինստիտուտի սոցիալական բնույթն այն է, որ անձն սկսում է կատարել հանցագործությունը, բայց այս կամ այն պատճառով դադարեցնում է հանցավոր գործունեությունն իր սեփական կամքով և, հետևաբար՝ հանցավոր հետևանք առաջ չի գալիս: Հասարակության համար որպես արդյունք չի վնասվում այս կամ այն հասարակական հարաբերությունը:<sup>5</sup> Ունենալով նպատակ կանխելու հանցագործություններ՝ քրեաիրավական այս հնարավորությունը խթանում է անձին՝ հետ կանգնելու հանցագործությունն ավարտին հասցնելուց: Ունենալով հանցագործությունների նախազգուշացման և կանխման մեծ նշանակություն՝ պետությունը, այս քրեաիրավական ինստիտուտը ներդնելով, կառուցում է «ոսկե կամուրջ նահանջելու համար»:<sup>6</sup>

«Հ նախկին քրեական օրենսգրքում հանցագործությունից կամովին հրաժարման ինստիտուտի էությունը բացահայտված չէր, չնայած նոր քրեական օրենսգրքում այս ինստիտուտն առավել համակարգային կարգավորում է ստացել՝ այնուամենայնիվ, հիշյալ ինստիտուտը միանշանակ չի ընկալվում իրավագիտական շրջանակների կողմից: Քրեական օրենս-

ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ № 98 2017

<sup>1</sup> Տե՛ս: Комментарий к УК РФ.– М., 1998. С. 88.  
<sup>2</sup> Տե՛ս: Комментарий к УК РФ.–РнД., 1996. С. 110.  
<sup>3</sup> Տե՛ս: Учебник уголовного право. Общая часть.– М., 1996. С. 177; Уголовное право России.– М., 1998. С. 221.  
<sup>4</sup> Տե՛ս: Ситникова А. И. Приготовление к преступлению и покушение на преступление. М.: Ось-89, 2006. С. 123-124.  
<sup>5</sup> Տե՛ս: Козлов А. П. Учение о стадиях преступления. СПб., 2002. С. 308.  
<sup>6</sup> Տե՛ս: Франц фон Лист. Учебник уголовного права. М., 1903. С. 321.

գրքում բացակայում է հստակ կարգավորումն այն մասով, թե հնարավոր է արդյոք հանցագործությունից կամովին հրաժարում ավարտված հանցափորձի դեպքում, թե ոչ, ինչի պատճառով էլ իրավակիրառ պրակտիկայում առկա չէ միատեսակ կիրառություն:

Ըստ ՀՀ քրեական օրենսգրքի 36-րդ հոդվածի առաջին մասի՝ հանցագործությունից կամովին հրաժարում է համարվում անձի կողմից հանցագործության նախապատրաստությունը կամ հանցափորձը կամ անմիջականորեն հանցանք կատարելուն ուղղված գործողությունը (անգործությունը) դադարեցնելը, եթե անձը գիտակցել է հանցագործությունն ավարտին հասցնելու հնարավորությունը:

Անվիճելի է քրեական իրավունքի տեսության մեջ այն տեսակետը, որ հանցագործությունից կամովին հրաժարում հնարավոր է չավարտված հանցափորձի դեպքում, երբ անձը չի իրականացրել բոլոր գործողությունները (անգործությունը) հանցանքն ավարտելու համար և գիտակցում է, որ հանցագործությունն ավարտին հասցնելու համար անհրաժեշտ է շարունակել արարքի կատարումը կամ կատարել նոր արարք, սակայն իր կամքով դադարեցնում է համապատասխան գործողությունը կամ անգործությունը: Իրավաբանական գրականության մեջ վեճերի տեղիք է տվել այն հարցը, թե արդյոք հնարավոր է հանցագործությունից կամովին հրաժարում ավարտված հանցափորձի դեպքում, երբ անձը կատարել է բոլոր անհրաժեշտ գործողությունները հանցագործությունը մինչև վերջ հասցնելու համար, սակայն չի ավարտել իր կամքից անկախ հանգամանքներով: ՀՀ իրավակիրառ պրակտիկայում ավարտված հանցափորձի դեպքում լիովին չի կիրառվում կամովին հրաժարման ինստիտուտը: Այսպիսով՝ տեսական հարթությունում ուսումնասիրենք կամովին հրաժարման ինստիտուտը ավարտված հանցափորձի դեպքում:

Որոշ քրեագետներ, ինչպիսիք են Ն.Կ. Սեմերնևան, Ռ.Լ. Գաբդրախմանովը, ունեն այն տեսակետը, որ ավարտված հանցափորձը բա-

ցառում է հնարավորությունը՝ հանցագործությունից կամովին հրաժարվելու, քանի որ արարքում արդեն առկա է հանցագործության օբյեկտիվ կողմը:<sup>7</sup> Ըստ Մ.Դ. Շարգորոդսկու՝ հանցագործությունից կամովին հրաժարում հնարավոր չէ ավարտված հանցափորձի դեպքում, և նա իր աշխատությունում տարանջատում է հանցագործությունից կամովին հրաժարումն այն դեպքերից, երբ անձը հանցավոր հետևանքը կանխելու համար ձեռնարկում է որոշակի միջոցներ, օրինակ՝ թունավորելով անձին՝ հետո տալիս է հակաթույն, նաև տարանջատում է այն դեպքերից, երբ անձը հրաժարվում է կրկնելուց արարքը, օրինակ՝ անձը, չկարողանալով դիպուկ կրակել ինչ-որ մեկին, վրիպում է և, ունենալով հնարավորություն նորից կրակելու՝ հրաժարվում է: Այս դեպքերում, ըստ հեղինակի՝ հանցագործությունից կամովին հրաժարում չկա, և անձը պետք է ենթարկվի քրեական պատասխանատվության:<sup>8</sup> Ըստ Ի.Ս. Տիշկևիչի և Կ.Ա. Պանկոյի ընդհանուր կարծիքի՝ ավարտված հանցափորձի դեպքում հանցագործությունից կամովին հրաժարում բացառվում է, քանի որ անձի կողմից արդեն կատարվել են այն բոլոր գործողություններ, որոնք նա համարել է անհրաժեշտ՝ մտադրությունն իրականացնելու համար: Ըստ հեղինակների՝ հանցագործությունից կամովին հրաժարումը հրաժարումն է սկսված հանցագործությունը շարունակելուց: Սրա բովանդակությունն այն է, որ անձն իր սեփական նախաձեռնությամբ դադարեցնում է հետագա հանցավոր գործողությունները: Եվ հրաժարում հնարավոր է միայն այն դեպքում, երբ անձի կողմից արդեն կատարված արարքը դեռ չի կարող հանցավոր հետևանքի հանգեցնել:<sup>9</sup>

Վերոշարադրյալ դիրքորոշումներն անհիմն նեղացնում են հանցագործությունից կամովին հրաժարման ինստիտուտը և հեղինակների կողմից համակարգային չեն դիտարկվում այս ինստիտուտի նպատակի հետ, այն է՝ կանխել հանցագործությունները և վերջիններիս հանրորեն վտանգավոր հետևանքները: Այլ հեղինակներ,

<sup>7</sup> Տե՛ս: Уголовное право. Общая часть. - М., 1997. С. 316.

<sup>8</sup> Տե՛ս: Шаргородский м.д. вина и наказание в советском уголовном праве М 1945 с 27-28.

<sup>9</sup> Տե՛ս: Тишкевич И. С. Указ. С. 226; Панько К. А. Добровольный отказ от преступления по советскому уголовному праву. Воронеж, 1975. С 69-70.

ինչպիսիք են Ա.Բ. Նաումովը, Օ.Ֆ. Շիշովը, Բ.Վ. Չդրավովիսլովը, հաստատում են այն տեսակետը, որ ավարտված հանցափորձի դեպքում հանցագործությունից կամովին հրաժարում հնարավոր չէ՝ բացառությամբ հազվագյուտ դեպքերի, երբ կատարված հանցավոր արարքի և հանցավոր հետևանքի միջև առկա է ժամանակային խզում, որի ընթացքում անձը կարող է կանխել հանցավոր հետևանքի վրա հասնելը:<sup>10</sup> Որոշ հեղինակներ կարծում են, թե ավարտված հանցափորձի դեպքում, երբ հանցափորձ կատարողը կատարել է բոլոր գործողությունները, բայց հանցավոր հետևանքը կանխելու հնարավորությունն օբյեկտիվորեն չի վերացել, այս դեպքում հանցագործությունից կամովին հրաժարումը կարող է դրսևորվել միայն անձի կողմից ակտիվ գործողություններով, այն է՝ իր իրական ակտիվ վարքագծով կանխել այդ հետևանքը: Մնացյալ դեպքերում հանցագործությունից կամովին հրաժարում ավարտված հանցափորձի դեպքում հնարավոր չէ:<sup>11</sup>

Գրեթե նույնատեսակ մոտեցում է արտահայտել է նաև ՀՀ Վճռաբեկ դատարանը թիվ ԵԱՆԴ/0110/01/12 քրեական գործով 28.08.2015թ. կայացրած վճռում. «...Ավարտված հանցափորձի պարագայում, երբ անձը կատարել է բոլոր անհրաժեշտ գործողությունները հանցագործությունը մինչև վերջ հասցնելու համար, սակայն չի ավարտել իր կամքից անկախ հանգամանքներով, կամովին հրաժարումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ հանրորեն վտանգավոր հետևանքի՝ մահվան առաջացման համար պահանջվում է որոշակի ժամանակահատված, և անձն իր ակտիվ վարքագծով կանխում է այդ հետևանքը: Ընդ որում՝ անհրաժեշտ է, որ մահվան առաջանալը կամ չառաջանալը պայմանավորված լինի անձի կամքով, վերջինս պահպանի վերահսկողությունն արարքի և հետևանքի միջև պատճառական կապի զարգացման ողջ ընթացքի նկատմամբ, հնարավորություն ունենա ցանկացած պահի միջամտելու և կանխելու մահվան վրա հասնելը (օրինակ՝ դանդաղ ներգործող թույն տալուց հետո տալիս է հակաթույն,

սպանելու նպատակով տունը հրդեհելուց հետո մարում է հրդեհը՝ նախքան վերջինս կհասցներ տարածվել ու փրկում է տուժողի կյանքը և այլն):

Հակառակ պարագայում, երբ բոլոր անհրաժեշտ գործողությունները կատարելուց հետո համապատասխան վտանգավոր հետևանքների առաջանալը կամ չառաջանալը դուրս է հանցավորի վերահսկողության շրջանակներից, պայմանավորված է ոչ միայն նրա կամքով, այլև նրա կամքից անկախ բազմաթիվ այլ հանգամանքներով (օրինակ՝ ժամանակին ցուցաբերված բժշկական միջամտության շնորհիվ կյանքը փրկելու դեպքում), կամովին հրաժարումը բացառվում է:

Վերոշարադրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սպանության ավարտված և չհաջողված հանցափորձից հետո հանցանքն ավարտին հասցնելուց հրաժարվելը, նույնիսկ եթե հանցավորն իրական հնարավորություն է ունեցել հասցնելու մինչև վերջ, չի կարող հանցագործությունից կամովին հրաժարում համարվել: Տվյալ դեպքում փաստացի կատարված արարքն արդեն իսկ պարունակում է ավարտված հանցափորձի բոլոր օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները, հետևաբար՝ անձը չի կարող ազատվել իր դիտավորության մեջ ընդգրկված հանցագործության փորձի համար քրեական պատասխանատվությունից: Չհաջողված հանցափորձից հետո հանցանքն ավարտին հասցնելուց հրաժարվելը, գործով առկա այլ հանգամանքների հետ մեկտեղ (օրինակ՝ օգնություն կանչել, հիվանդանոց տեղափոխել և այլն), կարող է գնահատվել որպես մեղմացնող հանգամանք և հաշվի առնվել դատարանի կողմից պատիժ նշանակելիս...»:

Վճռաբեկ դատարանը, համարելով, որ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր, անհրաժեշտ է համարել արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար, սակայն այս դիրքորոշում-

<sup>10</sup> Տե՛ս: Комментарий к УК РФ.– М., 1996. С. 48; Учебник уголовного право. Общая часть.– М., 1994. С. 280-281.

<sup>11</sup> Տե՛ս: Уголовное право России / Под ред. В. Н. Кудрявцева, В. В. Лунеева, А. В. Наумова. М., 2006. С. 248.; Уголовное право России.– Ред. Л. Л. Кругликов. М., 2005. С. 249.

ները համակարգային կարգավորում չեն տվել այս ինստիտուտին: Վճռաբեկ դատարանը, արտահայտելով այսպիսի դիրքորոշում, զգալիորեն նեղացրել է հանցագործությունից կամովին հրաժարման ինստիտուտի էությունը՝ հանցագործությունից կամովին հրաժարումը հնարավոր համարելով միայն այն դեպքում, երբ հանրորեն վտանգավոր հետևանքի առաջացման համար պահանջվում է որոշակի ժամանակահատված, և անձն իր ակտիվ վարքագծով կանխում է այդ հետևանքը: Եվ իր դիրքորոշման մեջ մեկ հանգամանք ևս պարտադիր է համարել, որ այդ ամբողջ ընթացքում անձը պետք է պահպանի վերահսկողությունն արարքի ու հետևանքի միջև պատճառական կապի զարգացման ողջ ընթացքի նկատմամբ, հակառակ պարագայում, ըստ դատարանի դիրքորոշման՝ բացառվում է կամովին հրաժարումը:

Այսպիսով՝ ըստ Վճռաբեկ դատարանի վերոնշյալ որոշման՝ զգալիորեն անհիմն սահմանափակվել են հանցագործությունից կամովին հրաժարման ինստիտուտի կիրառության շրջանակները, և այն դեպքերում, երբ հետևանքների առաջանալը կամ չառաջանալը դուրս է հանցավորի վերահսկողության շրջանակներից, պայմանավորված է *ոչ միայն նրա կամքով*, այլև *նրա կամքից անկախ այլ հանգամանքներով*, հանցագործությունից կամովին հրաժարումը բացառվում է: Այսինքն՝ եթե անձը, օրինակ՝ սպանության նպատակով դանակով հարվածում է ինչ-որ մեկի կյանքի համար վտանգավոր օրգանի, սակայն, չցանկանալով տուժողի մահը՝ կամովին, վերջնականապես դադարեցնում է գործողությունը՝ գիտակցելով, որ հնարավորություն ունի ավարտին հասցնելու հանցագործությունը, և **առավել ծանր հետևանքը կանխում է՝** նրան հասցնելով հիվանդանոց, որտեղ բժշկական միջամտությամբ փրկում են նրան, այս պարագայում, ըստ Վճռաբեկ դատարանի դիրքորոշման՝ չի դիտվի կամովին հրաժարում, քանի որ պայմանավորված է ոչ միայն նրա կամքով, այլև նրա կամքից անկախ այլ հանգամանքներով՝ ժամանակին ցուցաբերված բժշկական միջամտությամբ:

Վճռաբեկ դատարանը վերոնշյալ որոշման դիրքորոշումների մեջ ևս մեկ անհիմն սահմանափակում է արտահայտել հանցագործությունից կամովին հրաժարման ինստիտուտի կիրառության շրջանակների վերաբերյալ. այն անձը, ով չհաջողված հանցափորձից հետո հանցանքն ավարտին հասցնելուց հրաժարվել է, չի կարող հանցագործությունից կամովին հրաժարում համարվել՝ նույնիսկ այն դեպքում, երբ հանցավորն իրական հնարավորություն է ունեցել հասցնելու մինչև վերջ: Այսինքն՝ եթե անձը, օրինակ՝ կրակում է ինչ-որ մեկի ուղղությամբ նրան սպանելու դիտավորությամբ, բայց հաջողվում է միայն մարմնական վնասվածք պատճառել, և դրանից հետո կամովին, վերջնականապես դադարեցնում է գործողությունը՝ գիտակցելով, որ հնարավորություն ունի ավարտին հասցնելու հանցագործությունը, և **հրաժարվում է նորից կրկնելուց**, այս պարագայում նույնպես, ըստ Վճռաբեկ դատարանի դիրքորոշման՝ չի դիտվի կամովին հրաժարում, քանի որ, ըստ դիրքորոշման՝ չհաջողված հանցափորձից հետո հանցանքն ավարտին հասցնելուց հրաժարվելը կարող է գնահատվել միայն որպես մեղմացնող հանգամանք և հաշվի առնվել դատարանի կողմից պատիժ նշանակելիս:

Համամիտ չլինելով իրավաբանական գրականությունում առկա և Վճռաբեկ դատարանի կողմից տրված նշված դիրքորոշումներին՝ համարում են, որ հանցագործությունից կամովին հրաժարում հնարավոր է նաև վերոնշյալ դեպքերում, այն է՝ երբ անձը կանխում է առավել ծանր հետևանքը կամ չհաջողված հանցափորձի դեպքում հրաժարվում է կրկնելուց: Հասնելով այս ինստիտուտի ներդրման ակունքներին՝ պետք է փաստենք, որ այդ ինստիտուտը պետությունների կողմից ներդրվել է հանցագործություններ կանխելու համար, ինչը պետք է խթան հանդիսանա հանցավոր արարք կատարած անձի համար հետ կանգնելու հանցագործությունն ավարտին հասցնելուց՝ ստեղծելով նրա համար «Ոսկե կամուրջ նահանջելու համար»:

Հանցագործությունից կամովին հրաժարման դեպքում հանցագործություն կատարելու մտադրությունը և, հետևապես՝ արարքի հանրային վտանգավորությունը, ինչպես նաև պաշտպանվող հասարակական հարաբերությանը սպառնացող վտանգը, վերանում են: Ոչ միայն անձն է դադարում լինելուց հանրորեն վտանգավոր, այլև՝ նրա արարքը: Փոխվեց անձը, փոխվեց և վարքագիծը, այս պարագայում պետք է փոխվի նաև իրավական գնահատա-

նախադրությունը և, հետևապես՝ արարքի հանրային վտանգավորությունը, ինչպես նաև պաշտպանվող հասարակական հարաբերությանը սպառնացող վտանգը, վերանում են: Ոչ միայն անձն է դադարում լինելուց հանրորեն վտանգավոր, այլև՝ նրա արարքը: Փոխվեց անձը, փոխվեց և վարքագիծը, այս պարագայում պետք է փոխվի նաև իրավական գնահատա-

կանը և այդ վարքագծին, և այդ արարքը կատարած անձին: Այս ինստիտուտը երկու կարևոր գործառույթ է իրականացնում. առաջինը՝ պաշտպանում է հասարակության անդամներին հնարավոր հանցագործություններից, իսկ երկրորդը՝ նվազեցնում կամ վերացնում է հանցավոր արարք կատարած անձի արարքների հանրային վտանգավորությունը: Մենք պետք է գիտակցենք, թե մեզ համար ինչպիսի արժեքներ են առավել կարևոր, այսպիսով՝ ունենալով մի իրավիճակ, որտեղ կշեռքի նժարի մի կողմում կարող է լինել մարդու կյանքը, իսկ մյուս կողմում՝ հանցավոր արարք կատարած անձին քրեական պատասխանատվության ենթարկելը. ավելորդ է անգամ նշել, որ մեր կողմից հիմնարար սխալ կլինի նժարի մյուս կողմը ծանրացնելը: Ըստ Վճռաբեկ դատարանի վերոնշյալ դիրքորոշման՝ մենք, փաստորեն, ծանրացնում ենք հանցավոր արարք կատարած անձին քրեական պատասխանատվության ենթարկելու նժարը, ինչով նույնչափ թեթևանում է այն հասարակական հարաբերության կարևորությունը, որը կարող է պաշտպանվել այս ինստիտուտի լրիվ ներդրմամբ, այն է՝ հնարավոր համարել հանցագործությունից կամովին հրաժարում նաև այն դեպքում, երբ անձը կանխում է առավել ծանր հետևանքը կամ չհաջողված հանցափորձի դեպքում հրաժարվում է կրկնելուց: Վերցնենք, դիցուք, մի օրինակ, երբ անձը հայտնվել է հետևյալ իրավիճակում. դիտավորություն ունենալով սպանել ինչ-որ մեկին՝ կրակել է այդ անձի ուղղությամբ, սակայն վրիպել է, և չի հաջողվել սպանել նրան. միայն մարմնական վնասվածք է հասցվել: Այս պարագայում, եթե չհաջողված հանցափորձի դեպքում հանցագործությունից կամովին հրաժարման ինստիտուտը չգործի, ապա անձն ունենում է երկու ուղի. առաջինը՝ հասնել իր մտադրության, այն է՝ սպանել տուժածին, իսկ երկրորդ ուղին՝ դադարեցնել հանցավոր արարքը հանցափորձի փուլում:

Այսպիսով՝ ավարտված հանցագործության և հանցափորձի միջև ընտրության դեպքում անձը չունի իր մտադրությունից հետ կանգնելու լուրջ պատճառ՝ այն դեպքում, երբ երկու ելքի պարագայում էլ պատժի ժամկետների միջև կարող է տարբերությունն էական չլինել: Ըստ իս՝ անձը, գիտակցելով քրեական պատասխա-

նատվության ենթարկվելու դեպքում պատժի ժամկետների միջև առկա ոչ էական տարբերությունը, հետ չի կանգնի իր հանցավոր մտադրությունից, ինչը չենք կարող ասել, երբ այս իրավիճակում գործի հանցագործությունից կամովին հրաժարման ինստիտուտը, այս պարագայում վերոնշյալ օրինակում նշված իրավիճակում անձը կունենա երկու էականորեն տարբեր ուղիներ. առաջինը՝ հասնել իր մտադրության, այն է՝ սպանել տուժածին, իսկ երկրորդ ուղին՝ դադարեցնել հանցափորձի փուլում՝ կամովին հրաժարվելով հանցագործությունից: Այստեղ իրավիճակն էականորեն փոխվում է. անձը գիտակցում է, որ, եթե չշարունակի իր հանցավոր արարքը, ապա կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից կամ պատասխանատվության ենթարկվել իր կատարած այն արարքի համար, որը փաստացի այլ հանցազան է պարունակում, ներկայացված օրինակի պարագայում՝ մարմնական վնասվածք հասցնելու համար, այլ ոչ թե սպանության փորձի: Եվ վստահորեն կարող եմ փաստել այն, որ այս իրավիճակում հանցավոր արարք կատարած անձը ունի շատ լուրջ պատճառներ, որոնց շնորհիվ կարող է հետ կանգնել իր հանցավոր մտադրությունից: Եվ ընդհանուր հետևությունն այն է, որ հանցագործությունից կամովին հրաժարման ինստիտուտի լրիվ կիրառմամբ մենք կարող ենք հասարակությանը պաշտպանել հնարավոր հանցագործություններից:

Համակարգային ուսումնասիրելով իրավաբանական տեսության մեջ առկա տարածայնությունները, ՀՀ քրեական օրենսգրքում առկա կարգավորումները և Վճռաբեկ դատարանի վերոնշյալ դիրքորոշումները՝ կարող ենք եզրակացնել, որ.

Հանցագործությունից կամովին հրաժարման վերաբերյալ ավարտված հանցափորձի դեպքում բացակայում են միասնական մոտեցումները. քրեագետների մի խումբ այն տեսակետի կողմանակիցն է, որ առհասարակ չի կարող լինել հանցագործությունից կամովին հրաժարում ավարտված հանցափորձի դեպքում: Քրեագետների մյուս խումբը համարում է, թե հնարավոր է, սակայն որոշակի հանգամանքների դեպքում, և տարբեր հեղինակներ կան նեղացնում, կամ լայնացնում են այդ հանգամանքների շրջանակը:



Քրեական օրենսգրքում բացակայում է հստակ կարգավորումը՝ այն մասով, թե հնարավոր է արդյոք հանցագործությունից կամովին հրաժարում ավարտված հանցափորձի դեպքում, թե՛ ոչ, ինչի պատճառով էլ իրավակիրառ պրակտիկայում բացակայում է միատեսակ մեկնաբանությունը:

Վճռաբեկ դատարանը, փորձելով ապահովել օրենքի միատեսակ կիրառությունը, արտահայտել է ոչ համակարգային դիրքորոշումներ, այդ պատճառով էլ՝ ամբողջապես չի բացահայտվել ինստիտուտի էությունը, և անհիմն նեղացվել է ինստիտուտի կիրառությունը:

Հիմնվելով իրավաբանական գրականությունում առկա և իմ առաջարկած դիրքորոշումների վրա և համոզված լինելով վերոշարադրյալ խնդիրների լուծման գործնական նշանակության մեջ՝ առաջարկում եմ.

- ՀՀ քրեական օրենսգրքում ավելացնել կարգավորում հանցագործությունից կամովին

հրաժարման վերաբերյալ ավարտված հանցափորձի դեպքում՝ առավել հստակ սահմանելով այն հանգամանքները, որոնց պարագայում հնարավոր է հանցագործությունից կամովին հրաժարվել.

- Ճանաչել հանցագործությունից կամովին հրաժարում ավարտված հանցափորձի դեպքում, ոչ միայն այն դեպքում, երբ հանրորեն վտանգավոր հետևանքի առաջացման համար պահանջվում է որոշակի ժամանակահատված, և անձն իր ակտիվ վարքագծով կանխում է այդ հետևանքը, այլև հետևյալ դեպքերում ևս, երբ անձը կանխում է առավել ծանր հետևանքը, և որի չառաջանալը կարող է պայմանավորված լինել ոչ միայն նրա կամքով, այլև նրա կամքից անկախ այլ հանգամանքներով, ինչպես նաև հանցագործությունից կամովին հրաժարում համարել նաև անհաջող հանցափորձի դեպքում, երբ անձը հրաժարվում է կրկնելուց հանցավոր արարքը:



**ԲԱԳՐԱՏ ՂԱԶԻՆՅԱՆ**

«Արդարադատության նախարարի խորհրդական, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական»

**ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Ինչպես հայտնի է՝ կառավարությունը, որպես գործադիր իշխանության բարձրագույն կոլեգիալ մարմին, որպես կանոն՝ բաղկացած է վարչապետից և նախարարներից: Սակայն միջազգային սահմանադրական պրակտիկայում կառավարության կազմում ընդգրկվում են նաև այլ պաշտոնատար անձինք, ինչպես օրինակ՝ «անպորտֆել» նախարարներ, այսինքն՝ անձինք, ովքեր չեն ղեկավարում նախարարություն, այլ ղեկավարում և համակարգում են պետական կառավարչական որոշակի բնագավառների աշխատանքները կամ ուղղակիորեն ապահովում են վարչապետի հանձնարարականների կատարումը խնդրո առարկա բնագավառում:<sup>1</sup> Կառավարության կազմում իր ուրույն տեղով և դերով է մշտապես առանձնացել է նաև փոխվարչապետը: Օրինակ՝ Ավստրիայի Սահմանադրության 69-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դաշնային կանցլերը, փոխկանցլերը և դաշնային նախարարներն օժտված են դաշնությունում գործադիր իշխանություն իրականացնելու իրավասությամբ և միասին կազմում են դաշնային կառավարությունը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փոխկանցլերը կոչված է փոխարինելու կանցլերին նրան վերապահված իրավասության ամբողջ ծավալով:<sup>2</sup>

Սույն հոդվածի շրջանակներում կփորձենք դիտարկել փոխվարչապետի ինստիտուտը Հայաստանի Հանրապետության սահմանադրական պրակտիկայում՝ հաշվի առնելով սահմանադրաիրավական վերջին զարգացումները:

Փոխվարչապետը միջազգային սահմանադրական պրակտիկայում կարող է օժտվել նախարարի կարգավիճակով, և նրան կարող

են վերապահվել վարչապետի լիազորություններ այն դեպքում, երբ վարչապետը բացակայում է կամ ինչ-ինչ պատճառներով չի կարողանում կատարել իր լիազորությունները: Շատ հաճախ՝ վարչապետի հանկարծակի մահվան կամ անսպասելի հրաժարականի դեպքում փոխվարչապետին առաջարկվում է զբաղեցնել վարչապետի պաշտոնը: Օրինակ՝ Ֆինլանդիայի Սահմանադրության 66-րդ հոդվածի համաձայն՝ այն դեպքում, երբ վարչապետը չի կարողանում կատարել իր պարտականությունները, դրանց կատարում վերապահվում է փոխվարչապետ նշանակված նախարարներից մեկին:

Պետական այս պաշտոնը շատ հաճախ կարող է զուգակցվել կառավարական այլ պաշտոնի հետ և տրամադրվել տարիքով ավագ կամ առավել փորձառու նախարարին: Այս պաշտոնում նշանակվողը կարող է լինել նաև կառավարող կուսակցության փոխնախագահը կամ կոալիցիայի մեջ մտնող կուսակցություններից մեկի առաջանորդը:<sup>3</sup> Օրինակ՝ Լեհաստանի Սահմանադրության 147-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարչապետը և փոխվարչապետները կարող են իրականացնել նախարարների գործառույթներ:

Փոխվարչապետի իրավական կարգավիճակի վերաբերյալ կատարված միջազգային որոշ հետազոտությունների հեղինակներ եզրահանգում են, որ փոխվարչապետն ավելի քիչ ծավալով է ներքաշված կուսակցական-քաղաքական գործընթացներում, քան որևէ այլ պաշտոնատար անձ, որպիսի հանգամանքի հաշվառմամբ՝ առանձնացվել են նրան բնութագրող հետևյալ բնութագրիչները.

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ № 98 2017

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ / ընդ. խմբ.՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի.- Եր.: «Իրավունք», 2010.- էջ 840:  
<sup>2</sup> [http://concourt.am/armenian/legal\\_resources/world\\_constitutions/constit/consts21.html](http://concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/consts21.html):  
<sup>3</sup> [https://en.wikipedia.org/wiki/Deputy\\_prime\\_minister](https://en.wikipedia.org/wiki/Deputy_prime_minister):

- ա) որոշակի ակտիվ խառնվածք,
- բ) ակտիվ փոխհարաբերություններ պետական կառավարման համակարգի ներսում և որոշակի աջակցող թիմի առկայություն,
- գ) կուսակցական հնարավոր պատկանելություն և որոշակի հասարակական ճանաչում,
- դ) մեդիա հաղորդակցման և կառավարչական արդի հմտություններ,
- ե) զբաղեցրած պաշտոնում արձանագրված տեսանելի և շոշափելի արդյունքներ,
- զ) թիմային ակտիվ աշխատանքի հմտություններ, առաջնորդ լինելու ձգտումներ և իրավահաջորդության հնարավոր բանաձևի առկայություն:<sup>4</sup>

Հայաստանի Հանրապետությունում մինչ 2005 թվականի սահմանադրական փոփոխությունները փոխվարչապետի առանձին պաշտոն պետական կառավարման համակարգում նախատեսված չէր: 2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվեց, որ Կառավարությունը կազմված է վարչապետից և նախարարներից: Նախարարներից մեկը կարող է վարչապետի առաջարկությամբ Հանրապետության Նախագահի կողմից նշանակվել փոխվարչապետ և փոխարինել վարչապետին վերջինիս բացակայության ժամանակ:

Վերլուծելով հիշյալ սահմանադրական նորմը՝ համարում ենք, որ սահմանադրական նման կարգավորումների պայմաններում կառավարության կազմում փոխվարչապետի լիազորություններն ուղղակիորեն վերապահված են նախարարներից մեկին, և այդ պաշտոնում կարող է նշանակվել միայն նախարար հանդիսացող անձը: Ընդ որում՝ հարկ է նկատել, որ վերջինս որևէ ինքնուրույն իրավասությամբ օժտված չէ, իսկ նրան վերապահված գործառույթները հանգում են միայն վարչապետի բացակայության ժամանակ նրան փոխարինելուն: Ընդ որում՝ թե՛ ՀՀ Սահմանադրությունը, և թե՛ դրա հիման վրա ընդունված որևէ այլ նորմատիվ իրավական ակտ չեն սահմանում այն հիմքերը կամ

դեպքերը, երբ փոխվարչապետը կարող է փոխարինել վարչապետին: Բացի այդ՝ հստակեցված չէ նաև ՀՀ վարչապետի այն լիազորությունների շրջանակը, որոնք կարող են փոխանցվել փոխվարչապետին կամ կարող են իրականացվել նրա կողմից փոխարինման ժամանակահատվածում:

Անհրաժեշտ է նշել, որ հիշյալ մոտեցումը վերահաստատվում է նաև ՀՀ Նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի «ՀՀ կառավարության և նրան ենթակա պետական կառավարման գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին» թիվ ՆՀ-174-Ն հրամանագրով (այսուհետ՝ հրամանագիր) սահմանված փոխվարչապետի լիազորությունների շրջանակի վերլուծությամբ:<sup>5</sup> Մասնավորապես՝ հրամանագրի 6-րդ կետը, բառացիորեն կրկնելով սահմանադրական համապատասխան նորմը, սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության նախարարներից մեկը կարող է վարչապետի առաջարկությամբ Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից նշանակվել փոխվարչապետ և փոխարինել վարչապետին վերջինիս բացակայության ժամանակ: Հրամանագրի 54-րդ կետի համաձայն՝ Կառավարության քննարկմանը հարցեր ներկայացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի որոշումների, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, կառավարության և վարչապետի որոշումների նախագծերի կամ այլ փաստաթղթերի վերաբերյալ եզրակացություն կամ կարծիք հայտնելու հանձնարարականներ կարող է տալ վարչապետը: Վարչապետի հանձնարարությամբ դրանք կարող են փոխանցել փոխվարչապետը, համապատասխան նախարարը, կառավարության աշխատակազմի ղեկավարը: Հրամանագրի 100-րդ կետով սահմանվում է, որ Վարչապետի պաշտոնը թափուր մնալու դեպքում՝ մինչև վարչապետի նշանակումը, կառավարության նիստերը իրավիքում և վարում է փոխվարչապետը: Իսկ նույն հրամանագրի 103-

<sup>4</sup> St' u St. Barnes, 'What About Me? Deputy Prime Ministership in New Zealand', Political Science, Vol. 61, No. 1, 2009, էջ 33-49:

<sup>5</sup> Տես ՀՀ ՊՏ 2007 N 37(561), 25.07.07թ.:

րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Վարչապետի պաշտոնը թափուր մնալուց հետո կառավարության դեռևս չստորագրված որոշումների առկայության դեպքում մինչև վարչապետի նշանակումը որոշումներն ստորագրում է փոխվարչապետը, իսկ վարչապետ նշանակվելուց հետո՝ վարչապետը:

Այսինքն՝ այս պարագայում ակնհայտ է, որ 2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության պայմաններում փոխվարչապետի պաշտոնն ածանցված է կառավարության ղեկավարից և պետական կառավարման համակարգում որևէ ինքնուրույն գործառնական դերակատարմամբ օժտված չէ:

Ի տարբերություն 2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության՝ 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքով կառավարության կազմը սահմանող նորմերը սահմանադրի կողմից արմատապես փոփոխվեցին: Մասնավորապես՝ 147-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվեց, որ կառավարությունը կազմված է վարչապետից, փոխվարչապետից և նախարարներից: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փոխվարչապետների թիվը չի կարող գերազանցել երեքը: 148-րդ հոդվածի առաջին մասով ամրագրվեց, որ կառավարության անդամը պետք է բավարարի պատգամավորին ներկայացվող պահանջները: Նույն հոդվածի 2-րդ մասով սահմանվեց, որ կառավարության անդամի վրա տարածվում են պատգամավորի համար սահմանված անհամատեղելիության պահանջները: Նրա համար օրենքով կարող են սահմանվել անհամատեղելիության լրացուցիչ պահանջներ:

Հիշյալ իրավանորմերի համադրված վերլուծության միջոցով հարկ է նկատել, որ այսպիսի կարգավորման պայմաններում փոխվարչապետը ՀՀ կառավարության կազմում գործող առանձին սահմանադրական ինստիտուտ

է և իր կարգավիճակով այլևս որևէ կերպ փոխկապակցված չէ նախարարի հետ: Այս մասին է վկայում նաև ՀՀ Սահմանադրության 152-րդ հոդվածի 2-րդ մասը, ըստ որի՝ փոխվարչապետները վարչապետի հանձնարարությամբ իրականացնում են կառավարության գործունեության առանձին ոլորտների համակարգումը:<sup>6</sup> Փոխվարչապետներից մեկը վարչապետի սահմանած կարգով փոխարինում է վարչապետին նրա բացակայության ժամանակ:

Այդուհանդերձ՝ կարծում ենք, որ լրացուցիչ հստակեցման կարիք ունի սահմանադրորեն ամրագրված «վարչապետին փոխարինելու կարգ» եզրույթի իրավական բովանդակությունը, քանի որ անհասկանալի է, թե ինչ հարցեր է դա ներառելու: Եթե նույնիսկ մի պահ ենթադրենք, թե դա լիազորությունների համապատասխան ծավալն է, դրա իրականացման ժամկետները, պետական կառավարման համակարգի առանձին ուղղությունների գործունեության կազմակերպման առանձնահատկությունները կամ պատասխանատվության որոշակի շրջանակ սահմանող ենթաօրենսդրական նորմատիվ-իրավական ակտ, ապա կարծում ենք, որ այդպիսի կարգը ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի և 147-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով պետք է սահմանվի ոչ թե ՀՀ վարչապետի որոշմամբ, այլ՝ օրենքով:

Միաժամանակ՝ հաշվի առնելով, որ 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքով փոխվարչապետը, ըստ էության, ստացել է պետական կառավարման առանձին ոլորտների համակարգման լիազորություն՝ կարծում ենք, որ նպատակահարմար կլիներ օրենսդրին սահմանադրորեն լիազորել՝ այդ պաշտոնի համար սահմանել դրան բնորոշ և հատկանշական լրացուցիչ պահանջներ, որոնք, ըստ մեզ, նպատակահարմար կլիներ դիտարկել ինչպես համապատասխան մասնագի-

<sup>6</sup> Հարկ է նկատել, որ ՀՀ սահմանադրական պրակտիկայում հանդիպում են նաև նախարարներին համակարգման գործառնությունների վերապահման դեպքեր: Օրինակ՝ ՀՀ Նախագահի 2005 թվականի հունվարի 25-ի ՆՀ-12-Ն հրամանագրով սահմանվել է, որ վարչապետի կողմից սահմանված լիազորությունների շրջանակում և կարգով կառավարության անդամը կարող է իրականացնել համակարգող նախարարի գործառնություններ, այն է՝ որոշակի ոլորտների քաղաքականության իրագործման, այդ ոլորտների հանրապետական գործադիր մարմինների, մարզպետների և Երևանի քաղաքապետի գործունեության համակարգումը, ինչպես նաև Վարչապետի հանձնարարությամբ հանրապետական գործադիր մարմինների ղեկավարներին տալ հանձնարարականներ և իրականացնել դրանց կատարման նկատմամբ վերահսկողություն: Կառավարության անդամին համակարգող նախարարի գործառնություններ վերապահվում են Հայաստանի Հանրապետության վարչապետի առաջարկությամբ՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով: Ավելի մանրամասն տես ՀՀՊՏ 2005.02.04/10(382) Հոդ. 181:

տական կրթության, այնպես էլ պետական կառավարման համակարգում համապատասխան աշխատանքային ստաժի համատեքստում:

Փոխվարչապետի իրավական կարգավիճակի վերաբերյալ նոր սահմանադրական լուծումներն ինքնին անհրաժեշտություն են դարձնում նաև վերջինիս գործառնական դերակատարման հստակեցման նպատակով մի շարք փոփոխությունների կատարումը: Այսպես՝ Հրամանագրի 29-րդ կետի համաձայն՝ կառավարության քննարկմանը հարցեր են ներկայացնում Հայաստանի Հանրապետության Նախագահը՝ արտաքին քաղաքականության, պաշտպանության և ազգային անվտանգության հարցերով, վարչապետը և Հայաստանի Հանրապետության նախարարները: Կարծում ենք, որ Հայաստանի Հանրապետության փոխվարչապետին ևս պետք է վերապահվի Կառավարության քննարկմանն իր համակարգման ոլորտներում առկա խնդիրներին հրատապ և օպերատիվ լուծում տալու անհրաժեշտությունից բխող հարցեր ներկայացնելու լիազորություն: Դա էականորեն կնպաստի վերջինիս գործունեության արդյունավետության բարձրացմանը՝ զերծ պահելով ֆորմալ-ներկայացուցչական բնույթից: Այս լիազորության վերապահման համատեքստում, մեր գնահատմամբ, փոխվարչապետին, ըստ համակարգման ոլորտների, պետք է տրամադրվի նաև Կառավարության քննարկմանը հարցեր ներկայացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի որոշումների, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, կառավարության և վարչապետի որոշումների նախագծերի կամ այլ փաստաթղթերի վերաբերյալ եզրակացություն կամ կարծիք հայտնելու պարտադիր հանձնարարականներ տալու լիազորություն այն դեպքում, երբ Հրամանագրի 54-րդ կետով նա պարզապես փոխանցում է դրանք Վարչապետի հանձնարարությամբ:

ՀՀ վարչապետի 2008 թվականի հունիսի 3-ի «Նախարարական կոմիտեներ ստեղծելու մասին» N 306-Ն որոշմամբ ՀՀ սահմանադրական պրակտիկայում ներդրվեց բոլորովին նոր՝

նախարարական կոմիտեի ինստիտուտը:<sup>7</sup> Նորաստեղծ չորս՝ ֆինանսական, սոցիալական, տարածքային զարգացման և բնապահպանական, պետաիրավական նախարարական կոմիտեների հիմնական նպատակներն են առանձին ոլորտների զարգացման համար անհրաժեշտ ռազմավարության, դրա իրականացման և համակարգված վերահսկման միասնական մոտեցումների ձևավորման, անհրաժեշտ իրավական ակտերի նախագծերի, հայեցակարգերի, ծրագրերի մշակման աշխատանքների արդյունավետ կազմակերպումը և համակարգումը:

Մեր կարծիքով՝ կառավարության գործունեության կազմակերպման բնագավառում մասնագիտացված նախարարական կոմիտեներն իրենց գործունեությամբ էապես նպաստում են կառավարության գործունեության արդյունավետության և լիարժեքության ապահովմանը, քանի որ, մինչև կառավարության նիստում հարցի հիմնական քննարկումը, այդ կոմիտեներում քննարկումներն իրականացվում են պետական կառավարման համապատասխան բնագավառներին բնորոշ առանձնահատկությունների հաշվառմամբ: Մինչդեռ, հաշվի առնելով 2015 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությամբ փոխվարչապետին վերապահված նոր գործառնական դերակատարումը՝ կարծում ենք, որ նախարարական կոմիտեների համակարգը պետք է վերափոխվի նոր սահմանադրական լուծումների լույսի ներքո և համապատասխանեցվի փոխվարչապետների՝ սահմանադրորեն ամրագրված առավելագույն թվին, իսկ դրանք պետք է ղեկավարի ոչ թե Վարչապետը, այլ՝ համապատասխան ոլորտը համակարգող փոխվարչապետը, ինչը, ըստ մեզ, հնարավորություն կտա առավել արդյունավետ լուծելու գործադիր իշխանության առջև դրված խնդիրները: Մինևույն ժամանակ, հաշվի առնելով, որ նախարարական կոմիտեները կառավարության գործունեության կազմակերպման գործընթացի բաղկացուցիչ մաս են, կարծում ենք, որ նպատակահարմար կլիներ դրանց գործունեությունը կանոնակարգել ոչ թե ՀՀ վարչապետի որոշմամբ, այլ՝ ՀՀ Կառավարության կառուցվածքը և գործունեության կարգը սահմանող օրենքով:

<sup>7</sup> Տե՛ս ՀՀՊՏ 2008.06.11/36(626) Հոդ.599:

**ՀԱՅԿ ԿԵՍՈՅԱԼ**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի ասպիրանտ  
Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմ, իրավաբանական վարչություն,  
առաջատար մասնագետ

**ԻՆՏԵՆՍԻՎՈՒՄԻՆԵՐԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԶԵՎ ՈՒՆԵՑՈՂ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Իշխանությունների բաժանման և հավասարակշռման խորհրդարանական մոդելը բնորոշ է կառավարման խորհրդարանական ձև ունեցող միապետություններին<sup>1</sup> և հանրապետություններին<sup>2</sup>: Խորհրդարանական մոդելի միապետություններին բնորոշ է իշխանությունների բաժանման և հավասարակշռման խորհրդարանական-մեծամասնական մոդելը (վեստմինիսթրյան)<sup>3</sup>, իսկ խորհրդարանական մոդելի հանրապետություններին բնորոշ է իշխանությունների բաժանման և հավասարակշռման խորհրդարանական-համամասնական մոդելը (կոնսենսուս)<sup>4</sup>: Նշված դասակարգման հիմքում ընկած է պետական իշխանության օրենսդիր, գործադիր և դատական իշխանության ճյուղերի փոխհարաբերությունների բնույթը, ինչպես նաև պետական իշխանության ճյուղերի միջև գործող զսպումների և հավասարակշռման մեխանիզմները:

Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքն ընկած է խորհրդա-

րանական կառավարման վեստմինիսթրյան մոդելի (այսուհետև՝ վեստմինիսթրյան մոդել) պետական իշխանության կազմակերպման հիմքում: Այս մոդելի դեպքում պետական իշխանությունն իրականացվում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանության ճյուղերի միջոցով, որոնք միմյանց հետ փոխկապակցված են զսպումների և հավասարակշռման մի շարք մեխանիզմներով: Վեստմինիսթրյան մոդելի պետություններում օրենսդիր իշխանությունն իրականացվում է պառլամենտի կողմից, որը բարձրագույն ներկայացուցչական մարմինն է: Նշված մոդելի դեպքում կարևոր նշանակություն ունի այն, որ օրենսդիր իշխանության ներսում առկա են զսպումների և հավասարակշռման ներճյուղային մեխանիզմները, դա պայմանավորված է այն հանգամանքով, որ պառլամենտները հիմնականում երկպալատ են<sup>6</sup>, կազմված են տարածքային ներկայացուցիչներից կազմված Վերին պալատից (սենատ)<sup>7</sup> և Ժողովրդի կողմից ընտրվող Ներքին պալատից (ներկայացու-

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ № 98 2017

<sup>1</sup> Իշխանությունների բաժանման և հավասարակշռման վեստմինիսթրյան մոդելը բնորոշ է խորհրդարանական կառավարման ձև ունեցող միապետություններին՝ Մեծ Բրիտանիա, Ավստրալիա, Բելգիա, Կանադա, Դանիա, Ճապոնիա, Նիդերլանդներ, Նոր Զելանդիա, Նորվեգիա, Իսպանիա, Շվեդիա և այլն:  
<sup>2</sup> Այս մոդելը կոչվում է նաև արևմտյան-գերմանական մոդել և հատուկ է խորհրդարանական կառավարման ձև ունեցող հանրապետություններին՝ Ավստրիա, Չեխիա, Ֆիլիպիններ, Գերմանիա, Հնդկաստան, Իռլանդիա, Իտալիա, Լատվիա, Սլովակիա, Սլովենիա, Շվեյցարիա, Իսրայել, Հունաստան, Թուրքիա, խորհրդարանական կառավարման հանրապետական ձև հաստատվեց նաև հետսոցիալիստական մի շարք պետություններում՝ Ալբանիա, Հունգարիա, Լատվիա, Մոլդովա, Սլովակիա, Էստոնիա, ինչպես նաև՝ Հայաստանի Հանրապետություն:  
<sup>3</sup> «Վեստմինիսթրյան մոդել» անվանման առաջացումը կապված է Մեծ Բրիտանիայի Վեստմինիսթրյան պալատի անվանման հետ, որտեղ Մեծ Բրիտանական պառլամենտն անցկացնում էր պառլամենտի նիստեր:  
<sup>4</sup> «Կոնսենսուս» անվանումը կապված է այն հանգամանքի հետ, որ այս մոդելի դեպքում կառավարությունը հիմնականում ձևավորվում է քաղաքական համաձայնությունների՝ կոալիցիաների միջոցով:  
<sup>5</sup> Առավել մանրամասն տե՛ս R. A. W. Rhodes Sarah A. Binder and Bert A. Rockman «Political institutions», The oxford university press, 2006. pp. 225-226. հասնելի էր՝ <https://cpriufpe.files.wordpress.com/2013/04/oxford-hanfbok-of-political-institutions.pdf>  
<sup>6</sup> «Конституционное право зарубежных стран», Учебник для вузов, издательство Норма, Москва, 2004, с. 235, հասնելի էր՝ <http://krasinskiy.ru/Baglai.pdf>  
<sup>7</sup> Ավստրալիայի Սահմանադրության առաջին հոդվածի համաձայն՝ օրենսդիր իշխանությունը վերապահված է դաշնային պառլամենտին, որը կազմված է միապետից, սենատից և ներկայացուցիչների պալատից: Կանադայի 1867թ.

ցիչների պալատ)<sup>8</sup>, որտեղ պառլամենտի վերին և ստորին պալատները հավասարակշռում են միմյանց, քանի որ պառլամենտի կողմից ընդունվող որոշումների մեծ մասի համար անհրաժեշտ է պառլամենտի երկու պալատի համաձայնությունը:

Վեստմինիսթրյան մոդելի պետություններում առանցքային նշանակություն ունի գործադիր իշխանության ինստիտուցիոնալ համակարգի և ձևավորման մեխանիզմների ուսումնասիրությունը: Գործադիր իշխանության ինստիտուցիոնալ համակարգը բաժանված է միապետի և կառավարության (կաբինետ) միջև: Պետական իշխանության մարմինների համակարգում բավականին հետաքրքիր է միապետի սահմանադրական կարգավիճակը: Ժառանգական իշխանություն ունեցող միապետը համարվում է պետության ղեկավարը, ով խորհրդանշում է պետության միասնությունը: Ինստիտուցիոնալ առումով՝ պետական իշխանության մարմինների համակարգում միապետը համարվում է գործադիր իշխանության ղեկավարը, սակայն փաստացի գործադիր իշխանության գործառույթներ չի իրականացնում, և միապետի գործառույթները հիմնականում ունեն ներկայացուցչական և արարողակարգային բնույթ<sup>9</sup>, այդ պայմաններում ընդունված է ասել, որ «միապետը թագավորում է, բայց չի կառավարում»: Միապետի գործառույթների ձևական բնույթի մա-

սին է վկայում նաև այն, որ միապետի կողմից ընդունված իրավական ակտերն իրավական ուժ ստանալու համար պետք է ստորագրվեն վարչապետի և (կամ) իրավասու նախարարի կողմից, ինչը յուրահատուկ զսպողական մեխանիզմ է միապետի «անսահմանափակ իշխանությունը» զսպելու տեսանկյունից<sup>10</sup>:

Վեստմինիսթրյան մոդելի պետություններում գործադիր իշխանության հիմնական գործառույթներն իրականացվում են կառավարության կողմից, որը ղեկավարում է վարչապետը: Այս մոդելի դեպքում կարևոր նշանակություն ունի կառավարության ձևավորման մեխանիզմների ուսումնասիրությունը: Կառավարության ձևավորումն սկսվում է վարչապետին նշանակելու գործընթացից: Վեստմինիսթրյան մոդելի պետություններում գոյություն ունեն վարչապետի նշանակման և կառավարության ձևավորման երկու հիմնական ձևեր՝

ա) *միապետը, նախապես քննարկելով պառլամենտական մեծամասնության հետ, առաջարկում է վարչապետի թեկնածու, ով ձևավորում է կառավարության կազմը և գործունեության ծրագրի հետ ներկայացնում է պառլամենտի հաստատման, որից հետո պառլամենտի կողմից հավանություն ստանալու դեպքում միապետը նշանակում է վարչապետին և կառավարության մյուս անդամներին*<sup>11</sup>,

բ) *վարչապետի թեկնածուին առաջարկում*

սահմանադրական ակտի 17-րդ կետի համաձայն՝ պառլամենտը կազմված է թագավորից, սենատից և համայնքների պալատներից:

<sup>8</sup> Մեծ Բրիտանիայում պառլամենտը երկպալատ է, որտեղ օրենսդրական աշխատանքներն իրականացնում է Համայնքների պալատը, իսկ Լորդերի պալատը հիմնականում խորհրդակցական գործառույթներն է իրականացնում: Սակայն որոշ հեղինակներ, այդ թվում՝ Ա. Լայթփարթը, քննադատում են Մեծ Բրիտանիայում Լորդերի պալատի գործունեության արդյունավետությունը և նշում, որ նա ներկայումս միայն ուշացնում է օրենսդրական գործընթացը: Տես A. Iijphart, «Patterns of democracy», Yale University press 1993, pp. 4-5 հասանելի էր՝ <http://digamo.free.fr/lijphart99.pdf>

<sup>9</sup> Որոշ վեստմինիսթրյան մոդելի պետություններում, պառլամենտի վերին և ստորին պալատներից բացի, որպես օրենսդիր իշխանության իրականացող՝ համարվում է նաև միապետը: Ավստրալիայի Սահմանադրության համաձայն՝ գործադիր իշխանությունը վերապահված է միապետին, սակայն փաստացի գործադիր իշխանության գործառույթները իրականացվում են վարչապետի կողմից, ով միապետի ներկայացուցիչն է (Սահմ. 61-րդ հոդված): Նմանատիպ դրույթներ են ամրագրված նաև Դանիայի, Նորվեգիայի, Բելգիայի Սահմանադրություններում:

<sup>10</sup> Բելգիայի Սահմանադրության (105-րդ հոդված) և Նորվեգիայի Սահմանադրության (31-րդ հոդված) համաձայն՝ միապետի ընդունված ակտերը կարող են իրավական ուժ ստանալ միայն համապատասխան նախարարի կողմից ստորագրվելուց հետո:

<sup>11</sup> Իսպանիայում միապետը խորհրդակցում է պառլամենտում մեծամասնություն ունեցող քաղաքական ուժի հետ և առաջարկում է վարչապետի թեկնածու, ինչից հետո վարչապետի թեկնածուն պառլամենտ է ներկայացնում իր գործունեության ծրագիրը և հայցում է վստահություն, եթե պառլամենտը հաստատում է վարչապետի ներկայացրած ծրագիրը, ապա միապետը նշանակում է վարչապետին, իսկ եթե պառլամենտը հավանություն չի տալիս, ապա միապետը վարչապետի նոր թեկնածու է առաջարկում: Սակայն, եթե ի վերջո պառլամենտին չի հաջողվում ձևավորել կառավարություն, ապա միապետը լուծում է պառլամենտը և նշանակում պառլամենտի նոր ընտրություն (Սահմ. 99-րդ հոդված):

է պառլամենտում քաղաքական մեծամասնություն ունեցող ուժը, իսկ միապետը կապարում է վարչապետի նշանակումը, որից հետո վարչապետը ձևավորում է կառավարությունը (Իռլանդիա, Ճապոնիա):

Նշվածից բխում է, որ կառավարությունը ձևավորվում է պառլամենտական մեծամասնություն ունեցող քաղաքական ուժի կողմից, և ոչ միայն ձևավորվում է, այլ նաև կառավարությունը քաղաքական պատասխանատվություն է կրում պառլամենտի առջև: Պառլամենտի առջև կառավարության պատասխանատվությունը դրսևորվում է նաև այնքանով, որ պառլամենտը ցանկացած ժամանակ կարող է անվստահություն հայտնել կառավարությանը<sup>12</sup>: Այսպիսի պայմաններում առանցքային հարցերից մեկը դառնում է կառավարության գործունեության կայունության ապահովման խնդիրը: Վեստմինիսթրյան մոդելի պետություններում կառավարության գործունեության կայունության ապահովումն անհրաժեշտ է դիտարկել երկու տեսանկյունից՝

ա) ձևավորվում է միակուսակցական կառավարությունը. այդ դեպքում կառավարության կայունության խնդիրն իր արդիականությունը կորցնում է, քանի որ պետական իշխանության օրենսդիր և գործադիր իշխանության ճյուղերում իշխում է նույն քաղաքական ուժը, ինչի շնորհիվ՝ պառլամենտի կողմից կառավարությանը անվստահություն հայտնելու հնարավորությունը խիստ նվազում է.

բ) ձևավորվում է կոալիցիոն կառավարությունը. կառավարության գործունեության կայունության ապահովման խնդիրն առավել հրատապ է դառնում կոալիցիոն կառավարության դեպքում, քանի որ քաղաքական ուժերի միջև ձևավորված քաղաքական կոալիցիան կարող է փլուզվել, ինչն էլ կարող է հանգեցնել պառլամենտի կողմից կառավարությանն անվստահություն հայտնելու:

Վեստմինիսթրյան մոդելի պետություններում

հիմնականում գործում է երկկուսակցական համակարգ, ինչի շնորհիվ ձևավորվում են միակուսակցական կառավարությունները, որոնք առավել կայուն են: Չնայած այն հանգամանքին, որ միակուսակցական կառավարության դեպքում ստեղծվում են բավարար երաշխիքներ կառավարության գործունեության կայունության ապահովման տեսանկյունից, սակայն միակուսակցական կառավարությունները ունեն նաև իրենց խոցելի կողմերը, մասնավորապես՝ պետական իշխանության օրենսդիր և գործադիր իշխանության ճյուղերում գերիշխում է նույն քաղաքական ուժը, ինչը կարող է հանգեցնել պետական իշխանության ճյուղերի միջև զսպումների և հավասարակշռման մեխանիզմների անարդյունավետ գործունեության, որպես արդյունք պետական իշխանության ճյուղերի կենտրոնացման:

Չնայած վեստմինիսթրյան մոդելի պետություններում պետական իշխանության ճյուղերի միջև գործում են զսպումների և հավասարակշռման մի շարք մեխանիզմները, այնուամենայնիվ, այս մոդելի **հիմնական հատկանիշներից մեկը համարվում է պետական իշխանության օրենսդիր և գործադիր ճյուղերի սերտ փոխկապակցվածությունը կամ համագործակցությունը**: Հաշվի առնելով նշվածը՝ որոշ տեսաբաններ համարում են, որ վեստմինիսթրյան մոդելի պետություններում պետական իշխանության ճյուղերը միմյանց այնքան են փոխկապակցված, որ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը բացակայում է: Այսպես՝ Լ. Էնտինը նշում է, որ օրենսդիր և գործադիր իշխանության ճյուղերի գործառույթներն այնքան սերտաճած են, որ կասկածի առարկա է իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի գոյությունը<sup>13</sup>, իսկ Վ. Բեգհոթը նշում է, որ իշխանությունների բաժանման և հավասարակշռման «առասպելն» Անգլիայում չի կիրառվում<sup>14</sup>, նմանատիպ կարծիք են արտահայտել նաև Հիչերը

<sup>12</sup> Հոլանդիայի Սահմանադրության 42-1-րդ հոդվածի համաձայն՝ կառավարությունը բաղկացած է թագավորից և նախարարներից: Նախարարները պատասխանատու են պառլամենտի առջև, իսկ թագավորը պատասխանատու չէ: Դանիայի Սահմանադրության 2-րդ հոդվածի համաձայն՝ թագավորն իր գործողությունների համար պատասխանատու չէ, նրա անձն անձեռնամխելի է, իսկ նախարարները պատասխանատու են կառավարության գործունեություն համար: Ճապոնիայի Սահմանադրության 66-րդ հոդվածի համաձայն՝ կաբինետը, որը բաղկացած է վարչապետից և նախարարներից, կոլեկտիվ պատասխանատու է պառլամենտի առջև:

<sup>13</sup> Տե՛ս Энтин Л. М. «Разделение властей: опыт современных государств», Москва, 1995, с. 67.

<sup>14</sup> Տե՛ս W. Bagehot, «English Constitution», Oxford university press, 1949., p. 59.



և Հարբորդը<sup>15</sup>: Սակայն, մյուս կողմից՝ որոշ տեսաբաններ պետական իշխանության օրենսդիր և գործադիր իշխանության ճյուղերի միասնությունը դրական են գնահատում: Այսպես՝ Ա. Չերկացովը նշում է, որ խորհրդարանական հանրապետության առավելություններից է իշխանության բարձրագույն օղակների միասնությունը<sup>16</sup>: Վերը նշված հարցի հետ կապված՝ կարծում ենք, որ հիմնավորված չէ այն տեսակետը, որ վեստմինիսթրյան մոդելի պետություններում իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը բացակայում է, ըստ մեզ՝ նշված մոդելի դեպքում նույնպես պետական իշխանության կազմակերպման հիմքում ընկած է իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը, սակայն պետական իշխանության ճյուղերի գործունեության հիմքում առավել շատ ընկած է իշխանության ճյուղերի փոխգործակցության սկզբունքը, քան զսպումների և հավասարակշռման մեխանիզմների կիրառությունը, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ պառլամենտի և կառավարության աշխատանքները՝ հատկապես օրենսդրական ոլորտում, սերտորեն փոխկապակցված են, քանի որ պառլամենտական հանձնաժողովների աշխատանքն առավել պասիվ բնույթ ունի, և բոլոր հարցերը բուռն ձևով քննարկվում են պառլամենտական նստաշրջանների ընթացքում<sup>17</sup>, որի դեպքում պառլամենտի գրեթե բոլոր նիստերին մասնակցում են նաև կառավարության անդամները<sup>18</sup>:

Սակայն վերջին ժամանակաշրջանում վեստմինիսթրյան մոդելի որոշ պետություններում նկատվում է պետական իշխանության գործառույթների տարանջատման միտում: Մասնավորապես՝ Մեծ Բրիտանիայում մինչև 2005թ.

առկա էր դատական և օրենսդիր իշխանության ճյուղերի գործառույթների ոչ հստակ տարանջատում: Խնդիրն այն էր, որ Լորդերի պալատը, մի կողմից, հանդես էր գալիս որպես պառլամենտի վերին պալատ, իսկ մյուս կողմից՝ համարվում հանրային հարցերով բարձրագույն դատական ատյան: Լորդերի պալատի այն անդամները, ովքեր իրականացնում էին դատական գործառույթ, կոչվում էին օրենքով լորդեր: Սակայն Մեծ Բրիտանիայում սահմանադրական զարգացումների արդյունքով, 2005թ. ընդունվեց սահմանադրական ակտ, որը վերացրեց Լորդերի պալատի դատական գործառույթի իրականացումը: Լորդերի պալատին վերապահված դատական գործառույթի իրականացումը փոխանցվեց նորաստեղծ բարձրագույն դատական ատյանին, ինչի հետևանքով օրենքով լորդերը դադարեցին լինել Լորդերի պալատի անդամ և նշանակվեցին բարձրագույն դատարանի անդամ: Մեծ Բրիտանիայում այդպիսի փոփոխության անհրաժեշտությունը պայմանավորված էր նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի դրույթներով, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտերով, որտեղ անմիջականորեն նշվում է, որ դատական իշխանության գործառույթերը չպետք է իրականացվեն իշխանության այլ ճյուղերի կողմից:

Ժամանակակից իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի հիմնական բնութագրիչներից մեկն իշխանությունների ճյուղերի միջև արդյունավետ գործող փոխլրացումների մեխանիզմների առկայությունն է: Վեստմինիսթրյան մոդելի պետությունների հիմնական հատկանիշներից է այն, որ պետական

<sup>15</sup> Stén Hitchner and Harbold, նշված աշխատության, 1965. p. 322:

<sup>16</sup> Stén A. И. Черкасов, "Глава государства и правительство в странах современного мира, конституционно-правовое регулирование и практика", Москва, 2006, с. 4.

<sup>17</sup> Սակայն կոնսենսուս մոդելի պետություններում խորհրդարանական կոմիտեների աշխատանքն առավել կարևոր է, քան պառլամենտական նստաշրջանների աշխատանքը, քանի որ հիմնական որոշումների վերաբերյալ համաձայնությունը ձեռք է բերվում մինչև պառլամենտական նիստի մեկնարկը, տես I.M.Szilágyi, «Presidential versus parliamentary systems», «AARMS» Vol. 8, No. 2, 2009., pp. 312-313. հասանելի էր՝ <http://zrinyi.zmne.hu/aarms/docs/Volume8/Issue2/pdf/11szil.pdf>:

<sup>18</sup> Այս հանգամանքը, ըստ որոշ հեղինակների, խթանում է կառավարման ժողովրդավարությունը, քանի որ պառլամենտն առանցքային դեր է խաղում քննարկումների կազմակերպման գործում, ինչի շնորհիվ վերահսկողություն է իրականացնում կառավարության գործունեության նկատմամբ, տես A. Heywood, «Key Concepts in Politics», Palgrave, Basingstoke 2000. pp. 173.

իշխանության ճյուղերի միջև առկա են փոխլրացումների մի շարք մեխանիզմներ: Մասնավորապես՝ օրենսդիր իշխանությունը կարող է օրենսդրական ոլորտում իր լիազորությունները պատվիրակել կառավարությանը, որոշ պետություններում լիազորությունների պատվիրակման իր լիազորությունն ունի նաև միապետը<sup>19</sup>: Սակայն, կարծում ենք՝ իշխանության ճյուղերի միջև փոխլրացումների մեխանիզմների նախատեսումը բոլոր դեպքերում չպետք է հանգեցնի պետական իշխանության կենտրոնացման:

Իշխանությունների բաժանման և հավասարակշռման տեսանկյունից՝ վեստմինիսթրյան մոդելը բնութագրող հիմնական հատկանիշներից մեկն էլ այն է, որ, որպես կանոն՝ գոյություն չունեն գրված Սահմանադրություններ, ինչի հետևանքով առկա չէ սահմանադրական արդարադատության մասնագիտացած համակարգ<sup>20</sup>: Իսկ սահմանադրական արդարադատության դերակատարությունն իշխանությունների բաժանման և հավասարակշռման ապահովման տեսանկյունից առանցքային է, հատկապես՝ պետական իշխանության մարմինների միջև սահմանադրական լիազորությունների հետ կապված հարցերով առաջացած վեճերի լուծման գործում: Այդ պայմաններում պետական իշխանության մարմինների միջև առաջացած խնդիրները հիմնականում լուծում են

ստանում պառլամենտի կողմից՝ օրենսդրական կարգավորումների միջոցով<sup>21</sup>:

**Իշխանությունների բաժանման և հավասարակշռման խորհրդարանական մոդելի հաջորդ փեսակը կոնսենսուս մոդելն է**, որը հատուկ է խորհրդարանական կառավարմամբ հանրապետություններին: Այս մոդելի դեպքում նույնպես պետական իշխանության կազմակերպման հիմքում ընկած է իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը: Սակայն, վեստմինիսթրյան մոդելի հետ համեմատած, այս մոդելն ունի մի շարք առանձնահատկություններ: Մասնավորապես՝ պետության ղեկավարը Հանրապետության նախագահն է, ով, ի տարբերություն վեստմինիսթրյան մոդելի դեպքում գործող միապետի՝ ընտրովի է<sup>22</sup>: Կոնսենսուս մոդելի պետություններում գործադիր իշխանության գործառույթները նույնպես կիսվում են Հանրապետության նախագահի և կառավարության կողմից: Սակայն Հանրապետության նախագահը գործադիր իշխանության ոլորտում իրականացնում է հիմնականում արարողակարգային և ներկայացուցչական բնույթ ունեցող գործառույթներ<sup>23</sup>: Իսկ այն պետություններում, որտեղ Հանրապետության նախագահի գործառույթները համեմատաբար ավելի ընդգրկուն են, Հանրապետության նախագահի ընդունած ակտերը իրավական ուժ են ստանում միայն վարչապետի և (կամ) իրավասու

<sup>19</sup> Իսպանիայում օրենքով սահմանված դեպքերում կառավարությունը կարող է ընդունել օրենսդրական ակտեր (Սահմ. 86-րդ հոդված), բացի այդ՝ որոշ պետություններում միապետը նույնպես կարող է իրեն վերապահված գործառույթները պատվիրակել, օրինակ՝ Նորվեգիայում միապետի բացակայության դեպքում միապետը կարող է իր լիազորությունները պատվիրակել պետական խորհրդին, որը գործում է միապետի անունից (Սահմ. 13-րդ հոդված):

<sup>20</sup> Կոնսենսուս մոդելի պետություններում գործում է անկախ դատական իշխանություն: Միաժամանակ՝ գոյություն ունեն նաև սահմանադրական արդարադատության մասնագիտացված մարմիններ, ինչի շնորհիվ իշխանության ճյուղերի միջև առկա սահմանադրական վեճերը կարող են լուծվել սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմինների կողմից:

<sup>21</sup> Տե՛ս A. Iijphart, «Patterns of democracy», Yale University press 1993, pp. 4-5, հասանելի էր՝ <http://digamo.free.fr/lijphart99.pdf>

<sup>22</sup> Գոյություն ունեն Հանրապետության նախագահի ընտրության հետևյալ ձևերը՝ ա) Հանրապետության նախագահն ընտրվում է ուղղակիորեն ժողովրդի կողմից (Իռլանդիայի Սահմանադրության հոդված 12-րդ, Ֆիլիանդիայի Սահմանադրության հոդված 54-րդ), բ) Հանրապետության նախագահը ընտրվում է անուղղակիորեն պառլամենտի երկու պալատի կողմից՝ համատեղ նիստում (Չեխիայի Սահմանադրության հոդված 54-րդ), գ) Հանրապետության նախագահն ընտրվում է պառլամենտի երկու պալատի և տարածքային ներկայացուցիչներից կազմված խորհրդի կողմից (Գերմանիայի Սահմանադրության հոդված 54-րդ, Իտալիայի Սահմանադրության հոդված 83-րդ), դ) Հանրապետության նախագահին ընտրում է կամ պառլամենտը, կամ ընտրական խորհուրդը, եթե պառլամենտը չի կարողանում Հանրապետության նախագահ ընտրել, ապա Հանրապետության նախագահն ընտրվում է ընտրական խորհուրդի կողմից, որը բաղկացած է պառլամենտի և տարածքների ներկայացուցիչներից (Էստոնիայի Սահմանադրության հոդված 79-րդ):

<sup>23</sup> Այս մասին առավել մանրամասն տե՛ս E. И Темпов, «Форма государства, теория права и государства», Москва, 1996, с. 306.

նախարարի կողմից կրկնաստորագրվելուց հետո<sup>24</sup>, և այդ պարագայում Հանրապետության նախագահը չի կարող ինքնուրույն, առանց կառավարության համաձայնության իրականացնել գործադիր իշխանության գործառույթները:

Իշխանության օրենսդիր և գործադիր իշխանության ճյուղերի հարաբերությունների առանցքում է գտնվում կառավարության ձևավորման հարցը: Կառավարությունը ձևավորվում է պառլամենտի կողմից: Այս առումով միջազգային փորձի ուսումնասիրությունից բխում է, որ վարչապետի նշանակման միասնական մոտեցումներ առկա չեն, ուստի գոյություն ունեն վարչապետի նշանակման հետևյալ ձևերը՝ ա) վարչապետն ընտրվում է խորհրդարանի ստորին պալատի կողմից՝ Հանրապետության նախագահի առաջարկությամբ<sup>25</sup>, բ) վարչապետի թեկնածուն առաջարկվում է պառլամենտական մեծամասնության կողմից, իսկ Հանրապետության նախագահը նշանակում է<sup>26</sup>, գ) Հանրապետության նախագահը նշանակում է վարչապետին և կառավարության անդամներին, ովքեր պետք է ստանան պառլամենտի հավանությունը<sup>27</sup>, դ) Հանրապետության նախագահը խորհրդարանական ուժերի հետ քննարկման արդյունքով առաջարկում է վարչապետի թեկնածու, ով ընտրվում է պառլամենտի կողմից, սակայն եթե վարչապետի թեկնածուն պահանջված ձայները չի ստանում, ապա թեկնածու առաջարկելու իրավունք վերապահվում է պարզամտական խմբակցություններին, պարզամտորեն խմբերին: Առաջինը քվեարկում են Հանրապետության նախագահի առաջարկած թեկնածուին, իսկ եթե նա չի ընտրվում, ապա մյուսների առաջարկած թեկնածուներին: Եթե չի հաջողվում վարչապետ ընտրել, ապա դա հանգեցնում է պառլամենտի արձակման (Սլովակիա Սահմ. 111-րդ հոդված), ե) Հանրապետության նախագահը պառլամենտի անդամ-

ության նախագահը նշանակում է<sup>26</sup>, գ) Հանրապետության նախագահը նշանակում է վարչապետին և կառավարության անդամներին, ովքեր պետք է ստանան պառլամենտի հավանությունը<sup>27</sup>, դ) Հանրապետության նախագահը խորհրդարանական ուժերի հետ քննարկման արդյունքով առաջարկում է վարչապետի թեկնածու, ով ընտրվում է պառլամենտի կողմից, սակայն եթե վարչապետի թեկնածուն պահանջված ձայները չի ստանում, ապա թեկնածու առաջարկելու իրավունք վերապահվում է պարզամտական խմբակցություններին, պարզամտորեն խմբերին: Առաջինը քվեարկում են Հանրապետության նախագահի առաջարկած թեկնածուին, իսկ եթե նա չի ընտրվում, ապա մյուսների առաջարկած թեկնածուներին: Եթե չի հաջողվում վարչապետ ընտրել, ապա դա հանգեցնում է պառլամենտի արձակման (Սլովակիա Սահմ. 111-րդ հոդված), ե) Հանրապետության նախագահը պառլամենտի անդամ-

<sup>24</sup> Գերմանիայում Հանրապետության նախագահի հրամանագրերը և կարգադրությունները պետք է վավերացվեն վարչապետի կամ իրավասու նախարարի կողմից: Սակայն կան որոշ բացառություններ, որոնք վերաբերում են վարչապետի նշանակման և ազատման, ինչպես նաև բունդեսթագի արձակման վերաբերյալ ակտերին (Սահմ. 58-րդ հոդված), նմանատիպ դրույթ է սահմանում նաև Հունաստանի Սահմանադրությունը, որի համաձայն՝ Հանրապետության նախագահի ոչ մի ակտ չի կարող կատարվել և օրինական համարվել, եթե չի ստորագրվել համապատասխան նախարարի կողմից՝ բացառությամբ վարչապետի նշանակման, պառլամենտի արձակման, օրենքի նկատմամբ վետո կիրառման ակտերը: Իսկ հանրաքվե նշանակելու մասին Հանրապետության նախագահի ընդունած ակտը պետք է ստորագրվի պառլամենտի ղեկավարի կողմից (Սահմ. 35-րդ հոդված):

<sup>25</sup> ԳԴՀ-ում կառավարության ղեկավարին (կանցլերին) ընտրում է նորընտիր խորհրդարանի ստորին պալատը (բունդեսթագը)՝ դաշնային Հանրապետության նախագահի առաջարկությամբ Հանրապետության նախագահը պառլամենտին առաջարկում է վարչապետի թեկնածու: Եթե Հանրապետության նախագահի առաջարկած վարչապետի թեկնածուն պառլամենտի կողմից չի ընտրվում, ապա վարչապետը պետք է ընտրվի պառլամենտի կողմից: ԳԴՀ-ում, եթե Հանրապետության նախագահի կողմից առաջադրված վարչապետի թեկնածուն չի ստանում անհրաժեշտ թվով ձայներ, ապա բունդեսթագն իրավասու է երկու շաբաթվա ընթացքում առաջադրել և ընտրել կանցլերին: Նշված դեպքում Հանրապետության նախագահը պարտավոր է ընտրված թեկնածուին նշանակել կանցլերի պաշտոնում (Գերմանիայի Սահմ. 63-րդ հոդված):

<sup>26</sup> Հանրապետության նախագահը վարչապետ է նշանակում պառլամենտական մեծամասնության ներկայացրած թեկնածուին: Եթե Հանրապետության նախագահի կողմից նշանակված վարչապետը պառլամենտի կողմից չի հաստատվում, ապա Հանրապետության նախագահը տասն օրվա ընթացքում նշանակում է նոր վարչապետ, սակայն եթե, ի վերջո, պառլամենտը հավանություն չի տալիս վարչապետի թեկնածուին, ապա դա հանգեցնում է Ազգային ժողովի արձակման, կառավարության անդամները նշանակվում են Հանրապետության նախագահի կողմից վարչապետի առաջարկությամբ, որը վավերացվում է պառլամենտի կողմից (Ալբանիայի Սահմ. 96-րդ հոդված):

<sup>27</sup> Հանրապետության նախագահը ձևավորում է կառավարություն, որն այնուհետև պետք է ստանա պառլամենտի վստահությունը: Եթե կառավարությունը չի ստանում պառլամենտի հավանությունը, ապա Հանրապետության նախագահը վարչապետ է նշանակում պառլամենտի Հանրապետության նախագահի առաջարկած վարչապետի թեկնածուին (Չեխիա, Սահմ. 68-րդ հոդված): Նմանատիպ իրավակարգավորում է նախատեսված նաև Էստոնիայի Սահմանադրությամբ (Սահմ. 89-րդ հոդված): Էստոնիայի Սահմանադրության համաձայն՝ Հանրապետության նախագահը նշանակում է վարչապետ և հանձնարարում է վարչապետին ձևավորել կառավարություն: Վարչապետը 14 օրվա ընթացքում ձևավորում է կառավարությունը և ներկայացնում է պառլամենտի հավանությունը: Եթե պառլամենտը հավանություն է տալիս կառավարության կազմին, ապա նախագահը 3 օրվա ընթացքում նշանակում է: Իսկ եթե կառավարությունը չի ստանում պառլամենտի վստահությունը, ապա Հանրապետության նախագահը ներկայացնում է վարչապետի նոր թեկնածու: Եթե ի վերջո չի հաջողվում կառավարություն ձևավորել, ապա Հանրապետության նախագահն արձակում է պառլամենտը և նշանակում նոր ընտրություններ (Սահմ. 89-րդ հոդված):

ներից նշանակում է վարչապետ, ով ձևավորում է կառավարությունը, և կառավարության կազմը ներկայացվում է Ազգային ժողովի հավանության (Թուրքիա Սահմ. 109-րդ): Այս մոդելի դեպքում կառավարությունը ոչ միայն ձևավորվում է պառլամենտի կողմից, այլ նաև պատասխանատու է պառլամենտի առջև<sup>28</sup>: Այդ պայմաններում կառավարությունը աշխատում է այնքան ժամանակ, քանի դեռ վայելում է պառլամենտի վստահությունը<sup>29</sup>: Այս դեպքում առանցքային հարցերից մեկը դառնում է կառավարության գործունեության կայունության ապահովումը<sup>30</sup>: Կոնսենսուս մոդելի պետություններում հիմնականում գործում է բազմակուսակցական համակարգ, որի շնորհիվ հիմնականում ձևավորվում են կոալիցիոն կառավարություններ, իսկ կոալիցիոն կառավարությունը փլուզման տեսանկյունից ավելի ռիսկային է, ինչը կարող է հանգեցնել կառավարության գործունեության անկայունության:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք նշել, որ իշխանությունների բաժանման և հավասարակշռման խորհրդարանական կառավարումը դրսևորվում է վեստմինիսթրյան և կոնսենսուս մոդելների ձևով: Վեստմինիսթրյան մոդելում միապետը, համարվելով գործադիր իշխանության ղեկավարը, փաստացի գործադիր իշխա-

նության գործառույթներ չի իրականացնում: Գործադիր իշխանության գործառույթներն իրականացվում են կառավարության կողմից: Կառավարությունը ձևավորվում է միապետի կողմից՝ խորհրդարանում մեծամասնություն ունեցող քաղաքական ուժի հետ համաձայնության արդյունքով կամ պառլամենտի առաջարկությամբ, և իր գործունեության համար պատասխանատու է պառլամենտի առջև: Գործում է զարգացած երկկուսակցական համակարգ, ինչի շնորհիվ ձևավորվում է միակուսակցական ուժեղ կառավարություն, ինչը հանգեցնում է պետական իշխանության օրենսդիր և գործադիր իշխանության ճյուղերի սերտաճման: Իսկ մյուս՝ Կոնսենսուս մոդելի դեպքում պետություններում գործում է ընտրովի Հանրապետության նախագահ, ում գործառույթները նույնպես ներկայացուցչական բնույթ ունեն: Կառավարությունները հիմնականում ձևավորվում են քաղաքական կոալիցիա կազմելի միջոցով, ինչը երբեմն հանգեցնում է կառավարության գործունեության անկայունության, գործում է սահմանադրական արդարադատության մասնագիտացած համակարգը, որը նպաստում է իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի արդյունավետ գործունեությանը:



<sup>28</sup> Չեխիայի Սահմանադրության համաձայն՝ կառավարությունը պատասխանատու է պատգամավորների ժողովի առջև (Սահմ. 68-րդ հոդված), նմանատիպ դրույթներ են ամրագրված նաև Ֆինլանդիայի Սահմանադրությամբ (60-րդ հոդված), Իսլանդիայի Սահմանադրությամբ (15-րդ հոդված), Սլովենիայի Սահմանադրությամբ (110-րդ հոդված):

<sup>29</sup> Այս մոդելի դեպքում գոյություն ունեն վարչապետին անվստահություն հայտնելու երկու հիմնական ձևերը՝ պառլամենտի անդամների նախաձեռնությամբ կարող է անվստահություն հայտնվել վարչապետին, սակայն որոշ պետություններում պառլամենտի կողմից վարչապետին անվստահություն հայտնելու նախաձեռնության դեպքում, միաժամանակ, պետք է առաջարկվի նաև վարչապետի նոր թեկնածու, ինչը տեսական գրականությունում կոչվում է կառավարությանն անվստահություն հայտնելու կոնստրուկտիվ անվստահության քվե:

<sup>30</sup> Տե՛ս A. Heywood, «Key Concepts in Politics», Published November 4th 2000 by Palgrave Macmillan p. 174, տե՛ս նաև M. E. Николаева, «Система разделения властей как источник дисфункций политического управления», Грамота, 2013. № 9 (35), ст. 102, հասանելի էր [http://scjournal.ru/articles/issn\\_1997-292X\\_2013\\_9-2\\_24.pdf](http://scjournal.ru/articles/issn_1997-292X_2013_9-2_24.pdf), Օրինակ՝ Ֆրանսիայի Չորրորդ Հանրապետությունում 1945-1958թթ. ընթացքում փոխվել են թվով քսանհինգ կառավարություններ, Բելգիայում 1980-1995թթ. ընթացքում փոխվել են թվով վեց կառավարություններ:

## ԵՎՁԵՆԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԳԻՐՆԵՐ ՀՀ ՕՐԵՆՍԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Իրավունքը որպես հասարակական հարաբերությունների կարգավորման գործիք այսօր կանգնած է լրջագույն որակական փոփոխությունների առջև: Նոր կենսաբժշկական տեխնոլոգիաները, դուրս գալով գիտահետազոտական լաբորատորիաներից, անմիջականորեն ներդրվում են գործնական կիրառման մեջ առանց համապատասխան օրենսդրական մշակման: Իրավունքը չի հասցնում հաճախ դրան որևէ կերպ արձագանքել: Ներկայիս զարգացումները կենսաբժշկության և գենետիկայի բնագավառներում մարդկությանն ապահովել են այնպիսի միջոցների բազմազանությամբ, որոնք հնարավորություն են տալիս զգալիորեն փոփոխելու մարդու կենսաբանական էությունը, նույնիսկ ընտրելու դա «պատվերով»: Մասնավորապես՝ ծնողը հնարավորություն է ստանում ընտրելու իր ապագա երեխայի ոչ միայն սոմատիկ չափանիշները՝ սեռը, աչքերի գույնը, ապագա հիվանդությունների ցանկը, այլև որոշելու նրա ծնվելու և չծնվելու հարցը՝ գործի դնելով կենսաբժշկության կողմից առաջարկված ախտորոշման մեթոդները (պրենատալ սքրինինգ): Սրանցից շատերը հենց եվգենիկայի իրականացման միջոցներ են: Իզուր չէ, որ իրավունքի տեսության մեջ նոր թափով վերածնվում են եվգենիկայի թույլատրելիության վերաբերյալ քննարկումները:<sup>1</sup>

Անձի ավտոնոմիայի խորացման համաշխարհային միտումների հետազոտությունը փաստում է, որ ապագայում լիբերալ իրավունքը հակված չի լինելու սահմանափակել եվգենիկական միջոցների կիրառումը, առավել ևս՝ լիովին արգելելու դրանք: Օրինակ՝ Եվրոպայի

Միության պետությունների միջև տեղի ունեցած կլոր սեղանի ընթացքում բուռն քննարկման առարկա է դարձել այն հարցը, թե արդյոք պետք է Դաունի սինդրոմով տառապող սաղմի սպանությունը համարել հիմնարար իրավունք: Հարցն արդիական է նաև իրավակիրառ պրակտիկայի համար: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը որոշում պետք է կայացնի «Կրուզմանն ընդդեմ Լատվիայի» գործով:<sup>2</sup> Ըստ նշված գործի փաստական հանգամանքների՝ կինը բողոք է ներկայացրել ընդդեմ բժշկի, ով չի կատարել պատշաճ կերպով սքրինինգ հետազոտություն, ինչի հետևանքով կինը չի իմացել չծնված երեխայի արատի մասին և չի կատարել հղիության ընդհատում: Եթե դատարանը որոշում կայացնի հոգուտ հայցվորի, ապա դա թույլ կտա ծնողներին պրենատալ սքրինինգ կատարելուց հետո արբորտի միջոցով ընդհատել հղիությունը: Այդպիսի որոշմամբ օրինական մեխանիզմ կստեղծվի Դաունի սինդրոմով հիվանդ չծնված երեխաների ոչնչացման համար: Եվգենիկան կդառնա անհատի նոր իրավունք, նրա վարքագծի հնարավոր և թույլատրելի տարբերակներից մեկը: Ինչպես նշում է Ժերոմ Լեթենի ֆոնդի նախագահ Ժան-Մարի Լը Մենեն՝ մոտ 96 տոկոս դեպքերում, երբ ծնողները տեղեկացվում են սքրինինգ հետազոտության բացասական արդյունքների մասին, արբորտ կատարելու որոշում են կայացնում: Սա ներկայիս եվգենիկայի արտահայտություններից մեկն է: Մինչդեռ այսպիսի մոտեցումն արժեզրկում է մարդու կյանքը, հանգեցնում խտրականության, ինչպես Ուայթ Ջոնն է նշում՝ «քրոմոսոմալիզմի»:<sup>3</sup> Դա նաև կոպտո-

<sup>1</sup> Крылова Н.Е. Уголовное право и биоэтика: проблемы, дискуссии, поиск решений. ИНФРА- М.: 2006. С. 32.

<sup>2</sup> www.strasbourg-reor.org/?topicid=926

<sup>3</sup> Уайт Джон. На грани жизни и смерти. (Проблемы современного здравоохранения в свете христианской этики). – СПб.: МИРТ. 2003. 362 с.

րեն խախտում է ՀՀ Սահմանադրության 29 հոդվածը, որի համաձայն՝ արգելվում է գենետիկական հատկանիշներով խտրականությունը: Նույն տեսանկյունն է արտացոլված 2007 թվականի «Հաշմանդամների իրավունքների մասին» ՄԱԿ-ի Կոնվենցիայում, որտեղ նշվում է, որ եվգենիկական աբորտ կատարելու քաղաքականությունը հանգեցնում է հաշմանդամների խտրականացմանը:<sup>4</sup> Նման պայմաններում եվգենիկայի արգելումն ավելի քան անհրաժեշտ է, և այս փաստի գիտակցմամբ է, որ 06.12.2015 թվականին ընդունված ՀՀ նոր Սահմանադրությունն առաջին անգամ անդրադարձավ եվգենիկական գործունեությանը, ձևավորեց որոշակի վերաբերմունք այդ ոլորտի նկատմամբ: ՀՀ Սահմանադրության 25-րդ հոդվածում եվգենիկական փորձեր իրականացնելու նկատմամբ արգելք դրվեց: Սա, իհարկե, դրական քայլ է: Այսպիսով՝ հայկական իրավական իրականության մեջ որոշակի միտում ձևավորվեց, որի համաձայն՝ որպես տանդեմ սկսեցին դիտարկվել իրավունքը և կենսաէթիկան:<sup>5</sup> Կենսաէթիկան որպես մարդու իրավունքների պաշտպանության ձև հնարավորություն է ընձեռում սահմանափակելու կենսատեխնոլոգիաների անհարկի կիրառումը, ապահովելու դրանք կիրառելիս մարդկային արժանապատվության գերակայությունը, ուստի իրավունքի և կենսաէթիկայի մերձեցումը ենթադրում է մարդու իրավունքների լիարժեք պաշտպանության համար լրացուցիչ մեխանիզմների մշակում:

Քննարկվող նորմի գոյությունն ունի, իհարկե, որոշակի կանխարգելիչ ազդեցություն: Սակայն, մեր կարծիքով՝ նորմն ունի նաև որոշակի թերություններ: Այսպես՝ դրա վերլուծությունը ցույց է տալիս, որ նորմը չի կարող կարգավորել կամ արգելել եվգենիկական գործունեությունից ծագող բոլոր հասարակական հարաբերությունները, ի տարբերություն, օրինակ՝ որոշ օտարերկրյա պետություններում գործող Մայր օրենքների, որոնք հստակ սահմանում են եվգենիկական գործունեության ամ-

բողջական արգելք: Մասնավորապես՝ Հունգարիայի Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ կետն արգելում է եվգենիկական գործունեությամբ զբաղվելը:<sup>6</sup> ՀՀ Սահմանադրությամբ նշված «եվգենիկական փորձ» հասկացությունը ավելի նեղ հասկացություն է, քան «եվգենիկական գործունեությունը», ուստի ենթադրվում է, թե ՀՀ Մայր օրենքն արգելում է միայն համապատասխան փորձերը, այլ ոչ թե՛ ամբողջ գործողությունը: Դրա հետ մեկտեղ՝ եվգենիկական գործունեության կամ մարդու սելեկցիայի լրիվ արգելքը նույնպես հարցի լուծում չի կարող հանդիսանալ, քանի որ այդպիսի որոշումը կզրկի մի շարք գենետիկական հիվանդությունների դեմ պայքարելու հնարավորությունից: Օրինակ՝ որոշ ժառանգական հիվանդություններ, ինչպիսիք են հեմոֆիլիան, երևանյան տենդը և այլն, պայմանավորված են պտղի սեռով: Այս դեպքում եվգենիկական մեթոդները կարող են անհրաժեշտ լինել, օրինակ՝ օժանդակ վերարտադրական տեխնոլոգիաների կիրառման դեպքում համապատասխան սեռի էմբրիոնների սելեկցիա կատարելու համար, հիվանդությունից խուսափելու նպատակով: Բացի այդ՝ ՀՀ օրենսդրությունը չի տալիս եվգենիկական փորձի օրինական սահմանումը: Եթե անդրադառնանք օրենսդրի կողմից օգտագործված «փորձ» բառի լեզվաբանական ստուգաբանությանը, ապա կարելի է ենթադրել, թե արգելվում են միայն այնպիսի գործողությունները, որոնք դեռ չեն հասել գիտագործնական այնպիսի մակարդակին, որ համարվեն հիմնարար մեթոդ: Այսինքն՝ եվգենիկական փորձերի արգելքն ամրագրող նորմի բառացի մեկնաբանությունը թույլ է տալիս հանգել այն եզրակացության, որ օրենսդիրը չի արգելում արդեն իսկ բազմակի գործածության մեջ դրված եվգենիկական մեթոդների կիրառումը: Մեր կարծիքով՝ նորմի նպատակը պետք է լիներ ոչ թե զուտ եվգենիկական փորձերի, այլ՝ մարդկանց սելեկցիայի արգելումը, որոշակի բացառություններով, քանի որ սելեկցիայի արգելումը կա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 98 2017

<sup>4</sup> [http://www.un.org/ru/documents/decl\\_conv/conventions/disability.shtml](http://www.un.org/ru/documents/decl_conv/conventions/disability.shtml)  
<sup>5</sup> Варданян Л.Г. Прижизненное донорство. Некоторые вопросы правового регулирования//Национальный юридический журнал «Теория и практика», июнь, 2016, Молдова. С. 10.  
<sup>6</sup> [www.krugosvet.ru/enc/gosudarstvo-i-politika/vengriya-konstitutsiya](http://www.krugosvet.ru/enc/gosudarstvo-i-politika/vengriya-konstitutsiya)

տեգորիկ չի կարող լինել: Սա արդեն ենթադրում է, թե հայկական օրենսդրությունը պետք է փորձի լուծել իրավաչափ եվգենիկայի իրավական կարգավորման հարցը, ձգտի մշակել այնպիսի նորմատիվ-իրավական բազա, որը թույլ կտա տարանջատել եվգենիկական գործունեության թույլատրելի և անթույլատրելի սահմանները: Սա հնարավոր չէ իրականացնել միայն իրավաբանների ջանքերով, այլ ենթադրում է լրջագույն միջոցառումներ հետազոտությունների իրականացում: Նշենք նաև, որ «կենսաէթիկա-իրավունք» տանդեմը պահանջում է, որ նշված հետազոտությունները կատարվեն կենսաէթիկական դիսկուրսում և կենսաէթիկայի սկզբունքների հիման վրա: Եվգենիկայի անհարկի միջոցների կիրառումը կանխելու նպատակով՝ որպես առաջնային քայլ ենթադրվում է հետևյալ օրենսդրական փոփոխությունների ընդունումը.

1. ՀՀ Սահմանադրության 25-րդ հոդվածի համապատասխան մասը խմբագրել հետևյալ կերպ. «Մարդու եվգենիկական սելեկցիան, ո-

րի նպատակն այլ է, քան հիվանդությունների կանխարգելումը, արգելվում է».

2. ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածը լրացնել հետևյալ դրույթով. «Եվգենիկական գործունեության քարոզչությունը կամ գովազդումն արգելվում է».

3. «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետը ամրագրել հետևյալ խմբագրությամբ. «Վերարտադրողական տեխնոլոգիաների կիրառման ընթացքում արգելվում է մարդու սաղմի սեռի պլանավորումը կամ գենետիկական ցանկացած ձևափոխումը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա պահանջվում է ժառանգական հիվանդությունների բուժման կամ կանխարգելման համար».

4. Սահմանել մարդու սաղմի իրավական կարգավիճակը.

5. Սահմանել քրեական պատասխանատվություն ապօրինի եվգենիկական սելեկցիա իրականացնելու համար:



**ՎԱՐՍԵՐ ԿԱՐԱՊԵՏՅԱԼ**

ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի տեղակալ,  
ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի ասպիրանտ,  
Հայդեյբերգի համալսարանի հրեագիտության  
ինստիտուտի մագիստրանտ (Հայդեյբերգ, Գերմանիա)

**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ  
ՀԻՄՆԱԽՆՆՈՒՄՆԵՐՆ ԻՍՐԱՅԵԼԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ՉԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Իսրայել պետությունում մարդու իրավունքների հիմնախնդիրները բավականին բարդ են ու բազմաշերտ: Սույնի շրջանակներում ուսումնասիրության առարկան առավելապես մարդու իրավունքների ճանաչման, ամրագրման ու պաշտպանության պատմական զարգացումն է: Ըստ այդմ՝ Իսրայելում մարդու իրավունքների ուսումնասիրությունը կիրականացվի երկու հիմնական փուլերով՝ մինչև 1992թ. մարդու իրավունքների ոլորտում երկու Հիմնական օրենքների ընդունումը և 1992թ. հետո մինչ մեր օրերը<sup>1</sup>:

Իսրայելում մարդու իրավունքների հիմնախնդրի ամբողջական ընկալման համար այդ հիմնախնդիրը պետք է քննարկել սահմանադրաիրավական զարգացումների առավել լայն համատեքստում: Ինչպես գիտենք՝ մի շարք պատճառներով Իսրայելում հնարավոր չեղավ մեկ միասնական սահմանադրության, ինչպես նաև մարդու իրավունքների հոչակագրի ընդունումը՝ չնայած նման փաստաթղթերի ընդունման բազմաթիվ փորձերին<sup>2</sup>: Ստեղծված պայմաններում Իսրայել պետությունը որդեգրեց մար-

<sup>1</sup> Իսրայելի գերագույն դատարանի նախկին նախագահ, այսպես կոչված՝ Իսրայելյան սահմանադրական հեղափոխության հեղինակ-նախաձեռնող պրոֆ. Ահարոն Բարաքն Իսրայել պետության ողջ պատմությունը ևս բաժանում է նշված երկու փուլի միջև՝ բաժանման հիմքում դնելով նույն չափանիշը, այն է՝ մարդու իրավունքի ոլորտում երկու հիմնական օրենքների ընդունումը և դրանց հիման վրա սահմանադրական հեղափոխության իրականացումը (տե՛ս Barak A. Human rights in Israel // Israel Law Review, Vol. 39 N 2, 2006, էջ 13): Այս մոտեցումն է որդեգրում նաև իսրայելյան սահմանադրական իրավունքի խոշորագույն մասնագետ պրոֆ. Սյուզի Նավոտն իր «Իսրայելի սահմանադրական իրավունքը» աշխատության մեջ (տե՛ս Navot S. Israeli Constitutional Law. The Netherlands. Kluwer Law International, 2007, էջ 199-203):

<sup>2</sup> Սահմանադրության ընդունման նախաձեռնությունը ձախողվեց ոչ միայն պետության կազմավորման սկզբնական շրջանում, այլև դրա գոյության հետագա տասնամյակների ընթացքում: Այսպես՝ Սահմանադրության ընդունման շարժումներից ամենակարևորը, թերևս, 1980-ական թվականների սահմանադրական շարժումն էր՝ հայտնի «Ռայխմանի Սահմանադրություն» անվանմամբ: Թեպետ նախագիծը մեծ հասարակական օժանդակություն էր վայելում, այդ թվում՝ Իսրայելի իշխանական վերնախավի շրջանակներում, սակայն, ինչպես ցույց տվեցին հետագա զարգացումները՝ այս նախագիծը ևս պետք է ձախողվեր: Ձախողման պատճառն առավելապես կրոնական ճամբարի հակազդեցությունն էր՝ հատկապես Հալախայի վերացման և քաղաքացիական ամուսնությունների նախատեսման հնարավորության հետ կապված (այս մասին տե՛ս Зонтиков И. Борьба за принятие конституции в Израиле в 1980-2000-е годы // Ближний Восток и Современность, сборник статей, выпуск пятый, Москва, 2003): Նմանատիպ խոշոր սահմանադրական շարժում տեղի ունեցավ նաև 2000-ական թվականների սկզբներին՝ հայտնի «Սահմանադրական լրբբի» անվանմամբ, դա ևս դատապարտված էր ձախողման: Այս սահմանադրական շարժման հիմքում դրված էր այն գաղափարախոսությունը, որ Սահմանադրությունը պետք է ընդունվեր «լայն» հասարակական միաբանության (կոնսենսուսի), ժողովրդավարական սկզբունքների հիման վրա, պետք է պահպաներ Իսրայել պետության՝ որպես հրեա ժողովրդի «ազգային տան» բնութագիրը: Բացի այդ՝ նախատեսվում էր, որ Սահմանադրությունն ամրագրելու էր Իսրայել պետությունում գոյություն ունեցող մշակութային և սովորութային ողջ բազմազանությունը և երաշխավորելու էր մարդու իրավունքները, մասնավորապես՝ փոքրամասնությունների իրավունքները: «Սահմանադրական լրբբին» մշակեց «Սահմանադրության ընդունման» մասին Հիմնական օրենքի նախագիծը, որն անգամ ընդունվեց առաջին ընթերցմամբ՝ 2000թ. հունիսի 7-ին, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» Հիմնական օրենքը՝ 2000թ. օգոստոսի 22-ին: Առաջին Հիմնական օրենքն ապագայում Սահմանադրության ընդունման երաշխիքն էր, իսկ երկրորդը՝ Սահմանադրական դատարանի հիմնելու՝ Սահմանադրությանն ստատուտային օրենսդրության համապատասխանությունն ստուգելու իրավազորությամբ:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 98 2017



դու իրավունքների դատական ճանաչման ու ամրագրման ուղին, ինչը, սակայն, նույնպես հեշտ չէր իրագործել: Սահմանադրագետ Այուզի Նավոտը, խոսելով այս փուլում մարդու իրավունքների դատական ճանաչման մասին, նշում է. «Prima facie<sup>3</sup>, արտակարգ դրությամբ պայմանավորված՝ մարդու իրավունքները Սահմանադրությամբ կամ Հիմնական օրենքով ամրագրելու անհնարինության, ինչպես նաև պառլամենտական գերակայության պայմաններում մարդու իրավունքներ «ստեղծելու»՝ Գերագույն դատարանի իրավասությունը սահմանափակ է»<sup>4</sup>:

Հատկանշական է նաև, որ Իսրայել պետության ստեղծման առաջին իսկ օրերից բազմիցս փորձեր են արվել գործողության մեջ դնել Իսրայելի Անկախության հռչակագիրը<sup>5</sup>, որը մի շարք հիմնարար իրավունքներ և ազատություններ ամրագրող միակ փաստաթուղթն էր Իսրայել պետությունում, ինչպես, օրինակ՝ պետության բոլոր բնակիչների լիակատար սոցիալական և քաղաքական իրավահավասարությունը՝ կրոնից, սեռից և ազգությունից անկախ, ինչպես նաև կրոնի ու խղճի ազատությունը և այլն: Անկախության հռչակագրին իրավական ուժ տալու բոլոր փորձերն սկզբնական շրջանում անհաջողության մատնվեցին: Իսրայել պետության գոյության առաջին իսկ տարիներին Իսրայելի գերագույն դատարանը սահմանեց, որ Անկախության հռչակագիրն ընդամենը նպատակ ուներ հաստատելու պետության հիմնադրման փաստը՝ միջազգային իրավունքի տեսանկյունից ճանաչում ստանալու նպատակով: Դա արտահայտում է ժողովրդի տեսլականը և նրա

«raison d'être»-ն<sup>6</sup>. Անկախության հռչակագիրը Սահմանադրություն չէ և ոչ էլ օրենքի ուժ ունի<sup>7</sup>:

Այդուհանդերձ՝ ժամանակի ընթացքում Իսրայելի գերագույն դատարանը փոխեց իր դիրքորոշումը՝ աստիճանաբար սկսելով հղում անել Անկախության հռչակագրին որպես իրավական աղբյուրի՝ Քնեսեթի կամ մանդատային իշխանությունների<sup>8</sup> կողմից ընդունված օրենքների մեկնաբանության համար: Այս առումով շրջադարձային էր, թերևս, «Քոլ Հա'ամն ընդդեմ ներքին գործերի նախարարի» գործը<sup>9</sup>, որով Իսրայելի գերագույն դատարանի դատավոր Ագրանատը սահմանեց, որ թեև Անկախության հռչակագիրը պարտադիր իրավաբանական ուժ չունի, այդուհանդերձ՝ ստատուտները պետք է մեկնաբանվեն դրանում ամրագրված սկզբունքներին համապատասխան<sup>10</sup>: Մասնագիտական գրականության մեջ ընդունված է համարել, որ սրանով դատավոր Ագրանատն Իսրայել պետությունում քաղաքացիական իրավունքների իրավական ճանաչման հիմքը դրեց<sup>11</sup>: Դատավոր Ագրանատի կողմից սահմանվեց նաև, որ Իսրայելը ժողովրդավարական պետություն է, իսկ ժողովրդավարական իրավակարգը չի կարող գոյություն ունենալ, եթե իրավական համակարգը չի ճանաչում արտահայտվելու ազատությունը<sup>12</sup>: Սահմանվեց նաև, որ թեև սահմանադրության բացակայության պայմաններում հնարավոր չէ անվավեր ճանաչել արտահայտվելու ազատությանը հակասող օրենքը, դատարանը ելնում է օրենքի՝ արտահայտվելու ազատության հետ համատեղելի մեկնաբանությունից<sup>13</sup>: Այս նույն որոշմամբ սահմանվեց

«Սահմանադրական լոբբին» գոյատևեց մի քանի տարի և 15-րդ Քնեսեթի լուծարմամբ դադարեցրեց իր գործունեությունը՝ 2003թ. հունվարի 15-ին: Ավելի մանրամասն տե՛ս, օրինակ՝ Зонтиков И. նշված աշխատությունը:

<sup>3</sup> Լատիներենից թարգմանաբար՝ առաջին հայացքից:

<sup>4</sup> Տե՛ս Navot S., նշված աշխատությունը, էջ 199:

<sup>5</sup> Իսրայել պետության անկախության հռչակագիրն ընդունվեց բրիտանական մանդատի դադարեցման օրը՝ 1948թ. մայիսի 14-ին՝ ժողովրդական խորհրդի անդամների կողմից Իսրայելի անկախության հռչակմամբ: Անկախության հռչակագրի ամբողջական տեքստի համար տե՛ս <http://www.mfa.gov.il/MFA/Peace%20Process/Guide%20to%20the%20Peace%20Process/Declaration%20of%20Establishment%20of%20State%20of%20Israel>:

<sup>6</sup> Ֆրանսերենից թարգմանաբար՝ գոյություն ունենալու պատճառը:

<sup>7</sup> Ավելի մանրամասն տե՛ս Navot S., նշված աշխատությունը, էջ 200:

<sup>8</sup> Պաղեստինի տարածքի նկատմամբ բրիտանական մանդատը՝ 1918-1948թթ.:

<sup>9</sup> Տե՛ս HCJ 73/53 Kol ha'am v. Minister of Interior (1953) 7 (2) PD 871:

<sup>10</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>11</sup> Տե՛ս Navot S., նշված աշխատությունը, էջ 200, Barak A., նշված աշխատությունը, էջ 13:

<sup>12</sup> Տե՛ս Navot S., նույն տեղը:

<sup>13</sup> Նման մեկնաբանությունը, պրոֆ. Բարաքի բնորոշմամբ, «նպատակային» մեկնաբանություն է, ըստ այդմ՝ սուբյեկտիվ նպատակից (օրենսդրի մտադրությունը) բացի՝ գոյություն ունի նաև օբյեկտիվ նպատակ՝ իրավական համակարգի

նաև, այսպես կոչված՝ մարդու իրավունքների և այլ հանրային շահերի «հավասարակշռման բանաձևը», որի համաձայն՝ արտահայտվելու ազատության սահմանափակումը կարող էր արդարացվել միայն հասարակական անդորրը լրջորեն վտանգող «գրեթե անխուսափելի» ոտնձգությունը կանխելու նպատակով<sup>14</sup>: Իսրայելի գերագույն դատարանի դիրքորոշումն այսպիսին էր նաև ազատական ժողովրդավարություններում լայն ճանաչում ստացած մարդու այլ հիմնական իրավունքների և ազատությունների, այդ թվում՝ աշխատանքի ազատության<sup>15</sup>, տեղաշարժվելու

ազատության<sup>16</sup>, խղճի և կրոնի ազատության<sup>17</sup>, ինչպես նաև իրավահավասարության<sup>18</sup> մեկնաբանության հարցում:

Այսպիսով, ինչպես նշում է պրոֆ. Սյուզի Նավոտը՝ Իսրայելի գերագույն դատարանի կողմից «Քոլ հա՛ամ» գործի շրջանակներում մարդու իրավունքների կարևորության ճանաչումը՝ նախադեպի պարտադիրության սկզբունքի ուժով, Իսրայելի իրավական համակարգում դարձավ իրավական նորմ: Դրանով յուրաքանչյուր մարդ իրավունք ստացավ մարդու իրավունքները հարգելու պարտականության խախտման

հիմնարար արժեքները, այդ թվում՝ իշխանությունների տարանջատումը, իրավունքի գերակայությունը և դատական անկախությունը: Ըստ հեղինակի. «...Յուրաքանչյուր ստատուս պետք է մեկնաբանվի՝ ելնելով այն կանխադրույթից, որ դրա նպատակը մարդու իրավունքների առաջընթացն է: Այս սկզբունքից շեղումը թույլատրելի է միայն հակառակը պարզ, հստակ և միանշանակ կերպով սահմանված լինելու դեպքում:» Այնուհետև հեղինակը շարունակում է. «Ըստ այդմ՝ երբ օրենսդիրը նախատեսում է մարդու իրավունքները խախտելու իրավասություն, նման իրավասության իրացման շրջանակը պետք է որոշվի, մի կողմից՝ պետական իրավագործությունը և, մյուս կողմից՝ խախտման ենթակա իրավունքը հավասարակշռելու միջոցով:» Այս մոտեցումը, ըստ հեղինակի, նպաստում էր մարդու իրավունքների լայն պաշտպանությանը՝ միաժամանակ նաև չխախտելով պառլամենտի գերակայությունը, ապա շարունակելով՝ նշում է. «Նման մոտեցման հիմնական թերությունն այն էր, որ այն հնարավորություն չէր տալիս անվավեր ճանաչելու մարդու իրավունքները խախտող՝ հավասարակշռման բանաձևով թույլատրելի սահմանն անցնող ստատուտները: Մեկնաբանության իր գործառույթն իրականացնելիս Գերագույն դատարանը նշված փուլում (մինչև 1992թ. Հիմնական օրենքների ընդունումը՝ Վ.Կ.) այդպես էլ չանցավ մեկնաբանության այս սահմանը» (Barak A., նշված աշխատությունը, էջ 13-16): Նշվածի կապակցությամբ հիմնականում նույն դիրքորոշումն ունի պրոֆ. Սյուզի Նավոտը՝ խոսելով Իսրայելի գերագույն դատարանի կողմից օգտագործվող «ենթադրական» և «մեկնաբանողական» գործիքների մասին, որոնց համաձայն՝ օրենսդիրը նպատակ չունի խախտելու մարդու իրավունքները, երկու տարբեր մեկնաբանությունների հիմք տվող ստատուտը պետք է մեկնաբանվեր՝ հօգուտ մարդու իրավունքների առավելագույնս պաշտպանվածության: Նման մեկնաբանությունը, միաժամանակ, ենթադրում է մարդու իրավունքները խախտող ստատուտի սահմանափակ մեկնաբանություն: Բացի այդ՝ պետական իշխանության բոլոր մարմինների և պաշտոնատար անձանց համար դա սահմանում է վերջիններիս գործունեության իրականացման սկզբունքը, որի համաձայն՝ մարդու իրավունքների խախտումն արգելվում է՝ բացառությամբ եթե հակառակն ուղղակիորեն նախատեսված է ստատուտում (Suzie Navot, նույն տեղը, էջ 201):

<sup>14</sup> «Հավասարակշռման բանաձևի» գործնական կիրարկումն ամբողջական ընկալելու համար անհրաժեշտ ենք համարում ներկայացնել կոնկրետ օրինակ: Այսպես՝ Պաղեստինում դեռևս մանդատային իշխանության տարիներին՝ 1929թ. ընդունված Գերագույն հանձնակատարի օրոհանսով սահմանվում էր, որ Գերագույն հանձնակատարն իրավասու է մշտապես կամ ժամանակավորապես արգելելու լրագրի գործունեությունը, եթե լրագիրը իրապարակում է այնպիսի հոդված կամ տեղեկատվություն, որը, Հանձնակատարի գնահատմամբ, հավանականորեն, կվտանգեր հասարակական անդորրը: Այսպես, ինչպես տեսնում ենք՝ լրագրի գործունեությունը դադարեցնելու իրավասությունը և օրինականությունը սահմանված էր միանշանակ, որպիսի պարագայում լուծման ենթակա միակ հարցը նման իրավասության իրականացման շրջանակը պարզելն է, որը պետք է իրականացվի «հավանականորեն» բառի մեկնաբանությունից: Մեկնաբանությունը, ինչպես նշվել է վերևում, պետք է հավասարակշռեր, մի կողմից՝ հասարակական անդորրը և, մյուս կողմից՝ արտահայտվելու ազատությունը: Ըստ այդմ՝ արտահայտվելու ազատության խախտումը կարող է թույլատրելի համարվել միայն այն դեպքում, երբ *գրեթե հաստատու է*, որ իրապարակվող հոդվածը կամ տեղեկատվությունը կարող է լրջորեն վտանգել հարարակական անդորրը: Երբ այդ վտանգն անմիջական չէ կամ քիչ հավանական է, կամ վտանգն ինքնին լուրջ չէ՝ մոտ է ժողովրդավարական հասարակությունում թույլատրելիի չափին, արտահայտվելու ազատությունը չի կարող սահմանափակվել: Ինչպես տեսնում ենք՝ Իսրայելի կողմից որդեգրված այս մոտեցումը հիմնական գծերով նման է ԱՄՆ կողմից արտահայտվելու ազատության հարցում որդեգրված մոտեցմանը՝ Սահմանադրության 1-ին փոփոխության համատեքստում: ԱՄՆ-ում հաշվեկշռման նմանատիպ բանաձևը հայտնի է՝ որպես «ակնհայտ և իրական վտանգի» թեստ: Այս մասին ավելի մանրամասն տես Barak A., նշված աշխատությունը, էջ 14-15:

<sup>15</sup> Տես, օրինակ՝ *Hilron v. The Fruit Council*, supra note 4; *HCJ 14/78 Agbaria v. The Fruit Council* [1978] *IsrSC* 32(3) 794:

<sup>16</sup> Տես, օրինակ՝ *HCJ 672/87 Atmalia v. The Northern Commander* [1989] *IsrSC* 42(4) 708:

<sup>17</sup> Տես, օրինակ՝ *HCJ 47/82 Progressive Judaism Movement fund v. The Minister of Religions* [1989] *IsrSC* 43(2) 661:

<sup>18</sup> Տես, օրինակ՝ *HCJ 5432/03 SHIN for Equal Representation of Women v. The Board for Cable and Setellite Broadcasting* [2004] *IsrSC* 58(3) 65:

հիմքով դիմելու Իսրայելի արդարադատության բարձր դատարան<sup>19</sup>:

Աստիճանաբար մարդու գրեթե բոլոր հիմնական իրավունքներն<sup>20</sup> իրենց ամրագրումն ստացան դատական որոշումներում՝ կազմելով, այսպես կոչված՝ «իրավունքների դատական բիլլ», որը ոչ այլ ինչ է, եթե ոչ Իսրայելի գերագույն դատարանի կողմից ճանաչում ստացած՝ մարդու իրավունքների «ժողովածու»: Դրանք այն իրավունքներն են, որոնք ամրագրված են ոչ թե ստատուտներում, այլ՝ Գերագույն դատարանի որոշումներում: Հատկանշական է, որ «Մարդու արժանապատվության և ազատության մասին»<sup>21</sup> Հիմնական օրենքի ընդունումից շատ առաջ դրանով նախատեսված մարդու հիմնական իրավունքներն արդեն իսկ ճանաչվել էին Գերագույն դատարանի կողմից՝ դրանց որևէ նորմատիվ հիմք՝ ամրագրում ունենալու հանգամանքից անկախ:

Այս համատեքստում կցանկանայինք անդրադառնալ, մասնավորապես, Իսրայելի գերագույն դատարանի կողմից մարդու անձեռնմխելիության իրավունքի ճանաչմանը: Այսպես՝ Կատլանի գործով<sup>22</sup> Գերագույն դատարանի առջև բարձրացված հարցի էությունը հետևյալն էր. «Բանտի վարչակազմն արդյո՞ք իրավունք ունի կոլ տված թմրանյութի հայտանաբերման նպատակով կալանավորված անձին՝ առանց վերջինիս համաձայնության, հոգնա անել այն պայմաններում, երբ պարզվել էր, որ բանտում նման եղանակով թմրամիջոցներ են մուտք արվում»<sup>23</sup>: Գերագույն դատարանը սահմանեց, որ Իսրայելում յուրաքանչյուր ոք ունի անձի անձեռնմխելիության և իր արժանապատվությունը հարգելու իրավունք, այդ թվում՝ կանանավորվածներն ու դատապարտյալները: Կալանավորված անձի նկատմամբ հոգնա կատա-

րելը՝ առանց նրա համաձայնության և առանց բժշկական ցուցումների, խախտում է կալանավորվածի անձի անձեռնմխելիության իրավունքը և ոտնձգում է նրա արժանապատվության դեմ: Ինչպես որոշման մեջ նշում է դատավոր Ահարոն Բարաքը՝ մարդու անձեռնմխելիության իրավունքը, *inter alia*, բխում է նաև Անկախության հռչակագրից, ինչի ուժով Իսրայելի իրավական համակարգում համարվում է «գերակա» իրավունք, հետևաբար՝ վարչական մարմինը, առանց օրենքով ուղղակիորեն նախատեսված լինելու, իրավունք չունի խախտելու դա»<sup>24</sup>: Նույն մոտեցման կիրառմամբ, ինչպես արդեն նշել ենք, դատական որոշումներով ամրագրվեցին ճանաչում ստացած՝ մարդու այլ հիմնական իրավունքներ:

Այդուհանդերձ՝ պետք է ընդունել, որ իրավունքների նման ճանաչումը սահմանափակ բնույթ ուներ: Սահմանադրության և դատական վերահսկողության բացակայության պայմաններում դատարանը չէր կարող անվավեր ճանաչել այդ իրավունքներին ակնհայտորեն հակասող ստատուտները: Այսպես՝ «Ռոզոզինսկին ընդդեմ Իսրայել պետության» գործով Իսրայելի գերագույն դատարանն սահմանեց, որ «ստատուտը, որով Իսրայել պետությունում հրեաների ամուսնության և ամուսնալուծության հարցերը վերապահվում են ռաբինական դատարանների իրավասությանը, և որը, միաժամանակ՝ սահմանում է, որ նման ամուսնություններն ու ամուսնալուծությունները պետք է կատարվեն՝ Թորայի իրավունքին համաձայն, գերակայություն ունի խղճի ազատության սկզբունքի նկատմամբ»<sup>25</sup>:

Այսպիսին էր իրավունքների դատական ամրագրման ընդհանուր բնութագիրն Իսրայել պետությունում՝ նախքան 1992թ.: Ինչպես հաճախ նշվում է մասնագիտական գրականության մեջ՝

<sup>19</sup> Տե՛ս Suzie Navot, նշված աշխատությունը, էջ 200:

<sup>20</sup> Այդ թվում՝ այնպիսի քաղաքական իրավունքներ, ինչպիսիք են ընտրելու և ընտրվելու իրավունքները, ինչպես նաև տնտեսական և սոցիալական մի շարք իրավունքներ:

<sup>21</sup> Տե՛ս Basic Law: Human Dignity and Liberty; 1992 [http://www.knesset.gov.il/laws/special/eng/basic3\\_eng.htm](http://www.knesset.gov.il/laws/special/eng/basic3_eng.htm):

<sup>22</sup> Տե՛ս HCJ 355/79 Katlan v. Prison Services, 34(3) PD 294, 298:

<sup>23</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>24</sup> Դատարանի որոշման մեջ, մասնավորապես, ասվում է. «Յուրաքանչյուր մարդ Իսրայելում ունի իր անձի անձեռնմխելիության իրավունք: Դա ամփոփված է սույն դատարանի կողմից ճանաչված «իրավունքների դատական հռչակագրում»: Բանտի պատերը դատապարտյալներին չեն մեկուսացնում իրենց արժանապատվությունից... դատապարտյալը զրկված է ազատությունից, նա չի զրկվի նաև արժանապատվությունից»: Տե՛ս Navot S., նշված աշխատությունը, էջ 200-201:

<sup>25</sup> Տե՛ս CA 450/70 Rogozinsky v. State of Israel, 26(1) PD 129:

«իրավունքների դատական բիլը», գոնե մարդու իրավունքների մասով, փոխարինեց պետության սահմանադրությանը: Անվիճելի է, որ մարդու իրավունքների դատական ամրագրումը Գերագույն դատարանի կատարած ամենամեծ ներդրումն էր Իսրայելի ժողովրդավարության զարգացման հարցում<sup>26</sup>: Սակայն, միևնույն ժամանակ՝ ակնհայտ էր, որ այս իրավունքները «թույլ» իրավունքներ էին<sup>27</sup> այն իմաստով, որ դրանց ուժով Գերագույն դատարանն իրավասու չէր անվավեր ճանաչելու մարդու իրավունքներին ակնհայտորեն հակասող ստատուտները:

Հետևաբար՝ Իսրայելի սահմանադրաիրավական համակարգում Մարդու իրավունքների հռչակագրի հիմնական դերակատարությունը պետք է լիներ հիմնական իրավունքների կարգավիճակի ուժեղացումը, որը, մի կողմից՝ թույլ կտար սահմանափակելու Քնեսեթի՝ մարդու իրավունքները սահմանափակելու օրենսդրական իրավազորությունը և, մյուս կողմից՝ կերաշխավորեր դատական վերահսկողության իրականացումը՝ այդ սահմանափակումների պահպանումն ապահովելու նպատակով: Հատկապես վերջին գործառույթի կյանքի կոչման համար կարևոր էր ոչ այնքան մարդու իրավունքների ոլորտում Հիմնական օրենքների ըն-

դունումը, որքան 1995թ., այսպես կոչված՝ Միգրախի բանկի գործով Իսրայելի գերագույն դատարանի կողմից դրանց տված մեկնաբանությունը, որին և անդրադառնում ենք ստորև:

Այսպես՝ մարդու իրավունքների կարգավիճակի հետ կապված կարևորագույն փոփոխությունն արձանագրվեց 1992թ.՝ Քնեսեթի կողմից «Մարդու արժանապատվության և ազատության մասին» և «Զբաղվածության ազատության մասին» Հիմնական օրենքների ընդունմամբ<sup>28</sup>: Այնուհետև, մի շարք դատական գործերով՝ «Բանկ հա՛միգրախի հա՛մեուխադ» գործից սկսած<sup>29</sup>, Իսրայելի գերագույն դատարանը սահմանեց, որ այս Հիմնական օրենքները կազմում են Իսրայելի՝ մարդու իրավունքների հռչակագիրը<sup>30</sup>: Այդ օրենքներով ամրագրվեցին մի շարք իրավունքներ՝ մարդու արժանապատվությունը, ազատությունը, սեփականությունը, մասնավոր կյանքի գաղտնիությունը, զբաղվածության ազատությունը, ինչպես նաև ապօրինի կալանավորումից, ազատագրվումից և արտահանման մից արգելքի սկզբունքը: Հիմնական օրենքներով սահմանվեց նաև, որ նշված բոլոր մարդու իրավունքները ենթակա են «սահմանափակող դրույթի» գործողությանը<sup>31</sup>, որի համաձայն՝ արգելվում է նշված Հիմնական օրենքներով սահ-

<sup>26</sup> Ընդունված է համարել, որ Իսրայելի Գերագույն դատարանի դերը՝ որպես քաղաքականություն մշակողի, բավականին մեծ է (Barak A. The Constitutional Revolution – 12th Anniversary // Law&Business 3, 5 (2004)): Վերջինս իր գործունեությունն իրականացնում է «Դատական իշխանության մասին» Հիմնական օրենքի հիման վրա: Գերագույն դատարանը, ինչպես ընդունված է համարել, երկու հիմնական գործառույթ ունի: Առաջինը՝ նա, որպես ընդհանուր իրավասության դատարան, լսում է իր իրավասությանը վերապահված բոլոր գործերը: Երկրորդ, որպես առաջին ատյան, *inter alia*, լսում է օրենքին հանրային իշխանության մարմինների գործունեության համապատասխանության հարցերով գործերը: Երկրորդ խումբ գործերը քննելիս Գերագույն դատարանը հանդես է գալիս որպես Արդարադատության բարձր դատարան (եբրայերեն հապավումը՝ ԲԱԳԱՅ): «Դատական իշխանության մասին» Հիմնական օրենքի ամբողջական տեքստի համար տես [https://www.knesset.gov.il/laws/special/eng/basic8\\_eng.htm](https://www.knesset.gov.il/laws/special/eng/basic8_eng.htm):

<sup>27</sup> Այս իրավունքներն ունենին «փափուկ» սահմանադրական սկզբունքների կարգավիճակ: Դրանք այնպիսի սկզբունքներ են, որոնք կարող են սահմանափակվել օրենսդիր մարմնի կողմից՝ օրենքների հիման վրա, միաժամանակ, սակայն, օրենքները մեկնաբանելիս պետք էր ղեկավարվել դրանց պահանջներով, իսկ գործադիր իշխանության մարմիններն իրենց վարչական հայեցողությունն իրականացնելիս պետք է հաշվի առնեին դրանց պահանջները: Միևնույն ժամանակ՝ դրանք համարվում են «փափուկ» իրավունքներ, քանի որ չէին սահմանափակում Քնեսեթի օրենսդրական իշխանությունը:

<sup>28</sup> Նշված Հիմնական օրենքներով ամրագրված՝ մարդու հիմնական իրավունքների մանրամասն վերլուծության, ինչպես նաև մարդու իրավունքների միջազգային իրավունքի և, մասնավորապես՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի համատեքստում դրանց համապատասխանության մասին տես, օրինակ՝ Kretzmer D. Constitutional Law: Introduction to the law of Israel // Introduction to the Law of Israel / edited by Shapira A., DeWitt-Arar K. C. The Hague, London, Boston. Kluwer Law International, 1995, 39-58 էջ: Հիմնական օրենքների ամբողջական տեքստի համար տես [http://www.jewishvirtuallibrary.org/jsource/Politics/Basic\\_Law\\_Human\\_Dignity\\_and\\_Liberty.html](http://www.jewishvirtuallibrary.org/jsource/Politics/Basic_Law_Human_Dignity_and_Liberty.html), [http://www.jewishvirtuallibrary.org/jsource/Politics/Basic\\_Law\\_Freedom\\_of\\_Occupation.html](http://www.jewishvirtuallibrary.org/jsource/Politics/Basic_Law_Freedom_of_Occupation.html):

<sup>29</sup> Տես United Mizrahi Bank v. Migdal Agricultural Cooperative, supra note 6.

<sup>30</sup> Տես օրինակ՝ HCJ 5578/02 Manor v. The Minister of Finance [2004] IsrSC 59 (1) 729:

<sup>31</sup> Տես «Մարդու արժանապատվության և ազատության մասին» Հիմնական օրենք, Մաս 8-րդ, ինչպես նաև «Զբաղվածության ազատության մասին» Հիմնական օրենքի Մաս 4-րդ, նշված տեղերում:

մանված իրավունքի (իրավունքների) որևէ խախտում՝ բացառությամբ, եթե դա նախատեսված է Իսրայել պետության արժեքներին համապատասխանող՝ արդարացի նպատակի համար ընդունված օրենքով կամ այդպիսի օրենքով ուղղակիորեն նախատեսված որոշմամբ և իրականացվում է պահանջվածից ոչ ավելի չափով (համաչափորեն՝ Վ.Կ.)»<sup>32</sup>: Հիմնական օրենքներով սահմանված մեկ այլ դրույթի համաձայն՝ պետական կառավարման բոլոր մարմինները պարտավոր են հարգել նշված մարդու իրավունքները<sup>33</sup>:

Անդրադառնալով Իսրայելի գերագույն դատարանի՝ նախկինում արտահայտած դիրքորոշմանն առ այն, որ պետական իշխանության մարմիններին վերաբերող Հիմնական օրենքները թեև կազմում են երկրի Սահմանադրությունը, այդուհանդերձ՝ դրանք սովորական ստատուտի կարգավիճակ ունեն, պրոֆ. Ահարոն Բարաքը հիմնական օրենքների կարգավիճակի վերաբերյալ հարցադրում է անում, թե՛ արդյո՞ք նման դիրքորոշումը կիրառելի է նաև

մարդու իրավունքներին վերաբերող Հիմնական օրենքների նկատմամբ»<sup>34</sup>:

Այս հարցադրումների պատասխանը, ինչպես արդեն նշել ենք, տրվեց 1995թ.: Այսպես՝ «Բանկ հա՛միզրաֆի հա՛մեուխադ» գործով<sup>35</sup> կայացված համապարփակ դատական որոշմամբ սահմանվեց, որ մարդու իրավունքներին վերաբերող Հիմնական օրենքներն ունեն սահմանադրական, վերօրենսդրական կարգավիճակ: Դատարանի որոշմամբ սահմանվեց նաև, որ Հիմնական օրենքներում թվարկված մարդու իրավունքները խախտող և «սահմանափակող դրույթի»<sup>36</sup> պահանջներին չհամապատասխանող սովորական ստատուտը հակասահմանադրական է, և ցանկացած դատարան կարող է դա անվավեր ճանաչել:

Այսպես՝ ինչպես մասնագիտական գրականության մեջ ընդունված է համարել, 1995թ. Իսրայելում տեղի ունեցավ սահմանադրական հեղափոխություն<sup>37</sup>: Հիմնական օրենքներով ամրագրված մարդու իրավունքներին տրվեց սահ-

<sup>32</sup> Այսինքն՝ եթե նախկինում Հիմնական օրենքները միայն «ըստ ձևի» էին պաշտպանված՝ փոփոխության համար հատուկ մեծամասնության վերաբերյալ պահանջով, հետայսու դրանք պետք է պաշտպանվեին նաև ըստ բովանդակության՝ նշված «սահմանափակող դրույթի» ուժով: Այդուհանդերձ՝ մարդու իրավունքների ոլորտում ընդունված Հիմնական օրենքներից «Զբաղվածության ազատության մասին» Հիմնական օրենքում ևս ըստ ձևի պաշտպանություն էր նախատեսված: Այսպես՝ «Զբաղվածության ազատության մասին» Հիմնական օրենքի Մաս 7-րդի համաձայն՝ «Հիմնական օրենքը չի կարող փոփոխվել այլ կերպ, քան Քնեսեթի անդամների ձայների մեծամասնությամբ ընդունված Հիմնական օրենքով»: Այսինքն՝ տվյալ դեպքում պաշտպանված էր Հիմնական օրենքն ամբողջությամբ, ավելին՝ Հիմնական օրենքը կարող էր փոփոխվել միայն մեկ այլ Հիմնական օրենքով, ինչը նորամուծություն էր նախկինում ընդունված Հիմնական օրենքների համեմատությամբ: «Մարդու արժանապատվության և ազատության մասին» Հիմնական օրենքը, որի Մաս 1-ի համաձայն՝ դրա նպատակը մարդու արժանապատվության և ազատության պաշտպանությունն է, թեև ըստ ձևի պաշտպանված չէր, այսինքն՝ փոփոխության համար հատուկ մեծամասնություն չէր պահանջվում, բայց, ինչպես նշվել է՝ պարունակում էր «սահմանափակող դրույթ», այսինքն՝ պաշտպանված էր ըստ բովանդակության:

<sup>33</sup> Տե՛ս «Մարդու արժանապատվության և ազատության մասին» Հիմնական օրենք, Մաս 11-րդ, ինչպես նաև «Զբաղվածության ազատության մասին» Հիմնական օրենք, Մաս 5-րդ՝ նշված տեղերում:

<sup>34</sup> Անդրադառնալով մարդու իրավունքների ոլորտում ընդունված Հիմնական օրենքների կարգավիճակին՝ պրոֆ. Ա. Բարաքը հարցադրումներ է անում, թե. «Արդյո՞ք դրանք ունեն սովորական ստատուտի կարգավիճակ՝ ինչպես Նոր Զեւլանդիայում: Արդյո՞ք դրանց կարգավիճակը նույնն է, ինչ Անգլիայում 1998թ. Մարդու իրավունքների վերաբերյալ օրենքով սահմանված մարդու իրավունքների կարգավիճակը: Կամ էլ, գուցե, դրանք ունեն այն նույն կարգավիճակը, ինչ Մարդու իրավունքների և ազատությունների կանադական խարտիայով կամ էլ ամերիկյան Իրավունքների բիլով սահմանված՝ մարդու իրավունքների կարգավիճակը»: Ապա շարունակում է. «Հիմնական օրենքներում դրանց իրավական կարգավիճակին վերաբերող որևէ դրույթ չկա: Ոչ էլ նշում կա այդ Հիմնական օրենքները Սահմանադրության մաս կազմելու վերաբերյալ: Ավելին՝ Հիմնական օրենքների և սովորական օրենքների միջև հնարավոր հակասության դեպքում Հիմնական օրենքների գերակայությունը սահմանող որևէ դրույթ նույնպես նախատեսված չէ: Եվ վերջապես՝ դրանց գերակայությունը սահմանող որևէ նորմ ևս առկա չէ»: Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Barak A., նշված աշխատությունը, էջ 17-18):

<sup>35</sup> Տե՛ս United Mizrahi Bank v. Migdal Agricultural Cooperative, նույն տեղը:

<sup>36</sup> Ինչպես հիշում ենք, ըստ սահմանափակող դրույթի՝ Հիմնական օրենքներով ամրագրված մարդու իրավունքների խախտումը թույլատրվում էր, եթե նման հնարավորությունը՝ ա) նախատեսված է Իսրայել պետության արժեքներին համապատասխանող օրենքով, բ) օրենքն ինքնին պետք է ընդունված լիներ արդարացի նպատակի համար, և գ) նման խախտումը չպետք է գերազանցեր անհրաժեշտ չափը կամ էլ, եթե նշված պահանջներին համապատասխան ընդունված օրենքն ուղղակիորեն նախատեսեւում է դրա հիման վրա ընդունված որոշմամբ նման խախտում իրականացնելու հնարավորությունը:

<sup>37</sup> Տե՛ս Barak A. The Constitutional Revolution-12th Anniversary, Law&Business 3, 5 (2004): Այս կապակցությամբ առավել

մանադրական, վերօրենսդրական կարգավիճակ: Պաշխատանքի իշխանությունը սահմանափակվեց: Հեղափոխությունն ունեցավ նաև հեռահար ազդեցություն. իսրայելյան իրավունքը սահմանադրականացվեց<sup>38</sup>: Ինչպես նշվում է հիշատակված որոշման մեջ. «Իրավունքի յուրաքանչյուր ճյուղ, յուրաքանչյուր իրավական նորմ այլևս պետք է համապատասխանի այս նոր իրավակարգին: Իրավունքի յուրաքանչյուր ոլորտ պետք է փոխի իր հիմնարար հայեցակարգերը և հիմնական գաղափարները՝ այս նոր սահմանադրական իրավակարգին համապատասխանելու համար: Իրականում՝ սահմանադրական հեղափոխությունը հաստատեց նոր հաշվեկշիռ անձնական ազատության և պետական իշխանության միջև, ինչպես նաև մարդկանց՝ մեկը մյուսի հանդեպ ունեցած ազատության առնչությամբ: Ներքին կապ ստեղծվեց մարդու իրավունքների և դրանց սահմանափակումը հիմնավորող հանրային շահի միջև: Իրավունքը և այդ իրավունքի սահմանափակումը հետայսու բխում են նույն հիմքից»<sup>39</sup>: Ինչպես նշում է պրոֆ. Բարաքը՝ եթե նախկինում իրավական հոետորաբանությունը հիմնված էր իշխանության, ուժի և իշխանական հայեցողության վրա, ապա ներկայումս դրա կենտրոնում նաև մարդու իրավունքներն են: Նախկինում՝ իշխանական ուժերի հաշվեկշիռն էր սահմանում մարդու իրավունքները, այժմ «արդարա-

ցիորեն» հաշվեկշռված մարդու իրավունքներն են որոշում պետական իշխանությունը<sup>40</sup>:

Իսրայելյան սահմանադրական հեղափոխությանը հաջորդած ավելի քան քսան տարիների ընթացքում որևէ Հիմնական օրենք, այդ թվում՝ մարդու իրավունքների ոլորտում, այլևս չընդունվեց: Ինչպես և ժամանակին կարծիք էր հայտնվում մասնագիտական գրականության մեջ՝ եթե Քնեսետը չհաջողի Սահմանադրությունն ավարտին հասցնելու իր գործը, Գերագույն դատարանն «իշխանությունը կվերցնի իր ձեռքը»՝ ավարտին հասցնելով դա՝ Հիմնական օրենքները մեկնաբանելով այնպես, որ դրանց մեջ ներառվեն նաև այն իրավունքները, որոնք ուղղակիորեն ամրագրված չեն այդ Հիմնական օրենքներում: Մասնավորապես՝ պրոֆ. Ա. Բարաքի կողմից որդեգրված այս մոտեցման շնորհիվ՝ մի շարք մարդու իրավունքներ և հիմնարար ազատություններ մեկնաբանվեցին՝ որպես Հիմնական օրենքով երաշխավորված արժանապատվության իրավունքի մաս կազմող<sup>41</sup>: Այդուհանդերձ՝ այնպիսի կարևոր իրավունքներ, ինչպիսիք են կրոնի և խղճի ազատությունը, իրավահավասարությունը և այլն, այդպես էլ օրենսդրական ամրագրում չունեն մինչ օրս, ինչը, թերևս՝ պետք է ընկալել Իսրայելի երկակի՝ հրեական և ժողովրդավարական բնույթի համատեքստում, որը, սակայն, դուրս է սույն հոդվածի ուսումնասիրության շրջանակներից:

հետաքրքրական է սահմանադրագետ պրոֆ. Սյուզի Նավոտի տեսակետը՝ ըստ որի. «Սահմանադրական հեղափոխությունն ակնհայտորեն տեղի չի ունեցել մարդու իրավունքների ոլորտում, այլ, առավելապես՝ ինստիտուցիոնալ-սահմանադրական ոլորտում: Սահմանադրական հեղափոխությունը կարևոր է հատկապես Հիմնական օրենքների կարգավիճակում տեղի ունեցած փոփոխության առումով, մինչդեռ իրավունքների կարգավիճակն ինքնին էապես չի փոխվել Հիմնական օրենքների հետևանքով: Այդ իրավունքներն արդեն իսկ գոյություն ունեին Գերագույն դատարանի որոշումներում, պարզապես դրանցից որոշները ներկայումս պաշտպանված են Հիմնական օրենքներում: Էական փոփոխությունը ոչ թե իրավունքների առկայության կամ բացակայության հարցում է, այլ՝ պաշտպանված իրավունքներին հակասող օրենքներն անվավեր ճանաչելու՝ Գերագույն դատարանի իրավասության մեջ, ինչը նախկինում իրագործելի չէր (այս մասին տես Navot S., նույն տեղ, էջ 203):

<sup>38</sup> Տես Barak A. The Constitutionalization of the Israeli legal system as Result of the Basic Laws and its Effect on Procedural and Substantive Criminal Law // 31 Israel Law Review 3, 1997:

<sup>39</sup> Տես United Mizrahi Bank v. Migdal Agricultural Cooperative, նույն տեղը:

<sup>40</sup> Տես Barak A., նշված աշխատությունն, էջ 19:

<sup>41</sup> Այսպես՝ Ահարոն Բարաքը փորձում է որոշ իրավունքներ «բխեցնել»՝ «Մարդու արժանապատվության և ազատության մասին» Հիմնական օրենքով երաշխավորված՝ մարդկային արժանապատվության զուտ էությունից: Փորձելով ցույց տալ արժանապատվության կարևորությունը՝ պրոֆ. Բարաքը նշում է. «Կացարանից զրկված մարդը մարդ է, ում արժանապատվությունը ոտնահարված է, քաղցած մարդը մարդ է, ում արժանապատվությունը ոտնահարված է, առանց առաջին բժշկական օգնության թողնված մարդը մարդ է, ում արժանապատվությունը ոտնահարված է, անմարդկային պայմաններում ապրող մարդը մարդ է, ում արժանապատվությունը ոտնահարված է»: Ըստ այդմ՝ ըստ Բարաքի՝ մարդու արժանապատվությունը հարգելու հարցում պետությունն ունի թե՛ դրական և թե՛ բացասական պարտականություններ: Նման մոտեցման պայմաններում, ըստ Բարաքի՝ առաջին պլան է մղվում սահմանափակող դրույթը: Սահմանափակող դրույթի՝ պրոֆ. Բարաքի մեկնաբանության և առնչակից այլ հարցերի հետ կապված՝ ավելի մանրամասն տես Barak A., նշված աշխատությունը, էջ 21-23:

**ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ԱԾ Երևան քաղաքի  
Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի պետ,  
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի  
իրավագիտության ամբիոնի հայցորդ

**ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ  
ԿԱՅԱՋՎՈՂ ԱԿՏԵՐԻ (ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ)՝ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ  
ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Մինչ վարույթների շրջանակում կայացվող որոշումներին անդրադառնալը՝ պարզենք նաև, թե ինչ բնորոշում ունի իրավական ակտը՝ ըստ ներպետական օրենսդրության:

Ըստ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի. «Իրավական ակտը ժողովրդի, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական կամ համայնքային հիմնարկների, ինչպես նաև իրավաբանական անձանց, դրանց առանձնացված ստորաբաժանումների կամ հիմնարկների՝ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով իրենց լիազորությունների շրջանակում ընդունված պաշտոնական գրավոր փաստաթուղթ է, որով սահմանվում են պարտադիր ճանաչման, պահպանության, պաշտպանության, կատարման կամ կիրառման ենթակա իրավունքներ, պարտականություններ, պատասխանատվություններ, ինչպես նաև սահմանափակումներ կամ այլ կանոններ (բոլորը միասին՝ վարքագծի կանոններ):»

Իրավական ակտը կարող է ունենալ ժամանակավոր կամ մշտական բնույթ և նախատեսված լինել մեկանգամյա կամ բազմակի կիրառման համար»:<sup>1</sup>

«Իրավական ակտերն իրենց բնույթով լինում են նորմատիվ, անհատական (ոչ նորմատիվ) կամ ներքին (լոկալ)»:<sup>2</sup>

Վերջիններիս ցանկում անդրադառնալով մեր ուսումնասիրության առարկան ներկայացնող անհատական կամ ոչ նորմատիվ իրավական ակտին՝ նշենք, որ վերոնշյալ մարմինների՝

իրենց լիազորությունների սահմաններում ընդունած իրավական ակտն ունի ժամանակավոր կամ մշտական բնույթ, նախատեսված է մեկանգամյա կամ բազմակի կիրառման համար, չի պարունակում իրավական նորմ և սահմանում է վարքագծի կանոններ միայն այդտեղ ուղղակի անհատապես նշված (նախատեսված) ֆիզիկական և իրավաբանական անձանց, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև պետական և համայնքային հիմնարկների համար: Անհատական իրավական ակտի ամենակարևոր առանձնահատկությունն այն է, որ իրավասու մարմնի կողմից ընդունվում է միայն նորմատիվ իրավական ակտի համաձայն և վերջինիս սահմանած շրջանակում<sup>3</sup>:

Սույն աշխատանքում առաջադրված նպատակների իրագործման համար կարևոր և անհրաժեշտ նշանակություն ունեցող հարցադրումներ են վարչական և կատարողական վարույթներով կայացվող Որոշումների իրավական ուժը, բովանդակությունը, ձևն ու նշանակությունը, գործողության բնույթը և ծավալը՝ ըստ ընդունող մարմինների:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վարչական ակտ հասկացության բաղադրիչները, դրանց տեսական, ինչպես նաև գործնական բնորոշումները բավականին ծավալուն են և դուրս են սույն աշխատանքի բովանդակային շրջանակներից ու միաժամանակ կարող են հանդիսանալ առանձին ուսումնասիրության նյութ, կբավարարվենք միայն ընդհանուր և առանցքային բնորոշումների նկարագրությամբ:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 98 2017

<sup>1</sup> Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2002.05.21/15(190), հոդված 344, օրենք, ՀՕ-320, ուժի մեջ է մտել 31.05.2002թ.:  
<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, հոդ. 2, մաս 2:  
<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, հոդ. 2, մաս 3:

Իրավական նորմերը (նորմատիվ իրավական ակտերը, օրենքները), որպես կանոն, չեն կարող ինքնուրույնաբար կենսագործվել (իրենք իրենց ուժով կատարվել<sup>4</sup>)։ դրանց կատարումը՝ օբյեկտիվ իրականության նյութաիրավական արժևորումը, կարող է ապահովվել, երբ դրանք կոնկրետացվեն և ստանան անհատականացված ուղղվածություն։ Հայտնի է, որ վարչական մարմինների նպատակն օրենքների կատարումն է, և անհրաժեշտության դեպքում վարչական մարմիններն իրենք կարող են ընդունել ենթաօրենսդրական նորմատիվ ակտեր, եթե օրենքը վարչական մարմինն նման լիազորություն է վերապահում։ Այդ ակտերը նույնպես միտված են կոնկրետացնելու օրենքի պահանջները, սակայն, լինելով նաև ընդհանուր և վերացական նորմեր պարունակող ակտեր՝ միջանկյալ օղակ են օրենքների և անհատական ակտերի միջև։ Այդ ակտերով իրականացվող կոնկրետացումը հիմնականում ուղղված է օրենքում առկա ընդհանուր հասկացությունների որոշակիացմանը կամ օրենսդրական տեխնիկայի կանոններին համապատասխան անհրաժեշտ դրույթների հստակեցմանն ու սահմանմանը։ Այդ տեսանկյունից՝ ենթաօրենսդրական ակտերը, բացի օրենքների համեմատ վերացականության որոշակի նվազագույն աստիճան ունենալուց, բովանդակային առումով գրեթե ոչնչով չեն տարբերվում օրենքով նախատեսված կարգավորումներից։ Հիմնականում իրավունքի յուրաքանչյուր սուբյեկտ Սահմանադրությունում և օրենքներում ամրագրված իր իրավունքների իրացմանը կարող է հասնել ինչպես վարչական մարմինների անհատական իրավական ակտերի միջոցով, այնպես էլ դատական ակտերով<sup>5</sup>։ Հենց վարչական ակտերն են վարչարարության առավել տիպիկ ձևերը, իսկ վարչական մարմիններն առավելապես վարչական ակտերի միջոցով կարող են հասնել օրենքների կատարման իրենց գերխնդրի իրականացմանը։

Այսպիսով՝ վարչական ակտերի գործառույթը Սահմանադրությունում և օրենքներում մասնավոր անձանց համար ամրագրված սուբյեկտիվ հանրային իրավունքների իրականացումն ու պարտականությունների կատարումն ապահովելն է՝ կոնկրետ հասցեատերերին ուղղված և կոնկրետ փաստական հանգամանքների իրավական կարգավորում պարունակող դրույթների միջոցով։

Մեկ այլ ձևակերպմամբ՝ վարչական ակտի գործառույթն օրենքի կատարումն է կոնկրետ փաստական հանգամանքներում վերացական հանրային սուբյեկտիվ իրավունքները կամ պարտականությունները կոնկրետ հասցեատերերին վերագրելու միջոցով<sup>6</sup>։

Ելնելով վերոնշյալ դիտարկումներից՝ ակնառու են դառնում վարչական ակտ հասկացության բոլոր բաղադրիչները՝ *լինել ընդունված վարչական մարմնի կողմից, անհատական իրավական բնույթ, արտաքին ներգործություն, ընդգրկվածություն հանրային իրավունքի ոլորտում, կոնկրետ գործի կարգավորման ուղղվածություն, ինչպես նաև հանրային սուբյեկտիվ իրավունքներ և պարտականություններ սահմանելու, փոփոխելու, վերացնելու կամ ճանաչելու իրավասություն*։

Այս բաղադրիչների համադրումը հանգեցնում է վարչական ակտի իրավական բնորոշմանը, որն իր ձևակերպումն է ստացել ՎՀՎԿՕ-ի 53-րդ հոդվածի 1-ին մասում. «Վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումն է, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտը, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն։ Վարչական ակտը կարող է ուղղված լինել նաև որոշակի անհատական չափանիշներով առանձնացված անձանց որևէ խմբի»<sup>7</sup>։

<sup>4</sup> Բացառություն են առանձին դեպքերին վերաբերող օրենքները, ինչպես նաև այն ենթաօրենսդրական նորմատիվ ակտերը, որոնք ի գործ են անմիջականորեն գործելու կոնկրետ իրավահարաբերություններում։

<sup>5</sup> Դատական ակտերն ունեն անհատական բնույթ։ Միակ բացառությունը Սահմանադրական դատարանի որոշումներն են, որոնք, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ կարող են ունենալ նորմատիվ բնույթ։

<sup>6</sup> Koch Rubel, Heselhaus, Allgemeines Verwaltungsrecht, էջ 77, կետ 12, էջ 78, կետ 15։

<sup>7</sup> Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2004.03.31/18(317), հոդված 413, օրենք, ՀՕ-41-Ն, ուժի մեջ է մտել 31.12.2004թ.։



Վարչական ակտը պետք է ունենա բոլոր վերոհիշյալ բաղադրիչները: Դրանցից նույնիսկ մեկի բացակայությունը կփաստի, որ դիտարկվող ակտը վարչական ակտ չէ:

Վարչական ակտերի տեսակները տարբերակվում են՝ ըստ հասցեատերերի նկատմամբ կարգավորման ներգործության:

Վարչական վարույթի բողոքաբեր կամ վարչական ակտի հասցեատեր սուբյեկտի<sup>8</sup> առնչությամբ այդ ներգործությունը կարող է մի դեպքում նպաստել նրա իրավունքների իրականացմանը, մեկ այլ դեպքում՝ սահմանափակել դրանք կամ ծանրաբեռնել նրան պարտականություններով, իսկ երրորդ դեպքում՝ լինել միաժամանակ և՛ նպաստավոր, և՛ ծանրաբեռնող: Ըստ այդմ՝ տեսականորեն առանձնացվում են բարենպաստ, միջամտող և զուգորդվող վարչական ակտեր:

Այսպիսով, ելնելով վարչական վարույթի սահմաններում կայացվող վարչական ակտի վերաբերյալ վերոգրյալ բնորոշումներից, միաժամանակ կիրառելով իրավահամեմատական և համադրման մեթոդները՝ փորձենք նկարագրել և սահմանել այն դրույթները, որոնք բնորոշ են հարկադիր կատարման վարույթի շրջանակում, հարկադիր կատարողների կողմից կայացվող որոշումներին (այսուհետ՝ Որոշումներ<sup>9</sup>):

Սկսենք այն հիշատակումից, որ կատարողական վարույթի շրջանակում կայացվող բոլոր անհրաժեշտ և հնարավոր որոշումների, ինչպես նաև ընդհանրապես կիրառվող փաստաթղթերի օրինակելի ձևանմուշները հաստատվել են 2006 թվականին արդարադատու-

թյան նախարարի հրամանով<sup>10</sup>: Թեպետ հարկ է նշել, որ գործնականում հաճախ հանդիպում ենք այնպիսի դեպքերի, երբ կայացվող որոշումը, կատարողական գործողությունների արդյունքով կազմվող կամ կատարողական գործողությունների արդյունքն արտացոլող փաստաթղթերը հաստատված օրինակելի նմուշ չունեն<sup>11</sup>:

Կատարողական վարույթում Որոշում կայացնելու սուբյեկտների լիազորությունը և իրավազորությունը սահմանված են Օրենքով և Ծառայություն մասին օրենքով (այսուհետ երկուսը միասին՝ Օրենսդրություն): Ըստ Ծառայության մասին օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ մասի՝ հարկադիր կատարողի իրավունքն է իր իրավասության սահմաններում որոշում ընդունելը<sup>12</sup>, միաժամանակ, ըստ Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի՝ կատարողական գործողությունների ընթացքում հարկադիր կատարողը կայացնում է որոշում<sup>13</sup>:

Օրենքով սահմանված է նաև այն դրույթը, որ հարկադիր կատարողի՝ իր իրավասության սահմաններում կայացրած որոշումները պարտադիր են բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց, կազմակերպությունների ու քաղաքացիների համար և ենթակա են կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում<sup>14</sup>:

Հարկադիր կատարողը, կատարողական վարույթում հանդես գալով որպես վարույթի ինքնուրույն սուբյեկտ, օրենսդրությամբ օժտված կառավարչական լիազորությունների սահմաններում կայացնում (կամ ընդունում) է որո-

<sup>8</sup> Տե՛ս նույն տեղում, հոդ. 21, մաս 1: Վարչական վարույթի մասնակիցներն են այն անձը՝ վարչական ակտի հասցեատերը, ով դիմել է վարչական ակտ ընդունելու համար (դիմող), կամ այն անձը, ում նկատմամբ վարչական մարմինն իր նախաձեռնությամբ ընդունելու է վարչական ակտ:

<sup>9</sup> Додонов В. Н., Ермаков В. Д., Крылова, Москва, Большой юридический словарь, 2001, էջ 449: ПРОТОКОЛЫ – процессуальные документы, в которых в письменной форме фиксируются ход и результаты процессуальных действий, осуществляемых следователем, дознавателем при расследовании уголовных дел, и судом – при разбирательстве уголовных и гражданских дел. П. также составляются в конституционном, арбитражном и административном процессе.

<sup>10</sup> Սկզբնաղբյուրը՝ ՀՀԳՏ 2006.05.02/12(221), հոդված 141, հրաման, թիվ 65-Ն, ուժի մեջ է մտել 12.05.2006թ.:

<sup>11</sup> Հեղինակային նշում՝ ինչպես գործադիր իշխանության ամբողջ վարչարարությունն է անհնար ամբողջական նորմատիվ կարգավորման ենթարկել, այնպես էլ հարկադիր կատարողի լիազորությունների շրջանակում կայացվող որոշումների օրինակելի ձևերը: Օրինակ՝ հարկադիր կատարողի որոշումը վերադասության կարգով փոփոխելու մասին որոշման օրինակելի նմուշ՝ ձև, արդարադատության նախարարի վերոնշյալ հրամանի շրջանակում չի հաստատվել:

<sup>12</sup> Սկզբնաղբյուրը՝ ՀՀԳՏ 2004.03.31/18(317), հոդված 412, օրենք ՀՕ-40-Ն, ուժի մեջ է մտել 10.04.2004թ.:

<sup>13</sup> Սկզբնաղբյուրը՝ ՀՀԳՏ 1998.06.15/12(45), օրենք ՀՕ-221, ուժի մեջ է մտել 01.01.1999թ.:

<sup>14</sup> Տե՛ս նույն տեղում, հոդված 71:

շումներ՝ բացառությամբ իր լիազորությունների շրջանակից դուրս մի քանիսի: Բացառություն կազմող այդ որոշումները կայացվում են հարկադիր կատարողի վերադասի կողմից, քանի որ մեծ մասամբ ուղղված են հարկադիր կատարողի կողմից ձեռնարկված կատարողական գործողությունների դեմ, վարույթի մասնակիցների իրավունքների շրջանակում բերված դիմումների, բողոքների, միջնորդությունների պատճառով ծագած վերահսկողության գործառույթի ուժով: Այստեղ բացառություն է նախատեսված նաև բարդ և ծավալուն գործերով հարկադիր կատարողների խումբ ստեղծելու մասին որոշման համար, քանի որ դա ուղղակի դուրս է հարկադիր կատարողի լիազորությունների շրջանակից: Բացառություն հանդիսացող նշված որոշումների օրինակ կարող են լինել նաև հարկադիր կատարողի հայտնած ինքնաբացարկը կամ վերջինիս հայտարարված բացարկը<sup>15</sup>, վերադասության կարգով հարկադիր կատարողի որոշումների վերացումը կամ փոփոխումը<sup>16</sup>:

*Այսպիսով՝ պետք է փաստել, որ կատարողական վարույթի շրջանակում Որոշում կայացնելը հանրային իշխանությամբ օժտված, վարչական իրավազորություն իրականացնող մարմնի՝ ի դեմս դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության պաշտոնատար անձ՝ հարկադիր կատարողի՝ Օրենսդրությամբ սահմանված գործառույթն է:*

Իսկ ինչպիսի՞ իրավական ակտ են հարկադիր կատարողի կայացրած որոշումները՝ ըստ իրավական կարգավորման բնույթի: Ինչպես արդեն վերը նշել ենք՝ ՀՀ օրենսդրության համակարգում իրավական ակտերն իրենց բնույթով լինում են նորմատիվ, ոչ նորմատիվ (անհատական) և լրկալ:

Որոշումը, ըստ էության, ունի ժամանակավոր բնույթ, քանզի իր իրավական ուժը կարող է պահպանել մինչև Որոշման հիմքում առաջադրված հարցի լուծումը կամ ուղղակի կոդադարի իրավական ուժ ունենալուց՝ վերջնականապես կատարողական վարույթի եզրափակմամբ: Որոշումը նախատեսված է մեկանգամ-

յա կիրառման համար, չի պարունակում իրավական նորմ և սահմանում է վարքագծի կանոններ միայն դրանում ուղղակի անհատապես նշված (նախատեսված) անձանց համար: Այստեղ էականն այն է, որ Որոշումը կայացվում է նորմատիվ իրավական ակտերի կամ իրավական ակտերի հիմքով ծագած դատական ակտի կամ Օրենքով սահմանված այլ իրավազոր մարմինների՝ օրինական ուժ ստացած ակտերի կատարման նպատակով:

Որպես անհատական (ոչ նորմատիվ) իրավական ակտ՝ Որոշմանը բնորոշ է առանձին դեպքերի (հարցերի) վերաբերելիությունը: Ինչպես վարչական ակտը, այնպես էլ Որոշումը չի կարող պարունակել ընդհանուր և անորոշ հասցեատերերի ուղղված կարգավորումներ: Նման կարգավորումը բնորոշ է իրավական նորմերին, որոնք ներառված են նորմատիվ իրավական ակտերում: Որոշումները, որպես կանոն, ուղղված են կոնկրետ որևէ հանրային իրավահարաբերության սուբյեկտի՝ նրա անվան (ֆիզիկական անձի, իրավաբանական անձի, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների դեպքում՝ անվանման) հստակ մատնանշմամբ:

Ըստ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գերմանացի Վիլֆրիդ Բերգմանի բնորոշման. «Իրավունքի աղբյուրների ուսմունքը, որոշումը դիտարկում է որպես իրավունքի նորմ և առաջարկում է այդ նորմն օգտագործել որպես վարչական (ադմինիստրատիվ) գործիք այն դեպքերում, երբ վարչական մարմինը (ադմինիստրացիան) ձևական օրենքների կիրառման դեպքում պետք է և միտված է ոչ միայն կարգավորելու միատեսակ իրավահարաբերություններ, այլ նաև թույլատրելու ավելին, կարգավորելու դեռևս հստակ չկարգավորված նմանատիպ գործերի»<sup>17</sup>:

Այս տեսանկյունից ուշագրավ է Ֆրանսիայի Հանրապետության օրենսդրության այն դրույթը, ըստ որի՝ «վարչական ակտ» հասկացությունն ավելի հանգամանալից է մեկնաբանվում՝ ներառելով ոչ միայն կոնկրետ գործերով ընդունված ակտերը կամ որոշումները, այլև նորմատիվ ակ-

<sup>15</sup> Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 1998.06.15/12(45), օրենք ՀՕ-221, ուժի մեջ է մտել 01.01.1999թ., հոդ. 29:

<sup>16</sup> Տե՛ս նույն տեղում, հոդ. 28, մաս 6:

<sup>17</sup> В. Бергманн, Административно-процессуальное право Германии. Волтерс Клувер, 2007 (Серия «Германские и европейские законы»; Кн. 4), перевод В. Н. Гиреева, XIV.

տերը, ինչպիսիք են գործադիր մարմինների կամ դրանց պաշտոնյաների կողմից արձակվող շրջաբերականները և հրամանագրերը<sup>18</sup>:

Թեպետ տեսական գրականությունում հանդիպում ենք տեսակետներ, որոնց համաձայն՝ վարչական ակտերին տրվում է ավելի լայն բնորոշում, քան սահմանված է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում, այնուամենայնիվ, հիմք ընդունելով վերջինիս կողմից սահմանված անհատական ակտին բնորոշ բոլոր հատկանիշները՝ կարելի է եզրահանգել, որ Որոշումն իր բովանդակությամբ և նշանակությամբ ներառում է անհատական ակտին վերաբերելի բոլոր հատկանիշները, որոնք էլ հիմք են տալիս միանշանակորեն պնդելու, որ դա ոչ նորմատիվ՝ անհատական ակտ է:

Իսկ ինչպիսի՞ իրավական ներգործություն ունի Որոշումը: Որպես կանոն՝ հարկադիր կատարողի որոշմամբ սահմանվում են կատարողական վարույթի մասնակիցների՝ սուբյեկտների վարքագծի որոշակի կանոններ, պարտավորություններ, որևէ գործողության հարկադիր կատարում կամ դրանց կատարումից ձեռնպահ մնալու արգելք, ինչպես նաև սահմանափակվում են գույքային բնույթի որոշակի իրավունքներ, սահմանվում են Օրենքով նախատեսված հարկադիր կատարման որևէ միջոցի կիրարկում և այլ պահանջներ:

Հատկանշական է նաև այն, որ, թեև Որոշումը վերաբերում է վարույթի որևէ մասնակցի իրավունքներին, իսկ ավելի հաճախ՝ պարտավոր անձի որևէ իրավունքի սահմանափակմանը, այնուամենայնիվ, հաճախ ուղղակի սահմանում է վարույթի մասնակից չհանդիսացող սուբյեկտի պարտադիր վարքագծի դրսևորում: Օրինակ՝ «պարտապանի աշխատավարձի կամ դրան հավասարեցված այլ եկամուտների վրա բռնագանձում տարածելու» որոշումը պարտավորություն է սահմանում պարտապանի գործատուի համար, կամ «պարտապանի գույքի վրա արգելանք դնելու մասին» որոշումն անշարժ գույքի դեպքում պարտավորություն է սահմանում անշարժ գույքի սեփականության իրավունք գրանցող լիազոր մարմնի, իսկ «պարտապանի դրամական միջոցների վրա արգե-

լանք դնելու մասին» որոշմամբ՝ առևտրային բանկերի համար:

Այդուհանդերձ՝ պետք է նշել, որ *Որոշումը կատարողական վարույթում կարգավորում է կատարողական վարույթում ծագած իրավահարաբերությունների համապարփակ ամբողջության մեջ ընդգրկված որևէ կոնկրետ նպատակի հասնելու ճանապարհը և սահմանում հերթական կատարողական գործողությունների իրականացման ընթացքը կամ փոփոխությունը, կարճ ասած՝ Որոշման բովանդակությունը ձևավորում է կատարողական վարույթի ընդհանուր պատկերը:*

Անդրադառնանք վարչական վարույթին և նշենք, որ յուրաքանչյուր վարչական վարույթ պարտադիր ավարտվում է վարչական որևէ տեսակի ակտի ընդունմամբ (բարենպաստ, միջամտող, զուգորդվող) և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն, այսինքն՝ մեկ վարույթ՝ մեկ վարչական ակտ:

Ինչ վերաբերում է կատարողական վարույթին, ինչպես արդեն նշել ենք՝ եզրափակվում է բացառապես կատարողական վարույթի ավարտման կամ կարճման վերաբերյալ որոշում կայացնելով, ինչն ազդարարում է կատարողական վարույթի հարուցմամբ ծագած կատարողական իրավահարաբերությունների ավարտը (դադարը): Միաժամանակ՝ հարկ է ընդգծել, որ կատարողական վարույթով ձեռնարկված յուրաքանչյուր կատարողական գործողության վերաբերյալ կայացվում է որևէ ընթացիկ որոշում, ինչն էլ ապահովում է անհրաժեշտ կատարողական գործողությունների իրավական հենքը և կանոնակարգում իրականացման ընթացքը:

Հետևապես՝ պետք է նկատել, որ վարչական և կատարողական վարույթների առանձնահատկություններից մեկն էլ հենց վարույթների շրջանակում յուրաքանչյուր վարույթով կայացվող որոշումների կամ վարչական ակտերի իրավակարգավորող գործողության ծավալն է, ինչպես նաև՝ ակտերի քանակը:

Համեմատվող վարույթների կարևոր ա-

<sup>18</sup> Д. Галлиган, В. В. Полянский, Ю. Н. Стариков, Административное право; история развития и основные современные концепции, Москва, 2002, էջ 222:

ռանձնահատկություններից մեկն էլ այն է, որ կատարողական վարույթով կայացվող որոշումները՝ որպես վարչական ակտի տեսակ, երբեմն հանդես են գալիս փոքր-ինչ այլ դերակատարությամբ: Ինչպես արդեն նշեցինք՝ Որոշումները հաճախ բովանդակում են որոշակի իրավունքներ, սահմանում են պարտականություններ, արգելք կամ պատասխանատվություն ոչ թե կատարողական վարույթի կողմերի, այլ՝ կատարողական վարույթի շրջանակից դուրս այլ սուբյեկտների համար:

Մասնավորապես՝ կատարողական վարույթով կայացված միևնույն որոշումը մի դեպքում կարող է միաժամանակ իրավունք տրամադրել մի կողմին և պարտականություն սահմանել մեկ այլ կողմի համար, ինչպես նաև իրավունքներ և պարտականություններ սահմանել կատարողական վարույթի կողմ չհանդիսացող սուբյեկտների համար:

Օրինակ՝ «փորձագետ նշանակելու մասին» որոշումը պարտականություն է սահմանում փորձագետի համար և իրավունք տալիս կողմերին միջնորդություններ ներկայացնել որոշմամբ առաջադրված հարցերի վերաբերյալ, կամ «պարտապանի դրամական միջոցների վրա բռնագանձում տարածելու մասին» որոշումը սահմանում է պարտականություն գործատուի կամ հասցեատեր առևտրային բանկի համար, միաժամանակ իրավունք՝ կողմերից որևէ մեկի համար: Տվյալ դեպքում՝ պարտատիրոջ համար ծագում է բռնագանձված գումարն օրենքով սահմանված ժամկետում ստանալու իրավունք, իսկ պարտապանի համար իրավունք՝ ստանալու Օրենքով սահմանված չբռնագանձված աշխատավարձի մնացորդը:

Մեկ այլ դեպքում, երբ կատարողական վարույթն ավարտվում է պարտապանի անշարժ գույքի վրա բռնագանձում տարածելու անհնարինությամբ, քանի որ դա վերջինիս ընդհանուր համատեղ սեփականությունն է, և, ըստ էության՝ հնարավոր չի եղել ապահովել կատարողական թերթով սահմանված գումարի բռնագանձումը, քանի որ ընդհանուր գույքի մեջ վերջինիս բաժինն առանձնացված չէ, ուստի պահանջատիրոջն առաջարկվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի ուժով ի-

րավասու դատարանի քննությամբ, դատական կարգով, ընդհանուր համատեղ կամ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պարտապանին պատկանող գույքից առանձնացնել նրա բաժնեմասը՝ դրա վրա բռնագանձում տարածելու նպատակով: Այս պարագայում պահանջատերը նախ և առաջ ձեռք է բերում իրավունքը, իսկ եթե պարտապանի բաժինը բնեղենով առանձնացնել անհնար է, կամ դրա դեմ առարկում են բաժնային կամ համատեղ սեփականության մնացած մասնակիցները, ապա պարտատերն իրավունք ունի ընդհանուր սեփականության մնացած մասնակիցներից պահանջել շուկայական գնով գնելու պարտապանի բաժինը՝ պարտքը մարելու համար: Ընդհանուր սեփականության մնացած մասնակիցների կողմից պարտապանի բաժինը ձեռք բերելուց հրաժարվելու դեպքում պարտատերն իրավունք ունի պահանջելու բռնագանձումը տարածել ընդհանուր սեփականության իրավունքում պարտապանի բաժնի վրա՝ նույն օրենսգրքի 197-րդ հոդվածին համապատասխան<sup>19</sup>:

Այսպիսով՝ կարելի է մանրամասնորեն ներկայացնել մի շարք կատարողական գործողությունների և դրանց հիման վրա կայացվող որոշումների տեսակների վերաբերյալ բովանդակային քննարկումներ ու վերլուծություններ, բայց և այնպես՝ դրանց իրավաբանական բնույթը և իրավակարգավորման սահմանները դրանից չեն փոխվի, քանզի ակնհայտ է, որ հարկադիր կատարողի կողմից կայացված որոշումները, որոնք վարչական ակտին բնորոշ հատկանիշներ ունեն, միևնույն ժամանակ՝ վարչական իրավահարաբերության առանձնահատուկ տեսակ կարգավորող ակտեր են՝ յուրօրինակ իրավական ուժով և իրավական հետևանքներով օժտված:

Ելնելով վերոգրյալից՝ ևս մեկ անգամ կարելի է պնդել այն դատողությունը, որ հարկադիր կատարողի կողմից կայացված որոշումները, այնուամենայնիվ, վարչական ակտեր են, իսկ հարկադիր կատարողի գործառույթը վարչատնօրինչական բնույթի է, ինչից էլ միանշանակորեն բխում է, որ դատական ակտերի հարկադիր կատարման վարույթը որևէ դատավա-

<sup>19</sup> Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 1998.08.10/17(50), օրենսգիրք ՀՕ-239, ուժի մեջ է մտել 01.01.1999թ., հոդ. 200:

րության, իսկ առավել ևս՝ քաղաքացիական դատավարության մաս չէ, ինչպես պնդում են որոշ տեսաբան գիտնականներ:

Մեր կարծիքով՝ «վարչական վարույթը» որպես ընդհանուր վարչական իրավունքի ենթաճյուղ տարանջատելը և դրա արդի ժամանակաշրջանի զարգացման միտումը հայրենական իրավունքի գիտության ասպարեզում, կանխորոշում են նաև կատարողական իրավահարաբերությունների ապագա հայեցակարգի ձևավորման և զարգացման տեսլականը, իսկ այն հարցադրումը, որ կատարողական իրավահարաբերությունները և դրանց կարգավորման առարկան իրականացնող հարկադիր կատարման վարույթը վարչական իրավագործության մաս են և ընդգրկվում են հանրային վարչական իրավահարաբերությունների մեջ, այլևս կասկած հարուցել չի կարող:

Ուշագրավ է սույն հետազոտության վերաբերյալ դատական պրակտիկան: Ըստ ՀՀ Վճռաբեկ դատարանի. «Անբողքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշման իրավական բնույթը համադրելով վարչական ակտին բնորոշ հատկանիշների հետ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

- հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումն անհատական իրավական ակտ է,
- հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումն ընդունվում է վարչական մարմնի՝ հարկադիր կատարողի (Ծառայության) կողմից,
- հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումն ունի արտաքին ներգործություն. նրա հասցեատերն այնպիսի ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որը կազմակերպական, աշխատանքային, ներ-

քին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չի գտնվում որոշումն ընդունած մարմնի հետ,

- հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումն ընդունվում է հանրային իրավունքի բնագավառում,
- հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումն ուղղված է հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից հանրային իրավունքի ոլորտում կոնկրետ անձին առընչվող կոնկրետ հարցի կարգավորմանը,
- հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումն ուղղակի իրավական հետևանքներ չի առաջացնում իր հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար. դրանով վարչական մարմինը չի սահմանում, չի փոփոխում, չի վերացնում կամ չի ճանաչում իրավունքներ և պարտականություններ համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար:

Այսպիսով՝ անբողքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումը՝ որպես անհատական իրավական ակտ, օժտված չէ վարչական ակտին բնորոշ այնպիսի կարևոր առանձնահատկությամբ, ինչպիսին է ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար ուղղակի իրավական հետևանքներ առաջացնելու՝ վերջիններիս համար իրավունքներ և պարտականություններ սահմանելու, փոփոխելու, վերացնելու կամ ճանաչելու հատկանիշը: Հետևաբար՝ վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հար-

կադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումը ՀՀ իրավական համակարգում չի կարող համարվել վարչական ակտ, քանի որ օժտված չէ վարչական ակտին բնորոշ վերը նշված հատկանիշով և իր բնույթով ընդամենը վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթի՝ որպես իրավական ընթացակարգի, սկիզբն ազդարարող իրավական ակտ է»<sup>20</sup>:

Ուսումնասիրելով մեջբերված որոշումը՝ պետք է արձանագրել, որ դատարանը, հարկադիր կատարողի կատարողական վարույթ հարուցելու մասին որոշման իրավական բնույթը համեմատելով վարչական ակտին բնորոշ հատկանիշների հետ, այնուամենայնիվ, բոլոր կետերով փաստել է, որ որոշումը հիմնականում համապատասխանում է վարչական ակտին բնորոշ ՎՀՎՎՕ-ով պահանջվող հատկանիշներին՝ բացառությամբ այն, որ կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումը՝ որպես անհատական իրավական ակտ, օժտված չէ վարչական ակտին բնորոշ այնպիսի կարևոր առանձնահատկությամբ, ինչպիսին է ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար ուղղակի իրավական հետևանքներ առաջացնելու՝ վերջիններիս համար իրավունքներ և պարտականություններ սահմանելու, փոփոխելու, վերացնելու կամ ճանաչելու հատկանիշը:

Սակայն դժվար է համաձայնել այս դիրքորոշմանը, քանի որ կատարողական վարույթ հարուցելու մասին որոշում կայացնելուց հետո, հարկադիր կատարողը ձեռնամուխ է լինում մի շարք կատարողական գործողությունների, ինչը պարտապանի համար չի կարող չառաջացնել իրավական հետևանքներ:

Մասնավորապես՝ հարկադիր կատարող ֆիզիկական անձի վերաբերյալ կատարողական վարույթ հարուցելու պարագայում հարցում է ուղարկում ՀՀ բնակչության պետական ռեգիստր՝ պահանջելով պարտապանի վերա-

բերյալ անձնական տվյալներ, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստր:

Ըստ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի.<sup>21</sup> «**Անձնական տվյալ է համարվում ֆիզիկական անձին վերաբերող ցանկացած տեղեկություն, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը**»:

Հարկադիր կատարողը, ստանալով համապատասխան տեղեկատվություն, այնուհետ վերջինս ենթարկում է մշակման: Ըստ վերը նշված օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի. «**Անձնական տվյալների մշակումը ենթադրում է՝ անկախ իրականացման ձևից և եղանակից (այդ թվում՝ ավտոմատացված, տեխնիկական ցանկացած միջոցներ կիրառելու կամ առանց դրանց) ցանկացած գործողություն կամ գործողությունների խումբ, որը կապված է անձնական տվյալները հավաքելու կամ ամրագրելու կամ մուտքագրելու կամ համակարգելու կամ կազմակերպելու կամ պահպանելու կամ օգտագործելու կամ վերափոխելու կամ վերականգնելու կամ փոխանցելու կամ ուղղելու կամ ուղեփակելու կամ ոչնչացնելու կամ այլ գործողություններ կատարելու հետ**»:

Ըստ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի. «Անձնական տվյալներ մշակելն օրինական է, եթե՝

1) տվյալները մշակվել են օրենքի պահանջների պահպանմամբ, և տվյալների սուբյեկտը տվել է իր համաձայնությունը՝ բացառությամբ սույն օրենքով կամ այլ օրենքներով ուղղակիորեն նախատեսված դեպքերի»:

Ըստ ՀՀ Սահմանադրության 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝

«Յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող տվյալների պաշտպանության իրավունք:

Անձնական տվյալների մշակումը պետք է կատարվի բարեխղճորեն, օրենքով սահմանված նպատակով, անձի համաձայնությամբ կամ

<sup>20</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/3540/05/14 վարչական գործերով 25.05.2016 թվականի որոշումը, ըստ հայցի՝ Հայկ Ալումյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության:

<sup>21</sup> «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենք: Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2015.06.18/35(1124), օրենք Օ-49-Ն, հոդ. 462, ուժի մեջ է մտել 01.07.2015թ.:

առանց այդ համաձայնության՝ օրենքով սահմանված այլ իրավաչափ հիմքի առկայությամբ»:

Վերոշարադրյալ իրավանորմերի ուսումնասիրությունը փաստում է, որ հարկադիր կատարողի կողմից անձնական տվյալների մշակումը և օգտագործումն արդեն իսկ Սահմանադրությամբ ամրագրված և օրենքով պաշտպանվող տեղեկատվություն է, որը հարկադիր կատարողին հասանելի է դառնում կատարողական վարույթ հարուցելու մասին որոշում կայացնելուց հետո, հետևապես՝ ակնհայտ է, որ պարտապանի նկատմամբ քննարկվող որոշումը՝ «կատարողական վարույթ հարուցելու մասին», այնուամենայնիվ, առաջացնում է իրավական հետևանքներ:

Ավելին՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն.

«1. Կատարողական վարույթի ընթացքում կողմերն իրավունք ունեն՝

- 1) կնքել հաշտության համաձայնություն,
- 2) կատարողական թերթով իրավունքները փոխանցել մեկ այլ անձի,
- 3) ծանոթանալ կատարողական վարույթի նյութերին, քաղվածքներ անել դրանցից, ստանալ պատճեններ,
- 4) անել միջնորդություններ.
- 5) մասնակցել կատարողական գործողություններին.

6) տալ բանավոր և գրավոր բացատրություններ, ծագող բոլոր հարցերի վերաբերյալ ներկայացնել փաստարկներ և նկատառումներ.

7) առարկել կատարողական վարույթին մասնակցող այլ անձանց միջնորդությունների, փաստարկների և նկատառումների դեմ.

8) հայտնել բացարկներ.

9) բողոքարկել հարկադիր կատարողի գործողությունները.

10) օգտվել սույն օրենքով իրենց վերապահված այլ իրավունքներից:

2. Կատարողական վարույթի ընթացքում կողմերը պարտավոր են կատարել սույն օրենքի պահանջները»:

Նույն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն. «Կատարողական վարույթի կողմերն են՝ պահանջատերը և պարտապանը»:

Մեջբերված իրավակարգավորումների ու-

սումնասիրությունը վկայում է, որ պարտապանը և պահանջատերը, հանդիսանալով կատարողական վարույթի կողմեր, ձեռք են բերում իրավունքներ և կրում պարտականություններ միայն հարկադիր կատարողի կողմից «կատարողական վարույթ հարուցելու մասին» որոշում կայացնելուց հետո, հետևապես՝ Վճռաբեկ դատարանի կողմից կատարողական վարույթ հարուցելու մասին որոշումը միայն կատարողական վարույթի սկիզբ ազդարարող իրավական ակտ բնորոշելը հիմնավոր չէ, քանի որ ակնհայտ են այն իրավական հետևանքները, որոնք կարող են ծագել բացառապես «կատարողական վարույթ հարուցելու մասին» որոշում կայացվելուց հետո:

Հատկանշական է, որ ՀՀ Վճռաբեկ դատարանը նույն գործի շրջանակում հարկադիր կատարողի կողմից կայացված այլ որոշումները, այնուամենայնիվ, համարում է վարչական ակտ:

Ըստ վերջինիս. «(...) Միևնույն ժամանակ սույն գործով ներկայացված հայցադիմումի բովանդակության ուսումնասիրության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ այդ հայցադիմումը պետք է ընդունվեր Դատարանի վարույթ նաև մյուս երկու ինքնուրույն հայցապահանջների՝ Ծառայության 20.06.2014 թվականի «**Պարտապանի դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին**» որոշման առ ոչինչ լինելը ճանաչելու կամ վերացնելու և Ծառայության 20.06.2014 թվականի «**Պարտապանի գույքի վրա արգելանք դնելու մասին**» որոշման առ ոչինչ լինելը ճանաչելու կամ վերացնելու մասով: Այսպես, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ Ծառայության 20.06.2014 թվականի «Պարտապանի դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին» և **Պարտապանի գույքի վրա արգելանք դնելու մասին**» որոշումները **համապատասխանում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածով սահմանված վարչական ակտի հարկանիշներին**»:

Այսպիսով, գնահատելով Որոշման՝ հանրային իրավունքի ոլորտում կարգավորիչ դերը, պետք է արձանագրել, որ կատարողական վարույթում իրավահարաբերությունները ծագում, փոփոխվում և դադարում են բացառապես հանրային իրավունքի բնագավառում: Այն,

որ Որոշումը կարգավորում է որևէ դատական կամ Օրենքով սահմանված այլ իրավագործ մարմնի, կոնկրետ պահանջի հիման վրա կոնկրետ գործ, նույնպես վիճահարույց համարվել չի կարող:

«Կոնկրետ գործ» ասելով՝ պետք է հասկանալ որևէ մասնավոր անձի կամ անձանց որոշակի խմբի վերաբերող գործ: Տեխնիկական առումով դա այդ անձանց՝ որպես որոշման (կամ վարչական ակտի) ապագա հասցեատերերի հարցով հարուցված կատարողական վարույթի (կամ վարչական վարույթի) նյութերի ամբողջությունն է: «Կոնկրետ գործ» և «կոնկրետ հարց» արտահայտությունների ծավալը նույնական է, այլ կերպ ասած՝ «կոնկրետ գործ» արտահայտությամբ օրենսդիրն ընդամենը ՎՎՎՕ-ում մեկ անգամ ևս ընդգծել է վարչական ակտի առարկայական՝ անհատական բնույթը, ինչը տվյալ դեպքում համընկնում է նաև Որոշմամբ կարգավորվող կատարողական վարույթին:

Որպես արդյունք ստացվում է հետևյալ տրամաբանական շղթան՝ կոնկրետ մասնավոր անձ (անձանց որոշակի խումբ) – կոնկրետ հարց: Այլ կերպ ասած՝ բանաձևը մատնանշում է, որ վարչական ակտն ուղղված է կոնկրետ անձին առնչվող՝ կոնկրետ հարցի լուծմանը:

Վերագրյալից պարզ է դառնում, որ ինչպես վարչական ակտը, այնպես էլ կատարողական վարույթով կայացված որոշումը նպատակաուղղված են իրավական հետևանքի առաջացմանը կամ կիրառմանը, այսինքն՝ որոշակի իրավունքների և պարտականությունների սահմանմանը, ճանաչմանը կամ սահմանափակմանը:

Որոշումը (վարչական ակտը) հասցեատիրոջից պահանջում է որոշակի վարքագիծ, թույլատրում կամ արգելում է դա, կարող է նաև պարտադիր կերպով հաստատել (ճանաչել) որևէ իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը:

Հետևապես՝ վարչական ակտի կամ կատարողական վարույթով կայացվող որոշման ձևակերպման մեջ կարևոր բաղադրիչն իրավունքների կամ պարտականությունների սահմանումն է: Վարչական ակտով իրավունքի կամ պարտականության սահմանումը ոչ այլ ինչ է, քան նորմատիվ իրավական ակտում սահմանված համապատասխան իրավունքի կամ պարտա-

կանության կոնկրետացում, այլ կերպ ասած՝ նորմատիվ իրավական ակտի կենսագործում կոնկրետ փաստական հանգամանքներում: Ուստի վարչական ակտը նորմատիվ իրավական ակտով վերացական եղանակով սահմանված սուբյեկտիվ իրավունքները կամ պարտականությունները վերագրում է կոնկրետ անձանց՝ ելնելով կոնկրետ փաստական հանգամանքներից:

Այս պարագայում հարկադիր կատարողի կայացրած որոշումը այն անհատական իրավական ակտն է, որը դատական ակտով կամ Օրենքով սահմանված իրավագործ մարմինների՝ օրինական ուժ ստացած ակտերով սահմանված (կամ ճանաչված) սուբյեկտիվ իրավունքները և պարտականություններն ուղղորդում է օբյեկտիվ կատարման՝ հաշվի առնելով կոնկրետ փաստական հանգամանքները:

Ընդհանրացնելով սույն բաժնում արված հետազոտությունը՝ ձևակերպենք հետևյալ դրույթները.

- Հարկադիր կատարողի որոշումը՝ հանրային իշխանությամբ օժտված մարմնի, այդ հարաբերությունների ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ, օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունների սահմանում կայացված անհատական իրավական ակտ է, որը հանդես է գալիս որպես արտաքին ներգործության իրավական ակտ, որի հասցեատերերը կատարողական վարույթի մասնակիցներն են, ինչպես նաև այն սուբյեկտները, որոնք հանրային իրավունքի ոլորտում իրավունքի ուժով պետք է կատարեն հարկադիր կատարողի որոշմամբ սահմանված որևէ պահանջ, որը միաժամանակ կարող է դիտարկվել որպես վարչական իրավունքի իրավագործություն:

- Կատարողական վարույթով կայացվող որոշումներն ըստ էության անհատական իրավական ակտի տեսակ են, քանի որ ընդունվում են հանրային իրավունքի բնագավառում, ունեն հստակորեն որոշված հասցեատեր. հասցեատերն այնպիսի սուբյեկտ է, որը որևէ ուղղակի կապի մեջ չի գտնվում որոշումն ընդունած մարմնի հետ, ունի արտաքին ներգործություն, ընդունվում է հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից, ուղղված է կոնկրետ գործի կարգավորմանը, հասցեատիրոջը ծանրաբեռնում է իրավական հետևանքներով:



**ՋՈՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

ՀՀ վճռաբեկ դատարանի դատավորի ավագ օգնական, «Հայաստանում ֆրանսիական համալսարանի» Իրավաբանական ֆակուլտետի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու

**ՆԵՐՍԵՍ ԶԵՅՆԱԼՅԱՆ**

Հայաստանում ֆրանսիական համալսարանի Իրավաբանական ֆակուլտետի ուսանող

**ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Սույն գիտական հոդվածում հեղինակը քննարկում է ոստիկանությունում քրեական գործի մինչդատական քննության հնարավորության հարցը, ինչպես նաև դրա առանձնահատկությունները: Հաշվի առնելով վիճակագրական տվյալները և վարույթն իրականացնող մարմիններից ստացված այլ պաշտոնական ցուցանիշները՝ բարձրացվել է քննիչների գործերի վարույթների բեռնաթափման հարցը: Աշխատության մեջ տեղ գտած դիտարկումները կատարվել են՝ հաշվի առնելով քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի դրույթները:

**ДЖОН АЙРАПЕТЯН**

Старший помощник судьи Кассационного суда РА, преподаватель Французского университета в Армении, кандидат юридический наук

**НЕРСЕС ЗЕЙНАЛЯН**

Студент Юридического факультета Французского университета в Армении

**ОСОБЕННОСТИ ПОЛИЦЕЙСКОГО ДОЗНАНИЯ ПО УГОЛОВНЫМ ДЕЛАМ**

Настоящая статья посвящена изучению возможности проведения досудебного следствия уголовного дела в органах полиции, а также его особенности. Имея в виду статистику и другие официальные данные, полученные от органов предварительного следствия, был поднят вопрос о сокращении числа уголовных дел, расследуемых следователями следственного комитета. Мнения в работе были представлены также с точки зрения проекта нового уголовно-процессуального кодекса.

**JOHN HAYRAPETYAN**

Senior assistant to a judge at Cassation Court of Armenia, Lecturer at French University in Armenia, Ph.D.

**NERSES ZEYNALYAN**

Student of the Faculty of Law French University in Armenia

**POLICE INVESTIGATION PECULIARITIES IN CRIMINAL CASES**

The article examines the possibility of conducting a prejudicial inquiry of a criminal case in the police, as well as its specifications. Taking into consideration the statistical data and additional official indicators provided by the investigation bodies, the issue of belittling the number of criminal cases inquired by the investigators was raised. The observations contained in the article are given considering the provisions of the Draft of the Code of Criminal Procedure.

\* \* \*

**ԱԼԻՍԱ ՍՄԲԱՏՅԱՆ**

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի ուսումնական ասիստենտ, ոստիկանության ավագ լեյտենանտ

**ԱՆՉԱՓԱՀԱՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՔՆՆՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Սույն հոդվածում իրականացված հետազոտության արդիականությունը պայմանավորված է ընդհանուր հանցավորության կառուցվածքում անչափահասների հանցավորության աճի միտումների, քրեական

վարույթի ընթացքում անչափահասների կողմից իրենց իրավունքների իրացման ոչ արդյունավետ կառուցակարգերի գոյությամբ: Ասվածի լույսի ներքո՝ առաջին պլան է մղվում քրեական դատավարությունում անչափահաս մասնակիցների իրավունքների և օրինական շահերի ապահովման հիմնախնդիրների գիտական հետազոտման անհրաժեշտությունը:

Հոդվածը նվիրված է անչափահասի մասնակցությամբ քննչական գործողությունների իրականացման առանձնահատկություններին կամ, որ ավելի դիպուկ է՝ այդ առանձնահատկությունների նորմատիվ կարգավորման բացակայությանը (հարցաքննությունից բացի):

Քննչական գործողությունների կատարման անչափահասների մասնակցության հարցերը միշտ էլ եղել են դատավարագետների ուշադրության կենտրոնում, իսկ օրենսդրական նոր զարգացումների պայմաններում դրանց ուսումնասիրությունը դարձել է ավելի արդիական: Յուրեւեւ արդարադատության խնդիրներից ելնելով՝ անչափահասների հետ կատարվող քննչական գործողությունների կատարման դատավարական կարգի վերաբերյալ պետք է սահմանվեն այնպիսի առանձնահատկություններ, որոնք կապահովեն անչափահաս անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

Պետք է նշել, որ այն քննչական գործողությունները, որոնց կարող է մասնակից լինել անչափահասը, բազմատեսակ են, սակայն քրեական դատավարության գործող օրենսգրքով և քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով անչափահասների վերաբերությամբ կարգավորված են միայն հարցաքննության առանձնահատկությունները: Օրենսդրական կարգավորման տիրույթից այսպիսի բնագավառը դուրս թողնելն առնվազն չի համապատասխանում անչափահասի շահերին:

Հետազոտության նպատակը հրապարակում առկա դրույթների ուսումնասիրությունն է և դրանց կատարելագործմանը միտված առաջարկությունների ներկայացումը: Ոլորտի իրավակարգավորումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անչափահասների մասնակցությամբ իրականացվող քննչական գործողությունների առանձնահատկություններն օրեսդրի կողմից գրեթե անտեսվել են, ինչը ևս չի բխում անչափահասի շահերից:

Կատարված հետազոտության շնորհիվ՝ հեղինակի կողմից արվել են կոնկրետ հետևություններ և եզրահանգումներ, որոնք ուղղված են առկա իրավիճակի շտկմանը: Առանձին անդրադարձ է կատարվել անչափահասների մասնակցությամբ իրականացվող քննչական գործողություններին առհասարակ և հատկապես հարցաքննության առանձնահատկություններին, անչափահաս տուժողի և վկայի մասնակցությամբ իրականացվող քննչական գործողությունների ընթացքում փաստաբանի մասնակցության պարտադիր դեպքերին, անչափահաս կասկածյալի և մեղադրյալի մասնակցությամբ իրականացվող քննչական գործողությունների ընթացքում մանկավարժի (կամ հոգեբանի) պարտադիր մասնակցության խնդիրն է առաջ քաշվել: Քննչական գործողությունների իրականացման համատեքստում անչափահասներին վերաբերելի իրավակարգավորումների նախատեսումը առաջնային է՝ այն իմաստով, որ իրավական կարգադրագրի բացակայության պարագան մեծացնում է վարույթն իրականացնող մարմնի հայեցողական լիազորությունը, ինչը հղի է անցանկալի հետևանքով:

**Բանալի բառեր.** Քննչական գործողություն, հարցաքննություն, անչափահաս, քրեական դատավարություն, հոգեբան (մանկավարժ):

**АЛИСА СМБАТЯН**

Учебный ассистент кафедры уголовного права и криминологии юридического факультета академии Образовательного комплекса полиции Республики Армения, старший лейтенант полиции

**ПРОБЛЕМЫ ОСУЩЕСТВЛЕНИЯ СЛЕДСТВЕННЫХ ДЕЙСТВИЙ ПО УГОЛОВНЫМ ДЕЛАМ С УЧАСТИЕМ НЕСОВЕРШЕННОЛЕТНИХ**

Актуальность данной статьи обусловлена тем, что в структуре преступности наметились тенденции роста преступности несовершеннолетних, отсутствием эффективных механизмов для реализации их прав в уголовном процессе.

В свете вышесказанного, на первый план выходит необходимость научного исследования обеспечения прав и законных интересов несовершеннолетних и уголовном судопроизводстве. Статья посвящена особенностям осуществления следственных действий с участием несовершеннолетних, точнее, отсутствием нормативного регулирования этих особенностей (кроме допроса). Участие несовершеннолетних в следственных действиях всегда было в центре внимания процессуалистов, а в условиях развития законодательства исследование вышеназванных особенностей становится все более актуальным.

В процессе реализации следственных действий в отношении несовершеннолетних главной задачей

ювенальной юстиции является предусмотрение правовых норм, которые будут обеспечивать защиту прав и законных интересов несовершеннолетних.

Следует отметить, что те следственные действия, в которых в качестве участника может выступать несовершеннолетний, разнообразны, но необходимо отметить тот факт, что и в действующем уголовно-процессуальном кодексе и проекте уголовно-процессуального кодекса урегулирован только процесс допроса.

Исключение из законодательной сферы этих отношений, по крайней мере, не соответствует интересам несовершеннолетнего.

Целью данной статьи является исследование существующих правовых положений и внесение предложений по их совершенствованию.

В результате проведенного исследования мы пришли к определенным выводам, которые направлены на улучшение правового поля.

Отдельно мы проанализировали следственные действия в отношении несовершеннолетних в целом, особое внимание уделив особенностям допроса, рассмотрели случаи обязательного участия адвоката в ходе осуществления следственных действий с участием несовершеннолетних потерпевших и свидетелей.

Нами также обозначена проблема обязательного участия психолога в ходе следственных действий, которые проводятся с участием несовершеннолетнего подозреваемого или обвиняемого.

В контексте реализации следственных действий надлежащее правовое регулирование относительно несовершеннолетних становится первоочередной задачей, так как отсутствие правового регулирования расширяет дискреционные полномочия органов, осуществляющих производство, что может привести к нежелательным последствиям.

**Ключевые слова:** Следственные действия, допрос, несовершеннолетний, уголовное судопроизводство, психолог (педагог).

#### ALISA SMBATYAN

Training Assistant of the Criminal Law and Criminology Chair of the Law Department of the Academy of the Educational Complex of the Police of the Republic of Armenia, the Police Senior Lieutenant

### THE PROBLEMS OF THE INVESTIGATIVE ACTIONS INVOLVING BY MINORS IN CRIMINAL PROCEEDINGS OF RA

The actuality of research carried out in this article, due to the presence of minors' crime growth tendency in the structure of total culpability, by the presence of not effective mechanisms for the realization of their rights in criminal proceedings. As a result, it is possible to shift on to first target, the need to research the problems of the rights and legal interests' assurance of minors in criminal proceedings.

The article is devoted to the peculiarities of the investigative actions conducted with the participation of minors, or, more precisely, to the absence of normative regulation of these peculiarities (with the exception of interrogation).

The problems of minors' participation in investigative actions have always been at the center of attention of specialists of proceedings, and under new conditions of legislative developments their research has become more important. Based on Juvenile justice, for the procedural norms of investigative actions' realization, should be established the features of the investigation, which will ensure the protection of the rights and legal interests of minors.

It should be noted that investigative actions, in which can participate the minor, are diverse, but, according to the Criminal Procedure Code in force and to the new Draft Criminal Procedure Code, only the interrogation specifics for Juvenile are settled. The omission of above mentioned field from the legislative regulation framework, at least, does not correspond to the interests of minors.

The purposes of research are the study of the existing provisions and the presentation of proposals aimed at their improvement. The study of the legal regulations shows, that the features of investigative actions involving the minors remained almost unnoticed by the legislative body, which is also not based on the minor's interests.

As a result of the research, the author has made specific findings and conclusions, which are intended to rectify the situation. Separately, a reference has been made to the participation of minors in investigative actions in general, and to the peculiarities of interrogation in particular, to the cases of obligatory participation of defense attorney in the investigative actions, involving a juvenile victim or witness, the problem of obligatory participation of

pedagogue (or psychologist) in the investigative actions, involving a suspected or accused juvenile, was put forward. In the context of the investigative actions' realization, the provision of legal regulations, concerning the minors, has basic meaning, because the absence of a legal warrant increases the discretionary powers of the body conducting the proceedings, which can bring about undesirable results.

**Keywords:** Investigative actions, interrogation, minor, criminal proceedings, psychologist (pedagogue).

\* \* \*

**ՍԵՐՃ ՌՈՒՇԱՆՅԱՆ**

Հայաստանում ֆրանսիական համալսարանի  
Իրավաբանական ֆակուլտետի ուսանող

**ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԻՑ ԿԱՄՈՎԻՆ ՀՐԱԺԱՐՈՒՄԸ՝ ԱՎԱՐՏՎԱԾ ՀԱՆՑԱՓՈՐՁԻ ԴԵՊՔՈՒՄ**

Սույն հոդվածում հեղինակն անդրադարձել է ավարտված հանցափորձի դեպքում հանցագործությունից կամովին հրաժարման ինստիտուտի կիրառության սահմանափակման հարցին: Համադրելով տեսությունում և օրենսդրական դաշտում առկա դիրքորոշումները՝ ներկայացրել է առկա խնդիրները և համապատասխան լուծումները: Համեմատական հարթությունում ցույց է տալիս հասարակական բարձր արժեքների առավել պաշտպանության հնարավորությունն ինստիտուտի ամբողջական կիրառության դեպքում: Համակարգում և առանձնացված կետերով ներկայացնում է տվյալ ինստիտուտի վերաբերյալ դոկտրինալ աղբյուրներում, օրենսդրական դաշտում ձևավորված իրավիճակը, ինչպես նաև առաջարկ է ներկայացնում համապատասխան կարգավորումներ կատարելու վերաբերյալ:

**Բանալի բառեր.** Կամովին հրաժարում, ավարտված հանցափորձ, կիրառության սահմանափակում:

**СЕРЖ РУШАНЯН**

Студент юридического факультета  
Французского университета в Армении

**ДОБРОВОЛЬНЫЙ ОТКАЗ ОТ ПРЕСТУПЛЕНИЯ ПРИ ОКОНЧЕННОМ ПОКУШЕНИИ**

В данной статье автор обратился к вопросу ограничения использования института добровольного отказа от преступления при оконченном покушении. Сочетая существующие позиции в теории и законодательном поле, представил имеющиеся проблемы и соответствующие решения. На сравнительном уровне показывает возможность более сильной защиты общественных высших ценностей при полном использовании института. В системе отделенными пунктами представляет образовавшееся вокруг данного института положение в доктринальных источниках и законодательном поле, а также предлагает вариант соответствующих поправок.

**Ключевые слова.** Добровольный отказ, оконченное покушение, ограничения использования.

**SERZH RUSHANYAN**

Student of the faculty of Law  
French University in Armenia

**VOLUNTARY RENUNCIATION OF CRIMINAL PURPOSE IN COMPLETED ATTEMPT**

In this article the author turned to the question of limiting the use of the institution of voluntary renunciation of criminal purpose in completed attempt. Combining the existing positions in the theory and the law field, presented the existing problems and the corresponding solutions. On a comparative level he shows the possibility of stronger protection of public high values with full use of the institution. In the system with separated points he represents the situation around this institution in doctrinal sources and the law field, and also proposes a version of the corresponding amendments.

**Keywords:** voluntary renunciation, completed attempt, limiting the use.

● ՕՐԻՆԱԿԱՆ ՌՈՒՇՈՒՆ 2017 № 98

**ԲԱԳՐԱՏ ՂԱԶԻՆՅԱՆ**

ՀՀ արդարադատության նախարարի խորհրդական,  
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,  
արդարադատության երկրորդ դասի խորհրդական

**ՓՈԽՎԱՐՉԱԴԵՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Սույն հոդվածի շրջանակներում հեղինակը դիտարկել է փոխվարչապետի ինստիտուտի որոշ հիմնախնդիրները՝ հաշվի առնելով վերջին սահմանադրաիրավական զարգացումները: 2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության համաձայն՝ փոխվարչապետի պաշտոնը սերտորեն փոխկապակցված է վարչապետի հետ և պետական կառավարման համակարգում ինքնուրույն գործառնական դերակատարմամբ օժտված է:

2015 թվականի սահմանադրական փոփոխությունների հետևանքով՝ ՀՀ կառավարության կազմը սահմանող իրավական նորմերում սահմանադրի կողմից կատարվել են արմատական փոփոխություններ: Սահմանադրական նորմերի վերլուծությամբ հեղինակը գալիս է այն եզրահանգման, որ նոր կարգավորումների պայմաններում ՀՀ փոխվարչապետը ՀՀ կառավարության կազմում գործող առանձին սահմանադրական ինստիտուտ է, իսկ նրա կարգավիճակը որևէ կերպ փոխկապակցված չէ նախարարի հետ: Ի թիվ այլ նորմերի, դրա մասին է վկայում նաև ՀՀ Սահմանադրության 152-րդ հոդվածի 2-րդ մասը, ըստ որի՝ փոխվարչապետները վարչապետի հանձնարարությամբ իրականացնում են կառավարության գործունեության առանձին ոլորտների համակարգում: Փոխվարչապետներից մեկը վարչապետի սահմանած կարգով փոխարինում է վարչապետին նրա բացակայության ընթացքում:

Նոր սահմանադրական լուծումների լույսի ներքո հեղինակն առաջարկել է որոշակի օրենսդրական լուծումներ, որոնք հնարավորություն կտան հստակեցնելու և ամրապնդելու փոխվարչապետի գործառնական դերակատարումը կառավարության կազմում և պետական կառավարման համակարգում:

**Բանալի բառեր.** Վարչապետ, փոխվարչապետ, համակարգում, հանձնարարական, նախարարական կոմիտե, պետական կառավարման համակարգ, կառավարության կազմ:

**БАГРАТ КАЗИНЯН**

Советник Министра юстиции РА,  
кандидат юридических наук, доцент,  
Советник юстиции 2-го класса

**ИНСТИТУТ ЗАМЕСТИТЕЛЯ ПРЕМЬЕР-МИНИСТРА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

В рамках данной статьи автор рассматривает некоторые проблемы института заместителя премьер-министра в Республике Армения, учитывая результаты недавних конституционно-правовых преобразований.

Согласно Конституции РА в редакции 2005 года, пост заместителя премьер-министра в правительстве РА тесно связан с премьер-министром и в системе государственного управления не имеет самостоятельной функциональной роли.

В результате конституционных реформ 2015 года, коренным образом были изменены нормы состава Правительства РА. В результате анализа конституционно-правовых норм, автор пришел к выводу, что заместитель премьер-министра РА отныне является отдельным конституционным институтом в составе Правительства РА, а его статус каким-либо образом больше не связан со статусом министра. Помимо других норм, об этом свидетельствует также часть вторая статьи 152 Конституции РА, согласно которой заместители премьер-министра по заданию премьер-министра будут осуществлять координацию отдельных направлений деятельности Правительства. Один из заместителей премьер-министра, согласно порядку, установленному премьер-министром, заменяет его в его отсутствие.

Автором в свете новых конституционных решений предложены также новые законодательные решения, необходимые для определения и укрепления функциональной роли заместителя премьер-министра в составе Правительства и в системе государственного управления.

**Ключевые слова:** Премьер-министр, заместитель премьер-министра, координация, поручение, министерский комитет, система государственного управления, состав правительства.

**BAGRAT GHAZINYAN**

Advisor to the Minister of Justice of the RA, PhD in Law,  
Associate Professor, Second class councillor of Justice

**INSTITUTE OF THE DEPUTY PRIME MINISTER IN THE REPUBLIC OF ARMENIA**

Within the framework of this article, the author considers some problems of the institution of the Deputy Prime Minister in the Republic of Armenia taking into account the results of recent constitutional and legal reforms.

According to the Constitution of the Republic of Armenia in edition of 2005, the post of deputy prime minister in the RA Government is closely connected with the Prime minister and does not have an independent functional role in the system of state administration.

As a result of the constitutional reforms of 2015, the norms of the composition of the Government of Armenia were radically changed. As a result of the analysis of constitutional legal norms, the author came to the conclusion that the Deputy Prime Minister of RA is now a separate constitutional institute within the Government of Armenia, and his status is no longer connected with the status of the minister. In addition to other norms, the second part of Article 152 of the RA Constitution also testifies to this, according to which the Deputy Prime Ministers, on the instructions of the Prime Minister, will coordinate certain areas of the Government's activities. One of the deputy prime ministers, in accordance with the procedure established by the prime minister, replaces him in his absence.

The author, in the light of the new constitutional decisions, also proposed new legislative solutions necessary to define and strengthen the functional role of the Deputy Prime Minister in the Government and in the system of public administration.

**Keywords:** Prime Minister, Deputy Prime Minister, coordination, task, ministerial committee, public administration system, government composition

\* \* \*

**ՀԱՅԿ ԿԵՍՈՅԱՆ**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի  
իրավագիտության ամբիոնի ասպիրանտ  
Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմ,  
իրավաբանական վարչություն, առաջատար մասնագետ

**ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՄԱՆ ՍԿԶՐՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՎ ՈՒՆԵՑՈՂ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Հոդվածի շրջանակներում ուսումնասիրության առարկա են հանդիսացել իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ապահովման խնդիրներն իշխանությունների բաժանման և հավասարակշռման խորհրդարանական մոդելի պետություններում: Կատարված ուսումնասիրության շնորհիվ վեր են հանվել և ներկայացվել են իշխանությունների բաժանման և հավասարակշռման վետսոմինսթրյան և կոնսենսուս մոդելների դեպքում պետական իշխանության օրենսդիր, գործադիր և դատական ճյուղերի ձևավորման մեխանիզմները, գործառույթների շրջանակները, ինչպես նաև պետական իշխանության ճյուղերի միջև գործող զսպումների և հավասարակշռության մեխանիզմները:

**Բանալի բառեր.** Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունք, վետսոմինսթրյան մոդել, կոնսենսուս մոդել, զսպում և հավասարակշռում, պառլամենտի արձակում:

**ԱՅԿ ԿԵՏՅԱՆ**

Аспирант академии государственного управления Республики Армения,  
Аппарата Президента Республики Армения, юридическое управление,  
ведущий специалист

**ПРОБЛЕМА ОБЕСПЕЧЕНИЯ ПРИНЦИПА РАЗДЕЛЕНИЯ И БАЛАНСА ВЛАСТЕЙ  
В ПАРЛАМЕНТСКИХ ГОСУДАРСТВАХ**

В рамках этой статьи предметом исследования были проблемы обеспечения принципа разделения и баланса властей в странах, имеющих парламентскую модель разделения и баланса властей. В результате проведенного исследования, были выявлены и представлены механизмы формирования законодательной, исполнительной и судебной ветвей государственной власти в случае вестминстерской модели и модели консенсуса разделения и баланса властей, объем функций, а также механизмы сдержек и противовесов между ветвями власти.

**Ключевые слова:** Принцип разделения и баланса властей, вестминстерская модель, модель консенсуса, сдержка и противовес, роспуск парламента.

**HAYK KESOYAN**

Phd student of public administration academy of the Republic of Armenia  
Staff of the President of Armenia, legal department,  
leading specialist

**THE PROBLEM OF ENSURING THE PRINCIPLE OF SEPARATION  
IN PARLIAMENTARIAN STATES**

Within the framework of the article, the problems of ensuring the principle of separation and balance of powers in countries with a parliamentary model of separation and balance of powers have been a subject of the study. The mechanisms of the formation of the legislative, executive and judicial branches of government in the case of Westminster model and consensus model of separation and balance of powers; the scope of functions as well as the mechanisms of checks and balances between the branches of government were revealed and presented as a result of the study.

**Keywords:** The principle of division and balance of authorities, the Westminster model, the consensus model, checks and balances, the dissolution of parliament.

\* \* \*

**ԼՈՒՍԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

Իրավաբանական գիտությունների թեկնածու

**ՀՈՎԱՏՓ ՔՈՉԱՐՅԱՆ**

Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի  
իրավագիտության ֆակուլտետի  
4-րդ կուրսի ուսանող

**ԵՎԳԵՆԻՎԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Հեղինակները, ուսումնասիրելով ՀՀ Սահմանադրության 25-րդ հոդվածը, որն ամրագրում է եվգենիկական փորձ կատարելու արգելքը, հանգում են այն եզրակացության, որ այդ հոդվածը չի կարող իրականացնել մարդու սելեկցիայի կանխարգելում: Հեղինակներն առաջարկում են որոշ օրենսդրական փոփոխություններ՝ վիճակը շտկելու նպատակով:

**Բանալի բառեր.** Եվգենիկական փորձ, եվգենիկական գործունեություն, կենսաէթիկա, սելեկցիա:

**ЛУСИНЕ ВАРДАНЯН**

Кандидат юридических наук

**ОВСЕП КОЧАРЯН**

Студент юридического факультета  
Российско-Армянского (Славянского) университета,  
четвертый курс

**НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ ЕВГЕНИКИ В ЗАКОНОДАТЕЛЬСТВЕ РА**

Авторы, анализируя ст. 25 Конституции РА, предусматривающую запрет на осуществление евгенического опыта, приходят к выводу, что она не способна осуществить предотвращение селекции человека. Авторы предлагают внести некоторые законодательные изменения в целях исправления ситуации.

**Ключевые слова:** Евгенический опыт, евгеническая деятельность, биоэтика, селекция.

**LUSINE YARDANYAN**

PhD

**HOVSEP KOCHARYAN**

Student of Faculty of law  
Russian-Armenian (Slavonic) university  
4th year

**THE ISSUES OF EUGENICS IN LEGISLATION OF RA**

The authors, analyzing Art. 25 of the RA Constitution, which provides for a ban on the implementation of eugenic experience, reach to the conclusion that it is not capable of preventing the human selection. The authors propose to make some legislative changes to remedy the situation.

**Keywords:** Eugenic experience, eugenic activity, bioethics, selection.

\* \* \*

**ՎԱՐՍԵՐ ԿԱՐԱՊԵՏՅԱԼ**

«Վաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի տեղակալ, ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի ասպիրանտ, Հայդելբերգի համալսարանի հրեագիտության ինստիտուտի մագիստրանտ (Հայդելբերգ, Գերմանիա)

**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ԻՍՐԱՅԵԼԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Հոդվածում ուսումնասիրվում է Իսրայել պետությունում մարդու իրավունքների ճանաչման, ամրագրման ու պաշտպանության պատմական զարգացումը՝ Իսրայելի սահմանադրաիրավական զարգացումների համատեքստում:

Պատմական և սոցիալ-քաղաքական իրողությամբ թելադրված՝ մեկ միասնական Սահմանադրության, ինչպես նաև Մարդու իրավունքների հռչակագրի ընդունման անհնարինության պայմաններում Իսրայել պետությունը որդեգրեց մարդու իրավունքների դատական ճանաչման ու ամրագրման ուղին: Աստիճանաբար գրեթե բոլոր մարդու իրավունքներն ու հիմնարար ազատություններն իրենց ամրագրման ստացան դատական որոշումներում՝ կազմելով, այսպես կոչված, «իրավունքների դատական հռչակագիրը»: Այս իրավունքները, սակայն, «թույլ» իրավունքներ էին. դրանց ուժով Իսրայելի գերագույն դատարանն իրավասու չէր անվավեր ճանաչելու մարդու իրավունքներին ակնհայտորեն հակասող ստատուտները:

Այս ոլորտում կարևորագույն փոփոխություններն արձանագրվեցին 1990-ական թվականների սկզբներին՝ Իսրայելի խորհրդարանի կողմից 1992թ. մարդու իրավունքների ոլորտում առաջին երկու Հիմնական օրենքների ընդունմամբ և դրանց հիման վրա Իսրայելի գերագույն դատարանի կողմից 1995թ. «Բանկ հա՛Միգրախի հա՛Մեուխադ» գործի շրջանակներում կայացված որոշմամբ: Մասնագիտական գրականության մեջ այս գործընթացները որակվեցին որպես «սահմանադրական հեղափոխություն»: Այսպես, մի կողմից՝ սահմանափակվեց Քնեսետի՝ մարդու իրավունքները սահմանափակելու օրենսդրական իրավազորությունը և, մյուս կողմից՝ երաշխավորվեց դատական վերահսկողության իրականացումը՝ այդ սահմանափակումների պահպանումն ապահովելու նպատակով:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 98 2017



Նշված երկու Հիմնական օրենքների ընդունումից հետո Իսրայել պետությունում այլևս որևէ Հիմնական օրենք չընդունվեց: Ստեղծված պայմաններում Իսրայելի գերագույն դատարանը որդեգրեց Հիմնական օրենքով երաշխավորված արժանապատվության իրավունքը լայն մեկնաբանելու պրակտիկան՝ դրա բաղկացուցիչ մաս համարելով մի շարք սոցիալ-տնտեսական իրավունքներ:

Այդուհանդերձ՝ արևմտյան ժողովրդավարություններում լայնորեն ճանաչված մի շարք իրավունքներ և ազատություններ, մասնավորապես՝ կրոնի և խղճի ազատությունը, օրենքի առջև բոլորի հավասարությունն Իսրայել պետությունում մինչ օրս օրենսդրական ամրագրում չունեն: Հատկանշական է, որ, մեծ հաշվով՝ հենց այս իրավունքների օրենսդրական ամրագրման հարցն էր, որ ի սկզբանե անհնարին դարձրեց Իսրայել պետությունում Սահմանադրության ընդունումը:

**Բանալի բառեր.** Իսրայելի իրավական համակարգ, մարդու իրավունք, հիմնարար ազատություն, հիմնական օրենք, սահմանադրական հեղափոխություն, պաշտպանված իրավունք, սահմանափակող դրոյթ:

**ВАРСЕР КАРАПЕТЯН**

Заместитель руководителя канцелярии общественного защитника Палаты адвокатов Республики Армения, аспирант юридического факультета ЕГУ, магистр института иудаики университета Гейдельберга (Гейдельберг, Германия)

**ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ ПРАВ ЧЕЛОВЕКА В КОНТЕКСТЕ КОНСТИТУЦИОННЫХ РАЗВИТИЙ ИЗРАИЛЯ**

В статье изучается историческое развитие признания, закрепления и защиты прав человека в государстве Израиль в контексте конституционных развитий Израиля.

Продиктованное историческими и социально-политическими реалиями, в ситуации невозможности принятия единой Конституции, также как и Декларации по правам человека, государство Израиль избрало путь судебного признания и закрепления прав человека. Постепенно почти все права и основные свободы человека получили свое закрепление в судебных решениях, образуя так называемую «Судебную декларацию прав». Однако эти права были «слабыми», так как в силу этих законов верховный суд Израиля не мог признать недействительными статуты, заведомо противоречащие правам человека.

В этой области наиважнейшие изменения произошли в начале 1990-ых годов – в 1992-ом году принятием парламентом Израиля двух Основных законов в области прав человека и, основываясь на них, принятием в 1995-ом году Верховным судом Израиля решения в рамках дела «Банк ха-Мирзахи ха-Меухад». В профессиональной литературе этот процесс назван как «конституционная революция». И так, с одной стороны были ограничены законодательные правомочия Кнессета по ограничению прав человека, и с другой стороны – была гарантирована реализация судебного надзора с целью соблюдения обеспечения этих ограничений.

После принятия обозначенных двух Основных законов в государстве Израиль не было принято ни одного Основного закона. В сложившейся ситуации Верховный суд Израиля начал применять практику широкого комментария, гарантированного Основным законом права на достоинство, считая его основной частью ряда социально-экономических прав.

Тем не менее, широко признанный в западных демократиях ряд прав и свобод, в частности, свобода религии и совести, равенство всех перед законом, в Израиле не имеют законодательного закрепления. Примечательно, что, по большому счету, проблема законодательного закрепления именно этих прав сделало невозможным принятие Конституции в государстве Израиль.

**Ключевые слова:** Правовая система Израиля, права человека, основные свободы, основной закон, конституционная революция, защищенное право, ограничивающее положение.

**VARSER KARAPETYAN**

Deputy Head at the Public Defender Office of the Chamber of Advocates,  
 PhD student at the YSU, Law Department  
 MA, University of Heidelberg, Hochschule for Jewish Studies  
 (Heidelberg, Germany)

**ISSUES OF THE LEGAL REGULATION OF HUMAN RIGHTS IN THE CONTEXT OF ISRAELI CONSTITUTIONAL DEVELOPMENTS**

The article studies historical development of recognition, adoption and protection of human rights in the State of Israel in the context of the Israeli constitutional developments.

Due to historical and socio-political reality, facing the inability to enact one codified Constitution, as well as Human Rights Declaration, the State of Israel adopted the way of judicial recognition and adoption of human rights. Step by step almost all the human rights and fundamental freedoms were adopted in court decisions, thus constituting, so called, ‘judicial bill of rights’. These were, however, “weak” rights: the Supreme Court of Israel wasn’t entitled to declare null and void statues obviously contradicting to human rights by virtue of these rights.

The most important developments in this sphere were marked in the beginning of 1990s; the enactment by the Israeli Parliament of two Basic Laws in the field of human rights and the adoption by the Israeli Supreme Court a decision on the ‘Bank ha’Mizrachi ha’Meuchad’ case. In the professional literature, these processes were titled as ‘constitutional revolution’. Thus, on the one hand, the legislative power of the Knesset to curtail human rights was restricted and, on the other hand, judicial review to ensure these limitations was guaranteed.

Since the adoption of these Basic Laws no other Basic Law was adopted in the State of Israel. In these circumstances Israeli Supreme Court adopted the practice of broader interpretation of the right to dignity, guaranteed by the Basic Law, thus interpreting certain social-economic rights as a constituent part of the latter.

Nevertheless, many human rights and fundamental freedoms, widely practiced in western democracies, particularly freedom of religion and conscience and equality before the law, doesn’t have statutory recognition in the State of Israel. Interestingly enough, the issue of the statutory recognition of these human rights, to a huge extent, was the primary reason hindering the adoption of the Constitution in the State of Israel.

**Keywords:** Legal system of Israel, human rights, fundamental freedoms, basic law, constitutional revolution, entrenched right, limitation clause.

\* \* \*

**ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ԱԾ Երևան քաղաքի  
 Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի պետ,  
 ՀՀ պետական կառավարման ակադեմիայի  
 իրավագիտության ամբիոնի հայցորդ

**ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԱՅԱՑՎՈՂ ԱԿՏԵՐԻ (ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ)՝ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հիմնվելով օրենսդրությամբ սահմանված վարչական և կատարողական վարույթներին վերաբերող էական հասկացությունների և դրույթների ուսումնասիրության վրա՝ սույն հոդվածով փորձ է արվել բացահայտել այն առանձնահատկությունները, որոնք բնորոշ են հարկադիր կատարման վարույթի և վարչական վարույթների շրջանակներում կայացվող որոշումներին (կամ ակտերին):

Սույն հոդվածով առաջադրված նպատակների իրագործման համար կարևոր և անհրաժեշտ նշանակություն ունեցող հարցադրումներ են վարչական և կատարողական վարույթներով կայացվող Որոշումների իրավական ուժը, բովանդակությունը, ձևն ու նշանակությունը, գործողության բնույթը և ծավալը՝ ըստ ընդունող մարմինների:

Այսինքն՝ ինչ իրավական ակտեր են ընդունվում կամ կայացվում վարույթների վարման ընթացքում, ինչ ձևի և իրավաչափության, ինչ սահմանների պետք է համապատասխանեն դրանք որպես վարչական ակտեր կամ որպես վարույթների շրջանակում սահմանվող անհատական վարքագծի կանոններ:

**Բանալի բառեր.** Կատարողական վարույթ, վարչական վարույթ, որոշումներ, վարչական ակտեր:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 98 2017

**АРМЕН АРУТЮНЯН**

Соискатель кафедры правоведения  
Академии государственного управления РА,  
Министерство Юстиции РА,  
начальник отдела Кентрон и Норк-Мараш  
города Ереван

**ЗАКОНОДАТЕЛЬСТВОМ ОПРЕДЕЛЕННЫЕ ОСОБЕННОСТИ АКТОВ (ПОСТАНОВЛЕНИЙ),  
ПРИНЯТЫХ В РАМКАХ ИСПОЛНИТЕЛЬНОГО И АДМИНИСТРАТИВНОГО ПРОИЗВОДСТВА**

Основываясь на исследованиях законодательством определенных значимых концепций и положений, относящихся к исполнительному и административному производству, в данной статье предпринимается выявление тех особенностей, которые характерны постановлениям, принимаемым в рамках исполнительного и административного производства.

Для реализации целей, изложенных в данной статье, важными и необходимыми являются вопросы, связанные со значимостью и правовым характером принятых постановлений в процессе исполнительного и административного производства.

А именно, какие правовые акты принимаются или постановляются в процессе производства, какова их форма и закономерность, каким границам должны они соответствовать в качестве административных актов или индивидуальных поведенческих норм/правил, определенных в рамках производства?

**Ключевые слова:** Исполнительное производство, административное производство, решения/ постановления, административные акты.

**ARMEN HARUTYUNYAN**

Compulsory Enforcement Service of the Ministry of Justice of RA,  
Head of Kentron and Norq-Marash department of Erevan city,  
Applicant of Jurisprudence faculty of State Management Academy of RA

**LEGISLATIVE PECULIARITIES OF ADOPTING ACTS/DECISIONS/  
IN ENFORCEMENT AND ADMINISTRATIVE PROCEEDINGS**

Based on the study of essential concepts and provisions of legislation of administrative and enforcement proceedings, this article tries to explore the peculiarities that are typical to adoption of acts/decisions in enforcement and administrative proceedings.

For the implementation of the objectives proposed in this article, the inquiries to the legal form and meaning of acts/decisions taken in enforcement proceedings are very important and necessary. That is, what kind of acts are adopted or taken in enforcement proceedings, what form and legitimately they should correspond, as administrative act or as individual behavior rule set in proceedings.

**Keywords:** Enforcement proceedings, administrative proceedings, acts/decisions, administrative acts.

**ՀՀ ՂԱՏԱՆԱԶՈՒԹՅԱՆ «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԳԵՍՈՒՄ ՏՊԱԳՐՎՈՂ ՀՈՂՎԱԾՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՂԱՀԱՆՑՆԵՐԸ**

Հանդեսում տպագրվող հոդվածները պետք է ունենան գիտագործնական կամ ուսումնամեթոդական բնույթ: Հոդվածը պետք է վերաբերի իրավագիտության ոլորտին, իսկ բացառիկ դեպքերում՝ մեծ հետաքրքրություն վայելող, գիտագործնական մեծ արժեք ներկայացնող ուսումնասիրություններին:

Սույն պահանջներին բավարարող հոդվածները երաշխավորվում են տպագրության համար Հանդեսի գլխավոր խմբագրի կողմից: Իսկ դրանց չբավարարելու դեպքում հոդվածները վերադարձվում են հեղինակին:

Հոդվածը ներկայացվում է թղթային՝ տպագիր, և էլեկտրոնային (Microsoft Word) տարբերակներով: Թղթային տարբերակը պետք է ներկայացնել Հանդեսի խմբագրություն՝ ՀՀ, ք. Երևան, Վ.Սարգսյան 5 հասցեով, իսկ էլեկտրոնային տարբերակն ուղարկել [orinakanutyun@prosecutor.am](mailto:orinakanutyun@prosecutor.am) հասցեով:

Հոդվածը պետք է պարունակի վերնագիր (մինչև 20 բառ) և շարադրվի 8-10 էջի սահմաններում: Հոդվածին կից պետք է նաև երեք լեզվով (հայերեն, ռուսերեն և անգլերեն) ներկայացնել՝

ա) Սեղմագիր (Абстракт, Abstract), բ) Բանալի բառեր (Ключевые слова, Keywords), գ) Հեղինակի մասին հակիրճ տեղեկություն:

Սեղմագիրը 300-500 բառի սահմաններում պետք է պարունակի հոդվածի համառոտ շարադրանքը: Բանալի բառերի քանակը յուրաքանչյուր լեզվով չպետք է հինգից պակաս լինի:

Եթե հոդվածի հեղինակը գիտական աստիճան չունի, ապա հոդվածի հետ պետք է ներկայացնի կարծիք (այսուհետ՝ Կարծիք)՝ տվյալ հոդվածի՝ գիտականորեն հիմնավորված լինելու, գիտական նորույթի, հոդվածում բարձրացված խնդրի ու դրա արդիականության մասին:

Իրավագիտության ոլորտին վերաբերող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ իրավաբանական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը կամ իրավագիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող իրավաբանը: Գիտության այլ ոլորտներին վերաբերող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ այդ գիտության թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը, ինչպես նաև այդ գիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող մասնագետը: Կարծիքը պետք է ստորագրվի տվողի կողմից և/կամ կնքվի իր աշխատավայրի կնիքով:

Հոդվածի հայերեն տեքստը պետք է շարադրել GHEA Grapalat, ռուսերեն տեքստը՝ Baltica Cyrillic, իսկ անգլերեն տեքստը՝ Times New Roman տառատեսակներով: Հոդվածի յուրաքանչյուր էջ պետք է լինի A4 (201x297 մմ) չափի և ունենա լուսանցքներ. ձախից՝ 30 մմ, աջից՝ 10 մմ, վերևից՝ 20 մմ, ներքևից՝ 25 մմ: Հոդվածի հիմնական տեքստը շարադրվում է 12 տառաչափով, միջտողային հեռավորությունը՝ 1,5, իսկ վերնագրերը՝ 14 տառաչափով և մուգ (Bold):

Այն դեպքում, երբ հեղինակն օգտվում է այլ անձանց, գիտնականների աշխատանքներից և այլ աղբյուրներից, այդ մասին պետք է պատշաճ ձևով նշում կատարվի տեքստում, և/կամ հղումը տրվի ծանոթագրության միջոցով՝ յուրաքանչյուր էջում: Ծանոթագրության մեջ պետք է ներառել հետևյալ տվյալները՝ հեղինակ(ներ)ի ազգանուն(ներ)ը, անուն(ներ)ը, նյութի լրիվ անվանումը, հրատարակության տեղը, հրատարակչությունը, քաղաքը, տարեթիվը, հատորը, էջը: Օտարալեզու աղբյուրները չեն թարգմանվում: Ինտերնետային աղբյուրներից օգտվելու դեպքում ծանոթագրության մեջ պետք է նշվեն ինտերնետային հասցեն և հղում կատարելու վերջին ամսաթիվը: Արգելվում է այլ հեղինակների կարծիքը, միտքը, աշխատանքը ներկայացնել իբրև սեփական, օգտագործել ուրիշի գաղափարը, միտքը, վերլուծությունն առանց հղում կատարելու: Արգելվում է նաև այլ աղբյուրից վերցված թարգմանել կամ նախադասությունը ձևափոխել՝ առանց հղում և/կամ ինքնուրույն վերլուծություն կատարելու:

**Հանդեսում տպագրվող հոդվածներն ամբողջությամբ արտահայտում են հեղինակների դիրքորոշումներն ու վերլուծությունները և, հնարավոր է, չհամընկնեն ՀՀ դատախազության դիրքորոշման հետ: ՀՀ դատախազությունը պատասխանատվություն չի կրում հոդվածի հեղինակի արտահայտած կարծիքի համար:**

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 98 2017